



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

№ 88/к  
Часовенски Сърфинг-  
клуб 1906.

891.99  
n-35


# “ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ,,

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

## ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

## ՄԱԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ



Ֆ Ա Խ Ա Մ Պ Ա Տ Ա Յ Ա Վ Ա Ֆ Ֆ Ֆ



ՎԻԵՆՆԱ  
ՄԻՒԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ  
1906.



“ԳԱՂՑՆԻՔ ՊԱՐԱԲԱՂԻ..”

Հեղինակութիւն Ապրեսի Բէկնազարեանց, Թարգմանութիւն Մակար Վարդապետի Բարխուդարեանց։ Տպուած է Առաքել աղա Ճատուրեանցի ծախքով, Ս. Պետերբուրգում, 1886 ամի։

Ա.



Երջապէս լոյս տեսաւ յօդուածիս վերնագիրը կրող գիրքը, որ գեռ չհրատարակուած, այնքան աղմուկբարձրացրեց մեր լրագրութեան մէջ։ Այդ աղմուկը ծագեց առաւելապէս այն մթին, տարօրինակ երեւութից, որի մէջ պարածածկուած, այդ գիրքը պիտի ներկայանար հայ հասարակութեանը։ Այդ էր պատճառը, որ լրագիրներից ոմանք խօսեցին ի նպաստ եւ ոմանք աննպաստ։

Կանխահաս քննադատութիւնը թողեց հարցը անվճիռ։ Իսկ այժմ երկպառակութեան խնձորը դրած է

հասարակաց սեղանի վրայ, նրան կարելի է ամեն կողմից քննել:

“Գաղտնիք Ղարաբաղեն, իրաւ որ, թագյրած ունի իւր մէջ մի մեծ գաղտնիք, բայց այդ գաղտնիքը ոչ թէ Ղարաբաղեն գաղտնիքն է, այլ այդ գրքի՝ իրը թէ թարգմանիչ Մակար վարդապետի՝ գաղտնիքն է։ — Իմ յօդուածի նպատակը կը լինի՝ քննել զլիսաւորապէս վերջին գաղտնիքը։

Աշա ինչ է ասում Մակար վարդապետը իւր յառաջաբանի մէջ։ (Ես քաղում եմ նրա համառօտ բովանդակութիւնը միայն):

1881 թուի մայիսի 5ին Մակար վարդապետը միայնակ նստած է լինում իւր սենեակում, (ծառան բացակայ էր) յանկարծ դուռը բացվում է, ներս է մտնում մի “գրեթէ հարիւր ամեայ” ծերունի, մուրացկանի հագուստով։ Նա փաթաթած թաշկինակների միջից հանում է մի ձեռագիր գիրք, յանձնում է հայր սուրբին, ասելով, որ այդ գրքի մէջ կան “թէ շատ վառ գաւոր գաղտնիքներ եւ թէ Ղարաբաղեն պատմութեան համար անգին գանձերո։ Եւ հասարակութեանը աւելի հասկանալի դարձնելու համար, ծերունին խնդրում է, որ վարդապետը այդ աշխատութիւնը “թարգմանէ”, գրաբարից աշխարհաբարի վերածէ, եւ “երկու տարիու սպասելուց յետոյ, տպագրել տայ։

Ղարդապետի բոլոր ջանքը՝ այդ խորհրդաւոր ծերունու ով լինելու մասին՝ մնում է ապարդիւն, որովհետեւ նա, որպէս յանկարծակի մտնում է հայր սուրբի սենեակը, այնպէս էլ հեռանում է, միայն յայտնելով, թէ “իմ անունը եւ ազգանունը կ'իմանաք ձեռագրից”։ —

Այդ ծպտեալ ծերունին “Գաղտնիքն է հեղինակ Ապրես Բէկնազարեանցն է եղել։ Թէ յետոյ ուր գնաց նա, ինչ եղաւ, որտեղ կորաւ, — այդ մասին լուսում է հայր սուրբը։ Բայց նրա “կ տակը” ճշտութեամբ կատարում է, գիրքը թարգմանում է, իսկ գրաբար բնագիրը, դժբախտաբար, — կորցնում է…»

Այդ դժբախտութիւնը պատահում է 1884 թուին, օգոստոս 30ին։ Կը նշանակէ՝ գիրքը ստանալուց ուղեղ 3 տարի, 3 ամիս եւ 25 օր յետոյ։

Դժբախտութիւնը պատահում է հետեւեալ կերպով։ Վարդապետը, քարքարոտ Շուշիի փողոցների դարուփոններով, “երեկոնքները տեղափոխում է մի այլ բնակարանի իրեղենները տեղափոխում է մի այլ բնակարան։ Շանապարհին, բեռնակրի անզգուշութիւնից, “ծրարի”, միջից գրքի թանկագին բնագիրը ընկնում, կորչում է, իսկ թարգմանութիւնը, բարեբախտաբար, մնում է…»

Եթէ գրքի բնագիրը անհետացած չլինէր, դարձեալ կարելի էր փոքր ի շատէ հաւատալ այդ բոլոր առեղծուածային հանելուկներին։ Բայց բնագրի կորուստը, ինքն ըստ ինքեան, առաջ է բերում ամեն մի ուշագիր ընթերցողի մաքում մի խոշոր կասկած։ արդեօք այդ գիրքը չը գրել ինքը՝ Մակար վարդապետը, արդեօք այդ բոլորը չը հնարել նա՝ իւր աշխատութիւնը աւելի հետաքրքրական դարձնելու համար։

Փաստերը աւելի կասկածանքի կողմն են թեքվում։

Արդարեւ, եթէ “Գաղտնիք Ղարաբաղեն լինէր մի հին, հարազատ գրուածք, նա այդ երկրի պատմութեան համար կարող էր մի հարստութիւն համարուել։ Բայց նոր գրուածքը, այն եւս սպատմագրութեան մէջ, հին արձանագրութեան անունով տալ հասարակութեանը, —

դա նոյնն է, որպէս մէկը կեղծ թղթադրամներ, կամ կեղծ վկայականներ է խարդախում:

Ի՞նչ իրաւունքով Մակար վարդապետը թարգմանեց իրան յանձնուած գիրքը: Եթէ այդ աշխատութիւնը ունէր մի անձանի նշանակութիւն, նա կարող էր ունենալ միայն իւր հին ձեւի մէջ, իւր հին լեզուով: Բաւական չէ, որ Մակար վարդապետը իւր յառաջաբանի մէջ ասում է, իբր թէ յանձնող ծերունին խնդրեց թարգմանել գիրքը...:

Ի՞նչ կ'ասէին մեղանից ամեն մէկին, որ կամենալով հարստահարել յսորենացու անունը, գրէինք մի գիրք, լի առասպելներով, եւ տսէինք. գա յսորենացու պատմութեան երկրորդ հատորն է: — Ուր է բնագիրը, կը հարցնէին մեղանից: Բնագիրը կորցրինք, միայն աշխարհաբար թարգմանութիւնը մնաց մեր ձեռքում... Ովկ կը հաւատար մեզ:

Մակար վարդապետի վարմունքը շատ չէ զանազան վում այդ օրինակից:

1881 թուին ես ճանապարհորդում էի Ղարաբաղում՝ տեղային մելքների պատմութեան համար նիւթեր հաւաքելու: Սեպտեմբեր ամսի 10ին գնացի Շուշի, իջեւանեցի առաջնորդանում, թեմի յաջորդ արժ. Կարապետ վարդապետ (այժմ եպիսկոպոս) Այլվագեանի մօտ: Իմ ճանապարհորդութեան նպատակը իմ բոլոր ծանօթներին յայտնի լինելով, իւրաքանչիւրը աշխատում էր օգնել ինձ: Մէկը բերանացի աւանդութիւններ էր հաղորդում, միւսը բերում էր մի որ եւ է ձեռագիր, որ պատմական նշանակութիւն ունէր: Այնպէս որ, Շուշիում ինձ յաջողուեցաւ հաւաքել բաւական պաշար:

Ես մնացի այդ քաղաքում ամբողջ երկու շաբաթ: Այդ ժամանակ Մակար վարդապետը համարեա ամեն օր

իմ մօտ էր լինում: Երբեմն կարապետ հայր սուրբի եւ իմ հետ ճաշում էր, երբեմն մեզ մօտ թէյ էր խմում: Մեր խօսակցութեան առարկան ըստ մեծի մասին Ղարաբաղի մելքները եւ նրանց գործերն էին: Ինքը Մակար վարդապետը աշխատում էր ինձ նիւթեր մատակարարել, երբեմն ամբողջ օրով այս կողմ եւ այն կողմ էր գնում՝ նիւթեր որոնելու:

Այդ ժամանակ սաղանիք Ղարաբաղի բնագիրը պէտք է Մակար վարդապետի մօտ լինէր, որովհետեւ, որպէս ինքը յայտնում է իւր յառաջաբանի մէջ, այդ գիրքը նա ստացել էր յսորհրդաւոր ծերունուց 1881 թուի մայիսի 5ին, իսկ ես գտնվում էի Շուշիում 1881 թուի սեպտեմբերի 10ին: Ուրեմն իմ այնտեղ լինելուց 4 ամիս 5 օր առաջ ստացած պէտք է լինէր այդ գիրքը:

Ի՞նչու Մակար վարդապետը, որ ամեն ջանք գործ էր գնում ինձ նիւթեր մատակարարելու, բայց իւր մօտ գտնուած մի ամենահետաքրքիր հնութիւն, ինչպէս էր սաղանիք Ղարաբաղի բնագիրը, ցոյց չտուեց ոչ ինձ եւ ոչ Կարապետ հայր սուրբին:

Շատ հասկանալի է, եթէ մի այսպիսի հնութիւն գոյութիւն ունենար, նա չէր թաքցնի ինձանից, — չէր թաքցնի եւ այն պարոններից, որ այդ ժամանակ Շուշիումն էին, եւ որոնք հետաքրքրուած էին Ղարաբաղի պատմութիւնով: Այն ժամանակ Շուշիումն էին պ. պ. Ղազարոս Աղայեանցը, Տիգրան Նազարեանցը (Աղքիւրի, խմբագիր) եւ մի ամբողջ վարժապետական խումբ, որի մէջ էր Մակար վարդապետը, եւ խիստ յաճախ հանդիպում էինք միմեանց:

Մակար վարդապետ կարող է ասել. ես այն ժամանակ թագցրի, որպէս զի ինքս օգուտ քաղէի: — Դար-

ձեալ կարող էր օգուտ քաղել, ով ուժով կը խլեր նրա ձեռքից:

Այդ, ինքն ըստ ինքեան, խիստ ծանր կասկած է ձգում զբքի գոյութեան վրայ, որ Մակար վարդապետը այդ աշխատութիւնը խորհրդաւոր ծերունից ստանալուց, մինչեւ նրա բնագրի կորցնելը, Յ տարի, Յ ամիս եւ 25 օր պահում է իւր մօտ, եւ իւր բարեկամներից ու ծանօթներից ոչ մեկին ցցց չէ տալիս, որ գոնէ վկայ լինեին, թէ մի այդպիսի ձեռագիր տեսել են նրա մօտ:

Տարակցս չկայ, երբ մի մարդ մի այդպիսի երեւելի գիւտ է անում, եւ նրան յաջողվում է ձեռք բերել մի երկհատոր հին աշխատութիւն, որ բովանդակում է իւր մէջ մի երկրի պատմական գաղտնիքները, — նա ոչ միայն կը թագցնէ այդ աշխատութիւնը (որ յետոյ կորցնէ), այլ կը հրատարակէ լրագիրներում ի գիտութիւն հասարակութեան: Մակար վարդապետը այդ եւս չի արել, ամեն ինչ ծածկել է մթութեան մէջ:

Իսկ Մակար վարդապետը պարտաւոր էր հրապարակ հանել իւր երեւելի գիւտը: Եթէ ճշմարիտ են նրա այն խօսքերը, որ նա ասում է իւր յառաջարանի մէջ, թէ խորհրդաւոր ծերունին, յանձնելով նրան այդ գիրքը, «կ տ ա կ ե ց» տպագրել տալ, — ուրեմն, նրա կտակը ճշտութեամբ կատարելու համար, նա հրապարակաւ պէտք է գիմել հասարակութեանը եւ օժանդակութիւն խնդրէր, որովհետեւ ինքը աղքատ մարդ էր: Եւ ես համոզուած եմ, որ թիֆլիզի տպագրական ընկերութիւնը, կամ ամեն մի կարողութիւն ունեցող հայ՝ չէր ինայի մի այդպիսի նշանաւոր հնութեան տպագրութեան ծախքը իւր գրպանից վճարել, մանաւանդ որ, պատմական աշխատութիւնների

համար հանգուցեալ հզմիրեանցի թողած գումարից պրեմիաներ կան նշանակուած:

Ուրեմն ի՞նչով բացատրել Մակար վարդապետի Յ տարի, Յ ամիս եւ 25 օրուայ լութիւնը:

Ես այս եւս կը վերաբերէի հայր սուրբի վերին աստիճանի ծածկամուռութեանը, եթէ նա զրան-նրան նամակներով դիմած չինէր, որ տպագրեն իւր աշխատութիւնը, — կրկնում եմ, Յ ւր աշխատութիւնը եւ ոչ թէ երեւակայական Ապրես Բեկնազարեանցի:

Մի այդպիսի նամակ Մակար վարդապետը գրել է եւ ինձ, որով խնդրում էր, որ ես նրա աշխատութիւնը «Մշակ» մէջ տպել տամ:

Այդ նամակները կը պատառեն «Գաղտնիք» վարագրը եւ Մակար վարդապետի վարմունքը կը մերկացնեն հասարակութեան առջեւ<sup>1</sup>:

Ինչպէս երեւում է, Մակար վարդապետը սկզբում նպատակ չէ ունեցել այնպիսի վարմունք թոյլ տալ իրան, որի օրինակ մինչեւ այսօր ամենեւին չէ տեսնուել մեր գրականութեան մէջ: Նրան կամ խելքից հանել են ուրիշները, կամ մոլորութեան մէջ է ճգել իւր շահասիրութիւնը: Թէ այսպէս, թէ այնպէս, — յանցանքը կատարուած է: Նա այժմ մի դատապարտեալ է գրական գննադատութեան ատեանի առջեւ:

<sup>1</sup> Որովհետեւ գրանով պէտք է մերկանական մի մեծ խարգախութիւն, որ եթէ անլուծելի մնայ, կարող է ապագայում գայթակղութեան մի քար գառնալ մեր պատմագրութեան մէջ, — այդ ի նկատի ունենալով, ես վստահանում եմ հրապարակաւ պարտք դնել այն բոլոր պատմների վրայ, որոնք Մակար վարդապետից նամակներ են ստացել, ամբողջապէս հրատարակեն, իսկ եթէ նամակները չեն պահել, գոնէ հրատարակեն նրանց բովանդակութիւնը: Իսկ ես իւր ժամանակին կը հրատարակեմ իմ ձեռքում եղածները:

Ես իմ յօդուածի շալունակութեան մէջ ցոյց կը տամ, թէ նա ինչպէս է կազմել «Գաղտնիք Ղարաբաղին»: Այդ գիրքը գրելուց յետոյ, հեղինակի փառասիրութիւնը դրդել է նրան տպագրուած աեսնել իւր աշխատութիւնը: Դիմել է զանազան անձանց եւ ոչ մի տեղից օժանդակութիւն չի գտել: Յետոյ մտածել է՝ իւր անունը մի կողմ գնելով, իւր աշխատութիւնը պսակել մի երեւակայական հեղինակի անունով, իրրեւ մի զրուածք, որ մի քանի հարիւր տարուայ հնութիւն ունի, եւ բովանդակում է իւր մէջ «ամենավառ գաւռ ու որ գաւռ ամենի եր» եւ «ամենավառ ու որ պատմական գանձեր», եւայն: — Այդ հրապոյըներով մտածել է նա, մի բարեսիրտ մարդ գտնել, որ տպագրութեան ծախքը հոգայ, բացի գրանից, գիրքը հետաքրքրական դարձնել, որ լաւ ծախուի:

Բարեսիրտ մարդը գտնուեցաւ — բագուի Մեծ. Առաքել աղա ծառուրեանցը, որ իրան յատուկ առատաձեռնութեամբ 800 լուրջ նուիրեց գրքի հրատարակութեան համար:

Կրկնում եմ, վերջին միտքը Մակար վարդապետի մէջ ծագել է շատ ուշ: Այդ երեւում է այն հանգամանքից, որ երբ հայր սուրբը իւր մէջ վճռել է՝ իւր աշխատութիւնը մի աւելի հրապուրիչ հեղինակի անունով ներկայացնել, այդ միջոցին ստիպուած է եղել փոխել իւր առաջին յառաջարանը եւ գրել այն նոր յառաջարանը, որ այժմ գրած է «Գաղտնիք»ի սկզբում, եւ որի մէջ նկարագրուած է խորհրդաւոր ծերունու ամբողջ առասպելը: Յառաջարանի փոխելու մասին, իւր ծանօթութեան մէջ, այդպէս է արդարացնում իրան հայր սուրբը. «Մենք մեր նախկին յառաջարանութիւնը չենք փոխել,

եթէ կորուսուած չլինէր «Գաղտնիք Ղարաբաղի» բնագիրն: Բնագրի կորսարից ցաւօք սրտի ստիպեալ փոխեցինք մեր նախկին յառաջարանութիւնը»:

Մի այլ հետաքրքրական փաստ:

Հայր սուրբը «Գաղտնիք Ղարաբաղի» բնագիրը, որպէս ինքն ասում է, կորցրել է 1884 թուի Օգոստոս 30ին: Իսկ այս գիրքը ցենզորից թոյլտուութիւն է ստացել 1885 թուի գեկտեմբերի 31ին: Ուրեմն մինչեւ ցենզորից թոյլտուութիւն ստանալը, արդէն 16 ամիս առաջ բնագիրը կորած էր: Այլ եւս ինչ հարկ կար, որ նա ստիպուած լինէր՝ բնագիրը կորցնելու պատճառով յառաջարանը փոխել: Եթէ բնագրի կորուսաը պատահած լինէր ցենզորից թոյլտուութիւն ստանալուց յետոյ, այդ թերեւս հասկանալի է, կարելի է ընդունել, որ յառաջարանը փոխեց, որպէս զի բնագրի կորսարեան մասին բացատրութիւններ տայ:

Ծիշեալ երկու՝ միմեանց հակառակ յառաջարանները շատ բան պիտի պարզեն, եւ այդ շատ հեշտ է ստուգել: Տպագրական օրէնքով, թէ առաջին եւ թէ վերջին յառաջարանի օրինակները պէտք է մնացած լինեն Ս. Պետերբուրգի ի. ն. Սկզբոյս օգոստի տպարանում, որտեղ տպուել է «Գաղտնիք Ղարաբաղի»ն: Եւ ես կ'աշխատեմ նրանց պատճէնները ձեռք բերել<sup>1</sup>:

1 Մակար վարդապետը մի օրինակ եւս իւր աշխատութեան ուղարկած է եղել Մոսկուա հանգուցեալ Յակոբ քահանայ Սուրբնեանցին՝ իւր հրատարակելիք «Նոր - Հանգեստի մէջ տպելու համար: Այդ ամսագրի նախապատրաստական ժողովներում, արժանապատի հօր տանը, կարդացվում էր եւ Մակար վարդապետի աշխատութիւնը: Մի քանի ուսանողներ, որ ներկայ են եղել այդ ժողովներին, ինձ պատմեցին Մակար վարդապետի առաջին յառաջարանի բովանդակութիւնը. պատմեցին եւ այն, որ այդ առաջատութիւնը առաջ այդպէս էր մի քանի փոքրիկ տետրակներից միայն: Այդպէս էլ պէտք է լինէր,

Եթէ “Գաղտնիք Ղարաբաղին լինէր մի վէպ կամ այլ աշխատութիւն, չարժէր նրա վրայ ու շադրութիւն անգամ գարձնել։ Նա այն աստիճան անշնորհք կերպով կազմուած է, որ ինքնիրան կը մեռնէր։ Բայց այդ գիրքը մի պատմական յիշատակարան է։ Պատմագրից, այն եւս հին պատմագրից, այնքան գրական մեծ արժանաւորութիւններ չեն պահանջվում, որքան փաստերի ճշտութիւն։ Իսկ կեղծ փաստերը միշտ կարող են մոլորեցնել։ Այդ ի նկատի առներով, եթէ այժմեանից չմերկացուի “Գաղտնիք Ղարաբաղին խարդախութիւնը, կ’անցնեն տարիներ, գործը կը մռացուի, եւ այդ գիրքը կը մնայ մեր գրականութեան մէջ որպէս մի անհարազատ վկայական, որ շատերին կը գայթաղեցնէ։

## Բ.

Իմ նկատողութիւնները կարող են ոմանք լոկ ենթագրութիւններ համարել, եթէ չփիմենք նոյն իսկ “Գաղտնիքին քններով” նրան, արդեօք այդ գիրքը կրո՞ւմ է իւր վրայ հնութեան դրոշմ, ցոյց է տալիս մի նշյլ անգամ հին գրուածքի, — թէ նո մի նոր աշխատութիւն է, միայն հին անուան տակ ծածկուած, որպէս գրամանենքը իւր նոր շնուած գրամը անթիքայի անունով է վաճառում, որպէս զե աւելի շահ ստանայ։

Իմ հետազոտութեան մէջ ես պէտք է շօշափեմ գլխաւորապէս հետեւեալ կէտերը։

1: “Գաղտնիք, ի հեղինակները — հայր եւ որդի թէկնազարեանները — իրական անձնաւորութիւններ են թէ մտացածին։

որովհետեւ, որպէս ես պիտի ցոյց տամ, Մակար վարդապէտը, յետոյ է ստուարացրել այդ գիրքը եւ նրան երկու հատոր գարձրել։ (Սեծ. դպ. Սուրէն Սուրէնեանցի ու շադրութիւնն եմ գարձնում այս եւ նախընթաց ժամանութեան վրայ։)

2. “Գաղտնիք, ի հիւսուածքը, լեզուն, գաղտափարները, նկրառումները արտայայտում են արդեօք իրանց ժամանակի յատկանիշները։

3. Ի՞նչ աղբեւրներից է կազմուել այդ գիրքը։ Կարելի՞ է վաւերական համարել այն անթիւ թղթակցութիւնները, որ գետեղուած են այդ գրքի մէջ։ Արդեօք “Գաղտնիքը տալիս է մեզ իւր խոստացած “ամենավտանգաւոր գաղտնիքները”, եւ այն պատմական “անգին գանձերը”, որ մինչեւ այսօր յայտնի չեն եղել մեր գրականութեան մէջ։

4. Պատմական սխալներ, որ չեն պիտի անէր ժամանակակից գրողը։ “Գաղտնիք, ի գործող անձինքը։

5. Հրէշաւոր չափանցութիւններ, որ զուրկ են պատմական ճշմարտութիւնից։

6. Ի՞նչ անստուգութիւններ կարող են առաջ գալ պատմութեան մէջ, եթէ ընդունուի այդ գիրքը իրբեւ մի հարազատ գրուածք։

7. Մի քանի խօսք այն անձանց նկատմամբ, որոնք ոչ միայն ներելի են համարում Մակար վարդապէտի վարմունքը, որպէս մինչեւ անգամ ջատագովում են։

Սկսենք “Գաղտնիք, ի հեղինակներից։

Դրանք երկու հոգի են. հայրը՝ Արքահամ թէկնազարեանցը եւ որդին՝ Ապրես թէկնազարեանցը։

Թէ հայրը եւ թէ որդին, որ ամեն չնշին անցքերի մասին թուականներ են դնում, բայց իրանց ծննդեան թուականը չեն նշանակում, որպէս զե յայտնի լինէր, թէ որ դարուն էին ապրում այդ մի զյուգ մատենագիրները եւ որպան ապրեցին, որ ամեն ինչ գրում են իրբեւ ականատեսներ, իրբեւ ժամանակակիցներ, եւ մանաւանդ, համարեա բոլոր անցքերի մէջ՝ իրբեւ անմիջական գործիշներ։

թէեւ այդ տարօրինակ հեղինակների ծննդեան թուականները մնում են որպէս գաղտնիք “Գաղտնիք” մէջ, բայց անգիտակցաբար բաց են թողուած զրքի մէջ այնպիսի յիշատակութիւններ, որոնցով շատ հեշտ է գտնել՝ նրանց ծննդեան եթէ ոչ ճիշտ թուականները գոնէ աւելի հաւանականը: “Գաղտնիք” հէնց առաջին դիմի սկզբում (եր. 17) որդի Բէկնազարեանցը իւր հօր մասին ասում է.

“Հայրս — Բէկնազարեանց Աբրահամն — Ներսէս կաթողիկոսին մօտ իւր ուսմունքը աւարտած, նորա մօտ եր կար ժամանակ մնացած եւ Ղարաբաղի հոգեւոր եւ մարմնաւոր կեանիքի վերաբերեալ պատմութիւններ ընդօրինակած էր: Այս այն Ներսէսն է, որ նախ Երիցմանկանց վանքի կաթողիկոսն էր եւ յետոյ եղած էր Գանձասարի կաթողիկոսն: Գանձասարն Աղուանից մայր աթոռն էր, իսկ Երիցմանկանց վանքը սորա հակաթոռն»:

Այդ իւր տեղումը ես ցոյց կը տամ, որ յիշեալ Ներսէսը երբէք Ղարաբաղի պատմութիւն չէ զրել, որ նրա աշակերտ Աբրահամ Բէկնազարեանցը ընդօրինակած լինէր իւր “Գաղտնիք” կազմելու համար, — այլ, ընդհակառակն, Ղարաբաղի պատմութիւնը զրել է եւ մեզ թողել է Գանձասարի Ջալալեան Նսայի կաթողիկոսը, որի հակառակորդն էր Ներսէսը: — Այժմ մեզ համար հետաքրքիր է զիտենալ այսքանը միայն, թէ որ թուականներումն էր ապրում այդ Ներսէսը, որպէս զի նրա համեմատ՝ գտնենք նրա աշակերտ Աբրահամ Բէկնազարեանցի ծննդեան տարեթիւր:

Ներսէս Երիցմանկանց վանքում<sup>1</sup> հակաթոռ կաթողիկոս ձեռնադրուեցաւ, ընդդէմ Գանձասարի Ջալալեան

<sup>1</sup> Երիցմանկանց վանքը գտնվում է Թարթար գետի ձախ կողմում, մի անտառապատ ձորի մէջ, հինգ թէ վեց վերստաչափ հեռաւորութեան

Նսայի կաթողիկոսի եւ նրա կենդանութեան ժամանակ, հայոց 1155 թուին, իսկ փրկչական 1705ին<sup>1</sup>:

Ով որ գիտէ այդ Ներսէսի պատմութիւնը, թէ որքան զբաղուած էր նա իւր անընդհատ կոիւներով, մի կողմից՝ Գանձասարի Ջալալեան Նսայի կաթողիկոսի հետ, որի ներհակ հակաթոռ կաթողիկոս էր գարձել, միւս կողմից՝ Էջմիածնի Աղէքսանդր կաթողիկոսի եւ նրա յաջորդների հետ, մինչեւ Սիմօն կաթողիկոսը, որոնցից բանագրուեցաւ նա իրեւ ըմբոստ եւ ապստամբ<sup>2</sup>, — կրկնում եմ, ով որ գիտէ այդ Ներսէսի պատմութիւնը, որ բացի յիշեալ կոիւներից, նա զբաղուած էր եւ զանազան քաղաքական հարցերով, — ով որ գիտէ այդ բոլորը, կարող է համոզուած լինել, որ նա իւր կաթողիկոսութեան օրերում մի բոսէ անգամ ժամանակ չէր ունենայ պարապուելու Աբրահամ Բէկնազարեանցի կրթութեամբ:

Վրաց Զրաբերդ ամրոցից: Իսկ Գանձասարի վանքը, որ Աղուանից կաթողիկոսների աթոռատեղին է, գտնվում է Ղարաբաղի Խաչէն գաւառակում, Խաչէն գետի ձախ կողմում, մի լեռան վրայ:

<sup>1</sup> Այդ Ներսէսը՝ նոյնպէս հակաթոռ՝ Ալիսոն կաթողիկոսի ազգականն էր, որը հիմնեց Երիցմանկանց վանքը, եւ նրա տոհմից մի քանի հակաթոռ կաթողիկոսներ նստեցին յիշեալ վանքում, որոնք ոչ սակաւ խռովութիւններ յարուցին իրանց ժամանակում եւ Ղարաբաղի կործանման պատճառ գարձան: Ներսէսի գործերի հետ ծանօթանալու համար խորհուրդ ենք տալիս կարդալ հետեւեալ աշխատութիւնները. “Խամայի Մելիքութիւնները”, եր. 27, 34, 39, 40, 87, 89, 91: “Զամբռոն”, եր. 81—86. Ներսէս կաթողիկոսի անունը գտնում ենք եւ Եկատերինա Ա. կայսրուհու 1726 թ. 22 փետրուարի հրովարտակի մէջ. ի թիւս Եսայի կաթողիկոսի, Եգան իշխանի (Տիղակի մելիք Եգանի) եւ Աւան իւղբաշու անունների, որոնք այդ ժամանակ քաղաքական յարաբերութիւններ ունեին ուռւսաց արքունիքի հետ:

<sup>2</sup> Աղուանից կաթողիկոսները, թէ Գանձասարում եւ թէ այլ տեղերում, որ յետոյ յայտնուեցան, ամենքը կախումն ունեին Էջմիածնից, այն աւանդական սովորութեան համեմատ, որ այդ երկրի առաջին կաթողիկոսը՝ գրիգորիսը Լուսաւորչ թոռն էր: Առանց Էջմիածնի, իրեւ Մայր աթոռի, թողլուութեան ձեռնադրուողները համարվում էին ապստամբ:

Բացի գրանցից, իբրեւ կաթողիկոս, նրա բարձր աստիճանը չէր ների՝ մի որ եւ իցէ խնածախից հասարակ շինականի՝ Աբրահամ Բէկնազարեանցի՝ վարժապետութեամբ պարապուել:

Եթէ ընդունենք, որ Աբրահամ Բէկնազարեանցը, ինչպէս վերեւում յիշուած է, այդ Ներսէսի մօտ աշակերտութիւն է արել, ուսումը աւարտել է, եւ նրա մօտ «Երկար ժամանակ», մնացել է, — այդ կարող էր լինել Ներսէսի թէ կաթողիկոսութիւնից եւ թէ եպիսկոպոսութիւնից առաջ, այսինքն նրա արեղայութեան ժամանակ:

Իսկ եթէ ընդունենք եւ այն, որ Աբրահամ Բէկնազարեանցը, Ներսէսի մօտ ուսումը աւարտելուց յետոյ, այնքան զարգացած էր, որ պատմութիւններ էր ընդօրինակում իւր «Գաղտնիք» կազմելու համար, — այդ ժամանակ նա, անպատճառ, պէտք է գոնէ 30 տարեկան լինէր: Ուրեմն, նա պէտք է ծնուած լինէր 1675 թուին, այսինքն իւր վարժապետի կաթողիկոս ձեռնադրուելուց 30 տարի առաջ: Այդ 30 տարին ես այդպէս եմ բաժանում: մի որ եւ է վանք մտնելու համար՝ վանական կանոններով՝ պատանու երեսի մազերը պէտք է դուրս եկած լինեն. Եթէ Աբրահամ Բէկնազարեանցը 18 կամ 20 տարեկան էր, երբ մտաւ Երիցմանկանց վանքը, մի 10 կամ 12 տարի էր հարկաւոր, որ նա այնքան ուսում առներ, զարգանար, որ պատմութիւն գրէր, մանաւանդ այն ժամանակ, որ մարդիկ իրանց ամբողջ կեանքը նուիրում էին ուսման եւ ոչինչ չեին սովորում:

Այժմ Աբրահամ Բէկնազարեանցի ծննդեան թուականը մեր ձեռքում ունենք: Նա ծնուել է 1675 թուին: Որոնենք, թէ որ թուին մեռաւ նա:

Հօր գրած պատմութիւնը շարունակող որդին — Ապրես Բէկնազարեանցը — որ թուականների սիրահարէ, իւր հօր մահուան տարեթիւը չէ դնում «Գաղտնիք» մէջ, այլ դնում է միայն ամսաթիւը՝ հոկտեմբերի 10ին (եր. 390): Այդ եւս մի գաղտնիք է...:

Բայց նա մոռանում է, որ իւր հայրը 1828 ամի, սեպտեմբերի 20ին հիւանդութեան անկողնում, ստանում է մի նամակ Ղարաբաղի Բաղդասար միտրապօլիսից եւ պատուիլում է որդուն պատասխանը գրել (եր. 387): Եթէ նոյն տարուայ մէջ մեռած լինի նա, ուրեմն ապրել է ամբողջ 153 տարի (1675—1828):

Ի՞նչու է տուել Մակար վարդապետը իւր երեւակայական պատմագրին այդքան երկար կեանք, — այդ շատ հետաքրքիր է գիտենալ: Որովհետեւ եթէ Աբրահամ Բէկնազարեանցը 153 տարի չափեր, չէր կարող ականատես լինել այն բոլոր անցքերին, որ գրել է «Գաղտնիք» մէջ: Այդ 153 տարուայ շրջանակի մէջ ամփոփում է Ղարաբաղի մելիքների ամբողջ պատմութիւնը, սկսեալ Պետրոս մեծի օլերից, մինչեւ 1828 թուի վերջին ոռուապարսկական պատերազմը, երբ Ղարաբաղի մելիքները դադարում են ոռուաց արշաւանքներին մասնակցել եւ երբ Աբրահամ Բէկնազարեանցը հարկաւոր չէ համարում աւելի ապրել — մեռնում է... եւ պատմութիւնը գոցվում է...:

Ոչ սակաւ հետաքրքիր է որդու՝ Ապրես Բէկնազարեանցի կեանքի երկարութիւնը: Մակար վարդապետը պարգեւել է նրան այնքան տարիներ, որ հասցրել է մինչեւ իւր ժամանակը, 1881 թուականը, որպէս զի նա միջոց ունենար «Գաղտնիք» իւր ձեռքով յանձնել հայր սուրբին: Այդ թուականից յետոյ անհետացրել է խեղճին...:

Որդի Բէկնազարեանցի ծննդեան տարեթիւը գտնելու համար՝ դարձեալ պէտք է այլ փաստերի դիմել, որու յիշատակութիւն չկայ գրքի մէջ։

1795 թուին տեսնում ենք նրան, իւր ուսումնականց գիւղե քահանայի մօտ աւարտած, Եղիշէն եւ քերականութիւնը սովորած, մի աշխոյժ եւ անվախ պատանի, գտնվում է իւր հօր քաջերի թուում որ կռւում էին Աղա-Մամադ խանի զօրքերի հետ, երբ նա պաշարել էր Շուշի բերդը (եր. 16—37): Եթէ նա այդ ժամանակ 20 տարեկան լինէր, ուրեմն ծնուել է 1775 թուին։ Մինչեւ 1881 թիւը այդ մարդը դեռ կենդանի էր (գուցէ այժմ եւս կենդանի է): Այդ թուականում յայտնուեցաւ նա Մակար վարդապետի մօտ եւ իւր ձեռքով յանձնեց նրան «Գաղտնիք»: Ուրեմն ապրել է նա 106 տարի։ Դարձեալ մի պատկառելի հասակ։ Այդ հասակում, 15.000 ոսկի իւր հագուստի ծալքերի մէջ կարած եւ «Գաղտնիք» նրանց թուում իւր ցնցոտիների մէջ թագցրած, մուրացկանի կերպարան։ Քով, ցուպը ձեռին, ոտով, 39 տարի ճանապարհորդել է։

<sup>1</sup> Իւր ճանապարհորդական նկարագրութիւնների մէջ, մի տեղում (եր. 395) Ապրես Բէկնազարեանցը ասում է. «Պէտք չէ մոռանալ, որ շատ վանքերում, քաղաքներում եւ գիւղերում զիս Սարի գեղացի Խաչառու գովազնելով՝ ցուրտ կերպով էին ընդունում եւ հիւրընկալում»... Զարմանալի նմանութիւն կայ «Գաղտնիք» հերոսների եւ «Խաչագողի Յիշարան»ի տիպերի մէջ։ Իմ յօդուածի շարունակութեան մէջ ես առիթ կ'ունենամ այդ նմանութիւնը ցոյց տալու։ Դա, ինքն ըստ ինքեան, մի պարզ ապացոյց է «Գաղտնիք» շինծու եւ մտացածին լինելուն։ Ոչ Աքրահամ Բէկնազարեանցը եւ ոչ դրա որդի Ապրես Բէկնազարեանցը չէին կարող կարդացած լինել «Խաչագողի Յիշատակարան»։ որ հետեւէին նրան։ Այդ Մակար վարդապետը միայն կարող էր կարդալ եւ, նրանից օգուտ քաղելով, պատմական անձնաւոր ութիւնների փոխարէն, զանազան իսպերայ եւ խարդախ քաւոր Պետրոսներ ատեղծել։ 15.000 ոսկի իւր հետ ունենաւ լուց յետոյ, ինչ հարկ կար մուրացկանի կերպարանքի մէջ մտնել։ Այդ խաչագողներն են միայն անում։ 15.000 ոսկիով կարելի էր փառաւոր կերպով ճանապարհորդութիւններ անել։

ամբողջ տաճկական հայաստանը, անցել է Պարսկաստանը, մինչեւ եկել է Ղարաբաղ եւ Մակար վարդապետին գտել է, խորհրդաւոր գիրքը նրան յանձնելու համար։ Զարմանալի է, որ ոչ մի թուրք կամ քուրդ նրան չի հանդիպել, եթէ «Գաղտնիք» ըյափակէին ոսկիներին, կարծեմ՝ չէին ինայի (եր. 394—398):

Այժմ «Գաղտնիք»ի երկու հեղինակների՝ հօր եւ որդու՝ կեանքի տարիները մեր ձեռքում ունիք։

Հայրը ապրել է 153 տարի։

Որդին 106 տարի։

Երկուսը միասին՝ 259 տարի։ Ուղիղ երկու եւ կէս դարից ինն տարի աւել։ Լաւ է հաշուել Մակար վարդապետը։ Եթէ յիշեալ թուանշանները երեւակայական չլինէին, կարելի էր ընդունել, որ հայր եւ որդի Բէկնազարեանները հայոց մելիքների բոլոր գործողութիւններին վկայ, ականատես եւ ժամանակակից են եղել, եւ ամեն ինչ տեսնելով են գրել, եւ այսպէսով կազմուել է այն հրաշալի գիրքը, որ բովանդակում է իւր մէջ հայոց պատմութեան համար «Թանկագին գանձեր» եւ այլն։ Պէտք չէ մոռանալ եւ այն, որ այդ մի զցոյդ պատմագիրները ոչ միայն ականատես են եղել անցքերին, այլ իրանք անմիջական եւ գլխաւոր գերն են կատարել բոլոր գործողութիւնների մէջ։ Մասնակցել են մելիքների պատերազմներին, մասնակցել են նրանց գաղտնի յարաբերութիւններին եւ զեսպանախօսութիւններին օտար պետութիւնների հետ, մի խօսքով, ոչինչ չէ կատարուել առանց նրանց մասնակցութեան եւ գիտութեան։

Թողնենք այդ հրէշաւոր երկու եւ կէս դարերը, որ մի պարզ ապացոյց են «Գաղտնիք»ի հեղինակների երեւակայութեան ծնունդ լինելուն, — եւ ընդունենք թէ,

իրաւ, եղել են մի զցոյ հայր եւ որդի, որոնք 259 տարի ապրել են, ամեն ինչ տեսել են, եւ յիշեալ գիրքը գրել են: Այժմ գիմենք նոյն իսկ “Գաղտնիք” ին, արդեօք կարող էր այդ գիրքը 1881 թուին հասած լինել Մակար վարդապետի ձեռքը:

“Գաղտնիք” կազմելու ժամանակ, ինչպէս երեւում է, Մակար վարդապետը իւր միտքը բաւական յոգնեցրել է, որքան կարելի է, ծածկել իւր վարմունքը, — բայց նրա անզգուշութիւնը նրանումն է եղել, որ, որտեղ հարկաւոր էր ժուականներ եւ թուանշաններ դնել, նա չէ դրել, իսկ որտեղ հարկաւոր չէր, նա առատութեամբ դրել է, առանց մտածելու, որ այդ ժուականները եւ թուանշանները կարող էին մատնել իրան:

Իւր յառաջարանի մէջ Մակար վարդապետը ասում է, 1881 թուին մայիսի 5ին Ապրես Բէկնազարեանցը մուրացկանի կերպարանքով յայտնուեցաւ նրա մօտ եւ “Գաղտնիք” յանձնեց նրան: Տեսնենք, Ապրես Բէկնազարեանցը կարող էր յիշեալ թուին Մակար վարդապետին տեսած լինել:

Ապրես Բէկնազարեանցը “Գաղտնիք” վերջարանի մէջ (394—398) ասում է, որ զտանուելով պարսից ծառայութեան մէջ, երկար ժամանակ դիտաւորութիւն ուներ թողնել Պարակաստանը, վերջապէս, 1838 թուին յաջող վում է նրան ուխտաւորի անունով գուրս գալ Թաւրիզից եւ ուղեւորուել դէպի Երուսաղէմ: Այնուղ մոնում է սուրբ Յակոբեանց վանքի հայ միաբանութեան կարգը եւ ընդունում է նրանց հագուստի եւ մօրուքի ձեւը (?): Այդ վանքում մնում է նա ամբողջ 9 տարի: Յետոյ ս. պատրիարքի օրհնութիւնն առնելով, 1846 թուին թողնում է այդ վանքը եւ հեռանում է Երուսաղէմից:

Այնուհետեւ, որպէս զի թեթեւ լինի, իւր փողերը ոսկիների փոխարկելով, 15.000 ոսկի կարում է հագուստի ցնցոտիների մէջ, եւ մուրացկանի կերպարանքով, սկսում է զանազան երկներում ճանապարհորդութիւններ անել: Որտեղ ասէք, լինում է նա: Այդ վերջին ճանապարհորդութիւնները տեսում են 39 տարի, մինչեւ գալիս է հասնում է Ղարաբաղ եւ իւր հայրենական Խնածախ գիւղում մնում է 10 օր միայն:

Այժմ հաշուենք:

1838 թուին նա թողել է Պարսկաստանը:

9 տարի մնացել է Երուսաղէմում:

39 տարի ճանապարհորդութիւններ է արել:

Եթէ այդ բոլորը ի մի գումարենք, կը ստանանք ներկայ 1886 թուականը, որի մէջ ապրում ենք: Ուրեմն այս տարի Ապրես Բէկնազարեանցը պէտք է յանձնած լինէր Մակար վարդապետին իւր “Գաղտնիք” եւ ոչ թէ 1881 թուին, երբ նա Ղարաբաղում չէր կարող գտնուել:

Այդ հաշուով պարզվում է այն ամբողջ առապելը, որ Մակար վարդապետը հնարել է, թէ 1881 թուին ստացաւ “Գաղտնիք”, թարգմանեց, յետոյ բնագիրը կորցրեց, եւ այն, — դրանցից եւ ոչ մէկը չէր կարող պատահել, որովհետեւ ներկայ թուականից առաջ յիշեալ գիրքը նրա ձեռքը հասնել չէր կարող:

Այդ բոլորից այն եղակացութեանն ենք հասնում, որ “Գաղտնիք” մի զցոյ հեղինակները — հայր եւ որդի Բէկնազարեանները — երեւակայական անձնաւորութիւններ են, թէ այդ գիրքը Մակար վարդապետի խարդախած աշխատութիւնն է, եւ թէ Մակար վարդապետը այդ գրքի վերջարանի մէջ, ի դէմս Ապրես Բէկնազարեանցի, նկարագրել է միայն իւր աստանդական կեանքը Տաճկական

Հայաստանում եւ իւր ինն տարի մնալը Երուսաղէմի վանքի  
միաբանութեան մէջ եւ այն:

Առհասարակ “Գաղտնիք”ի մէջ նշանակուած թուա-  
կանների մեծ մասը, անցքերի եւ փաստերի հետ համե-  
մատելով, ցոյց են տալիս խիստ խոշոր հակասութիւններ,  
որոնք պարզ կերպով երեւան են հանում այն անհեր-  
քելի ճշմարտութիւնը, որ եթէ հեղինակը գոյութիւն ու-  
նենար եւ ժամանակակից անձն լինէր, այն տեսակ սխալներ  
չէր անի:

գ.

Ես դեռ չեմ վերջացրել “Գաղտնիք”ի մի զոյգ հե-  
ղինակների հետ — հայր եւ որդի Բէկնազարեանների հետ:  
Դրանց պէտք է ամեն կողմից քննել, որովհետեւ դրանց  
գոյութեան հետ սերտ կապ ունի “Գաղտնիք”ի հարազա-  
տութեան կամ անհարազատութեան խնդիրը: Հէնց որ  
միանգամ ապացուցուեցաւ, որ Բէկնազարեանները երեւա-  
կայական անձնաւորութիւններ են, — իսկոյն, ինքն ըստ  
ինքեան, փուլ կը գայ ամբողջ “Գաղտնիքը” եւ կ’ապա-  
ցուցուի, որ այդ գիրքը նոյնպէս մի երեւակայական աշ-  
խատութիւն է, մի անյայտ հեղինակից գրուած:

Ի՞նչու

Նախ քան այդ հարցին ուղղակի պատասխանելը,  
պէտք է որոշել, թէ ի՞նչ տեսակ աշխատութիւն է  
“Գաղտնիք”ը:

“Գաղտնիքը վէպ չէ, պատմութիւն եւս չէ: “Գաղ-  
տնիքը մի յիշատակարան է, որի մէջ խառն եւ անկապ  
կերպով պատմվում են զանազան պատմական անցքեր:  
Անցքերի պատմողը — Բէկնազարեանները — կամ անմի-  
ջական կերպով ինքը գործում է անցքերի մէջ, կամ,

եթէ ինքը ներկայ չէ, միւս գործիչների հետ սերտ կապեր  
ունի եւ նրանցից ստանում է հարկաւոր տեղեկութիւն-  
ները: Եւ այսպէսով, յիշատակարանի մէջ գործող անձը  
գտանում է, մի եւ նոյն ժամանակ, նրա գրողը, նրա հե-  
ղինակը:

Պատահում են շատ վէպեր, եւ իմ վէպերից մի  
քանիսը այդ ձեւով է գրուած, որ ամբողջ վէպը սկզբից  
մինչեւ վերջը պատմում է գործող անձինքներից մէկը:  
Բայց այստեղ հեղինակը յայտնի է: Նա միայն իւր խօսքը  
իւր ստեղծած տիպի բերանն է գնում, եւ իւր վիպասա-  
նութեան վերաբերութեամբ՝ բոլոր պատասխանատուու-  
թիւնը իւր վրայ է առնում:

Բայց Մակար վարդապետը հրաժարվում է իրան  
“Գաղտնիք”ի հեղինակը ճանաչել: Մնում են Բէկնազար-  
եանները, որոնք թէ անձամբ խառն են կատարուած  
անցքերի մէջ, եւ թէ իրանց յիշատակարանի մէջ գրում  
են նոյն անցքերը: Եւ այդպէս, անցքերի ճշտութեան պա-  
տասխանատուութիւնը մնում է վերջինների վրայ: Ուրեմն,  
եթէ յայտնուին փաստերի մէջ զեղծումներ եւ խոշոր  
զեղծումներ, — պէտք է ընդունել երկուսից մէկը. կամ  
Բէկնազարեանները ստախօսներ են եւ իրանց երեւակայու-  
թեան ցնորդները տալիս են մեզ իրրեւ զուտ պատմական  
փաստեր, կամ նրանք բանաստեղծական անձնաւորութիւն-  
ներ են, այլ մի անյայտ հեղինակ գրել է այդ յիշատա-  
կարանը եւ Բէկնազարեանների անունով նոյն զեղծումներն  
է անում, — աղաւաղում է պատմութիւնը:

Վերջին դէպքում, “Գաղտնիք”ը կը կորցնէ իւր հա-  
րազատութիւնը եւ կը գառնայ մի անհատի կեղծ աշխա-  
տութիւն: Թո՞ղ լինի այդ անհատը Մակար վարդապետը,  
կամ մի ուրիշը, — մի եւ նոյն է:

Աշա ի՞նչու ասում էի ես, թէ երբ մի անգամ ապացուցուեցաւ, որ թէկնազարեանները երեւակայական անձնաւորութիւններ են, — իսկոյն փուլ կը գայ եւ կը փշուի ամբողջ “Գաղանիք”ը:

Դիմենք փաստերին:

“Գաղանիք”ի մէջ գտնում ենք անթիւ գաղանի թղթակցութիւններ, կամ ամբողջապէս, կամ նրանց բովանդակութիւններ: Այս տեսակ գաղանի թղթակցութիւնները, թէ պետութիւնների եւ թէ մասնաւոր բարձր պաշտօնականների յարաբերութեանց մէջ, սկզբում խստիւ պահվում են գիւաններում, քանի գեռ գործողութիւնները չեն վերջացած: Իսկ գործողութիւնները վերջանալուց յետոյ, նրանք գառնում են հնագարանների (արխիւների) սեպհականութիւն: Ապագայում, շատ հեռաւոր ապագայում, նրանցից սակաւներին է վեճակվում պատմութեան նիւթ գտնանալ:

Բայց “Գաղանիք”ի մէջ հակառակն ենք տեսնում: Դեռ այդ գաղանի թղթակցութիւնների մելանը չչորացած, նրանք մոնում են “Գաղանիք”ի մէջ: Ո՞րտեղից, ի՞նչում, ո՞ր սատանան է բերում, — մարդ դժուարանում է հասկանալ:

Այժմ տեսնենք, արդեօք հայր եւ որդի թէկնազարեանները ի՞նչ պաշտօն էին կատարում պարսից թագաւորների արքունիքում, որ նրանց մատչելի էին այն բոլոր դիւանական գաղանիքները եւ այն բոլոր գաղանի թղթակցութիւնները, որ նրանք անմիջապէս ներմուծում էին իրանց յօրինած գրքի մէջ:

Սկսենք որդուց — Ապրես թէկնազարեանից:

1795 թուին, սեպտեմբեր ամսում, Աղա-Մամադ շահը աւերակ է գալձնում Թիֆլիսը եւ 12.000 գերի-

ների բազմութեամբ<sup>1</sup> սկսում է չուել դէպի Պարսկաստան: Նա Ղարաբաղից իւր հետ է տանում թէ հայր եւ թէ որդի թէկնազարեաններին (եր. 172): Հենց բանակի մէջ, ճանապարհին գնալու ժամանակ, շահը վարժապետ է կարգում, որ պատանի Ապրեսին պարսկերէն սովորացնէ: Բաւական մեծ հոգացողութիւն պէտք է համարել շահի կողմից . . .

“Պարսիկ վարժապետու, Շուշու քանակատեղից սկսած Շահի ստիպմամբ, աշխատում էր ինձ ուսուցանել պարսկերէն խօսել, զրել եւ կարդալ...: Սկսայ յաճախ կարդալ Կիւլստան դասագիրքս եւ ծանձրացած ժամանակներն ընդօրինակել: Եւ ահա այսպիսի շարունակութեամբ ունակութիւնս օր քան զօր զօրացաւ... եւ յառաջաղիմեցի իմ ծեռնարկութեան մէջ: Ո՞րքան ուրախանում էր իմ բարերար Շահն, երբ իւր հետ խօսակցում էի պարսկերէն եւ արտազրում էի գեղեցիկ. վասն որոյ Շահն հրամայեց իւր դիւանապետին, որ հետզհետէ ինձ օրինակել տար արքունի հրովարտակներ, շրջաբերականներ եւ գաղտնի նամակներ, որպէս զի այդ մասնաճիւղը մշակելով ապագայում ես լինէի իւր գաղտնի նամակագիրը,, (եր. 221):

Այդ բոլորը խիստ հետաքրքիր է Թողնենք այն, որ շահի “գաղանի նամակագիրը” մասնագիտաբար չէ պատրաստվում եւ նրանից այնքան խորին գործութիւն չէ պահանջվում, որքան բարյական յատկութիւններ, այն է հաւատարմութիւն եւ ծածկապահութիւն. Իսկ այդ յատկութիւնները շահը

<sup>1</sup> “Խամապի Մելիքութիւնները”, եր. 143 – 146: „История войны и владычества русских на Кавказе“. Н. Дубровина т. III. 38—49.

պատանի Բէկնազարեանի մէջ նախագուշակել չէր կարող : Թողնենք եւ այն, որ Աղա-Մամադ-շահը այնքան միամիտ մարդ չէր, որ իւր հրովարտակները, շրջաբերականները եւ գաղտնի նամակները տար պատանի Բէկնազարեանի ձեռքը, որ նա իրեւ վարժութեան կամ գեղագրութեան օրինակներ գործ ածէր : Որովհետեւ եթէ նա կարող էր հաւատալ մի անփորձ պատանու, բայց երբէք չէր հաւատայ նրա վարժապետ մօլլային : Թողնենք եւ այն, թէ ինչ էր գտել Աղա-Մամադ-շահը մի խնածախցի հասարակ գիւղացու որդու մէջ, որ նրա վրայ առանձին ուշադրութիւն էր դարձնում, քանի որ նրա Թիֆլիսից տարած 12.000 գերիների թուում կային շատ հայ եւ վրացի աղնուականների որդիներ : — Այդ բոլորը թողնում եմ ես, այլ կարեւոր եմ համարում ընթերցողի ուշադրութիւնը դարձնել միայն այն կէտի վրայ, արդեօք կարմղ էր պատանի Բէկնազարեանը Շուշիից մինչեւ Թէհրան գնալու ժամանակ, ճանապարհին այնքան պարսկերէն սովորել, որ շահին հիացնէր իւր պարսկերէնով եւ սկսէր հրովարտակներ, շրջաբերականներ եւ գաղտնի նամակներ ընդօրինակել : Այդ կէտը ես ուշադրութեան արժան եմ համարում, — ահա ինչ պատճառով .

Դա է կազմում “Գաղտնիք”ի հիմքը, այստեղից են բղխում այն անժիւ պաշտօնական գաղտնի նամակները, շրջաբերականները եւ այլն, որ այդ գլքի մէջ բաւական մեծ տեղ են բռնում : Պատանի Բէկնազարեանը ընդօրինակում է նրանց իրեւ աշակերտ եւ, մի եւ նոյն ժամանակ, զետեղում է “Գաղտնիք”ի մէջ իրեւ — պատմագիր . . .

Հաշուենք, թէ պատանի Բէկնազարեանը որքան ժամանակ մնաց շահի պալատում, մինչեւ այդ կատարելու-

թեանը հասաւ : (Ներքեւում կը տեսնենք, որ նա ապրում էր շահի պալատում) :

1795 թուի սեպտեմբեր ամսի վերջերում Աղա-Մամադ-շահը վերադարձաւ Թիֆլիսի արշաւանքից : Իւր ծանր բանակի դանդաղ ընթացքով, մինչեւ յիշեալ թուականի վերջը նա հազիւ Թէհրան կը հասնէր : Իւր աթոռանիստ քաղաքում երկար չմնաց նա . անմիջապէս սկսեց մի նոր արշաւանք դէպի Խորասան<sup>1</sup> : (Այդ կը տեսնենք հետեւեալ գլխում) : Խոկ Խորասանից 1797 թուի գարունքին ուղղակի արշաւեց կրկին դէպի Անդրկովկաս, առանց պատերազմի զրաւեց Շուշի բերդը եւ նոյն բերդում սպանուեցաւ իւր երկու սենեկապետներից<sup>2</sup> :

Այդ հաշուից երեւում է, որ Աղա-Մամադ-շահը ամենեւին ժամանակ չէր կարող ունենալ զբաղուելու պատանի Բէկնազարեանի կրթութիւնով : Որովհետեւ Աղա-Մամադ-շահի Թիֆլիսի արշաւանքից Պարսկաստան վերադառնալը, Խորասանի արշաւանքը կատարելը եւ այնտեղից կրկին Շուշի գնալը եւ սպանուելը՝ տեւեց ընդ ամենը մէկ ու կէս տարի (այսինքն՝ 1795 թուի սեպտեմբերը ամսից, մինչեւ 1797 թուի ամառը), եւ այդ մէկ ու կէս տարուայ ընթացքում նա զբաղուած էր անընդհատ պատերազմներով, եւ Թէհրանում չմնաց նա, որ իւր հրովարտակները, շրջաբերականները եւ պաշտօնական գաղտնի նամակները տար պատանի Բէկնազարեանին ընդօրինակելու եւ այլն :

1 “Պատմութիւն Պարսից” Մեսրովպայ Դ. Թաղիադեանց, Հատոր Ա. տպ. ի Կալկաթա, 1846, եր. 214:

2 “Խամապայի Մելիքութիւնները” եր. 162—164 . “История войны и владычества русскихъ на Кавказѣ”. Н. Дубровина т. III. 209. “Պատմութիւն Պարսից” Մեսրովպայ Դ. Թաղիադեանց, Հատոր Ա. եր. 216:

Եթէ մինչեւ անգամ ընդունենք, որ Շահի բացակայութեան ժամանակ պատանի Բէկնազարեանը բնակվում էր պալատում, դարձեալ, վերեւում ցոյց տուած հաշուով, (ի բաց առեալ ճանապարհորդութեան վրայ անցած ամիսները) մէկ տարուց աւել այնտեղ բնակուել չէր կարող: Որովհետեւ Ազա-Մամադ-շահի սպանուելուց յետոյ, ոչ ոք նրան պալատում չէր պահի: Այդ մէկ տարուայ ընթացքում, տեսէք, որքան բաներ սովորեց նա: Պարսկերէնի մէջ այնքան կատարելագործուեցաւ<sup>1</sup>, որ մինչեւ անգամ հրովարտակներ եւ շրջաբերականներ էր ընթօրինակում եւ նրանցից “Գաղտնիք, ի համար օգուաներ էր քաղում, այլ եւ սովորեց նա մի ուրիշ լեզու — ֆրանսերէն:

“Յաջողեցայ զաղղիերէն եւս ուսանել Յակովը անուն մի հայ-կաթոլիկ վարդապետից, որը Ուրմի քաղաքի կառավարութիւնը Շահին դրկած էր պատժելու, — շարունակում է պատանի Բէկնազարեանը եր. 229: — Ամրաստանազիրն սաստիկ բողոքում էր թէ սոյն վարդապետն զուն զործած էր մի քանի թուլահաւատ հայեր կաթոլիկութիւն դարձնել, իւր խոռվայոյզ, զրգոիչ, յեղափոխական եւ գաղտնիք քարոզներով տեղոյն ըրիստոնեայ ժողովրդեան եւ տիրող կառավարութեան

<sup>1</sup> Ով որ փոքր ի շատէ ծանօթ է պարսից լեզուի, եւ մանաւանդ նրա գրութեան ձեւերի հետ, որը սովորելու համար տասնեակ տարիներ են վատնվում, կը հասկանայ վերսիշեալ տողերի տարօրինակութիւնը: Պարսից տառերի եւ գրութեան ձեւը փոխելու խնդիրը այժմ մի մեծ մանկավարժական հարց է դարձել Պարսկաստանում: Այդ հարցը առաջին անգամ բարձրացրեց հայազգի Մերգա Մելքոն Խանը. — պարսից Դուան Լօնդոնի լիազօր գետպանը: Այժմ նա պարսիկների համար մի նոր ձեւով տառեր է հնարել եւ “Գիւլիստանը” նոյն տառերով տպագրել է տուել Լօնդոնում: Եթէ ընդունելութիւն գտնի յարգելի պարսկագէտի աշխատութիւնը, պարսից մանկավարժութիւնը մեծ դիւրութիւններ կը գտնէ:

մէջ խորվութիւններ յարուցանել եւ ժողովուրդը պարսից դէմ՝ ապստամբեցնել (բնչու): Շահն, աւելի զբաղուած լինելով քաղաքական եւ պատերազմական գործերով ժամանակ չունեցաւ կամ՝ պատժել եւ կամ՝ քննութեամբ արդարացնելով ազատել, վասն որոյ բանտարկեալ մնացած էր, որի մօտ յամախում էի ուսանելու,,.

Այդ ասացուածների մէջ որքան տողեր կան, այնքան եւս սխալներ կան: Ուրմի քաղաքում երբէք հայ-կաթոլիկ վարդապետներ չեն եղել եւ այժմ նոյնպէս չկան: Երբէք հայ-կաթոլիկ վարդապետները քաղաքական ձգտում ներով Պարսկաստան չեն մտել, որովհետեւ նրանք քաղաքական շահեր չունեն: Ուրմիում եղել է, այժմ նոյնպէս կայ, ասորի-կաթոլիկ հասարակութիւն, բայց նրանց կրօնաւորները ոչ հայեր են, այլ եւրոպացիք, լազարի ստների կարգից: Երեւի, “Գաղտնիք” հեղինակը, ինքը Պարսկաստանում ապրելով, այնքան չէ ուսումնասիրել երկիրը, որ Ուրմին շփոթել է Սպահանի հետ, որտեղ, իրաւ, կայ հայ-կաթոլիկ հասարակութիւն: — Թողնենք այդ, մեզ համար հետաքրքիր կետը պատանի Բէկնազարեանի ֆրանսերէն սովորեն էր բանտարկեալ վարդապետի մօտ, մի տարուայ ընթացքում, այն եւս պարսկական դժոխային բանտում, որի գոները ոչ մի օտար մարդու առջեւ չեն բացվում:

Այժմ տեսնենք, թէ ինչպէս էր ապրում պատանի Բէկնազարեանը շահի պալատում:

“Շահի պալատում ամենից սիրականն ես էի: Շահի երկու քոյրերն, վրացի եւ պարսիկ աղախիններն սիրում էին զիս անյազ սիրով, փայփայում եւ զգիում: Զեմ՝ կարող չյիշել մի զլսաւոր պարագայ, այս է, միմեանցից թագուն՝ հայ-կաթոլիկ վարժապետութիւնը, պար-

(քանտում) քարոզում էր ինձ ընդունել Փափի գերիշխանութիւնը, պարսիկ վարժապետս՝ Մահմետի լրյա կրօնը եւ Ս. Ալու իմամութիւնը, եւ վրացի աղախիններն՝ յունադաւանութիւնը եւ վրացիութիւնը։ Թէ եւ հօրիցս կանխաւ խրատուած էի ընաւ այն կամ ոչ չպատախանելու՝ սակայն խոստվանում եմ մեղքս, ինչպէս տղայական տաք արեան յատուկ Է՝ վարդապետին պատախանեցի. — “Աւելի լաւ կը լինէր դու հայ մեռնէիր քան թէ փափականութեան մէջ ապրէիր”, պարսիկ վարժապետիս. — “Դու ինձ պարտաւոր ես պարսիրէն ուսուցանել եւ ոչ կրօնափոխութիւնն,.. իսկ վրացի Թամար եւ Ելիզա աղախիններին. — “Դուք աւելի լաւ կ'անէիք ճեր շահամոլ եւ դիւրափոփոխ ազգականներին մահմետականութիւնից արգիլել, քան ինձ վրացիութիւն ընդունել տալու Շգնել, (եր. 229—230):

Այդ բոլոր միամիտ խոստովանութիւնները փոքր իշտէ հաւանական կարող էին լինել, եթէ Աղա-Մամդ-շահը կանանց ունենար: Դժբախտաբար նա ներքինի էր եւ զուրկ պարսից շահէրի կանանց ունենալու բաւականութիւնից: Դեռ աղայական հասակում Աղլ-շահի հրամանով ներքինիացրին նրան եւ պահվում էր նոյն շահի արքունիքում, որ դժոնվում էր Թաւրէղ քաղաքում: Իսկ երբ Զենդ-Քարիմ-խանի զօրավարը, Շըխսալի խանը, սպանել տուեց նրա հօրը՝ Մամադ-Յուսէին-խանին, եւ նրա որդիներից շատէրին կոտորել տուեց Աստարապատում, այդ կոտորածից ազատուեցաւ Աղա-Մամադ խանը, որովհետեւ դժոնվում էր Աղլ-շահի մօտ<sup>1</sup>:

<sup>1</sup> “Պատմութիւն Պարսից” Ա. Դ. Թաղեադեանցի Ա. հատ. եր. 216: “Պատմութիւն Նոր Զուղացու” Յարութիւն Տէր Յովհանեանցի, տպուած ի Նոր-Զուղա, 1881 ամի Ա. հատ. եր. 291:

Աղլ-շահի թագաւորութիւնը տեւեց 6 ամիս միայն: Այնուհետեւ զօրացաւ Զենդ-Քարիմ-խանը: Դա Աղա-Մամադ-խանին բերել տուեց Շիրազ եւ պահում էր իւր կանանցում, իբրեւ պատանդ: Այդ կանանցից փախաւ նա եւ Ղաջարեան թագաւորութեան սկիզբը դրեց<sup>1</sup>:

Աղա-Մամադ-շահը ինչպէս կանանց չունէր, նոյնպէս տանը մնացած երկու քոյրեր չունէր, որ սիրէին Ապրես-Բէկնազարեանին: Նա միայն մի հօրաքոյր ունէր, որի վրայ ամուսնացաւ Զենդ-Քարիմ-խանը, նրա հօրը սպանել տալուց յետոյ<sup>2</sup>:

Այստեղ ծիծաղելի է այն կէտը, որ Ապրես Բէկնազարեանը, ապրելով Աղա-Մամադ-շահի պալատում եւ ծանօթ լինելով նրա բոլոր գաղտնիքների հետ, այնուամենայնիւ, չգիտէ ամենահասարակ անցքերը նրա տոհմային պատմութեան: — Նա չգիտէ, որ Աղա-Մամադ-շահի հայրը, Մամադ-Յուսէին-խանը, մօտ 40 տարի առաջ սպանուած էր (1759 թ.):, իսկ նրա մայրը նոյնպէս վաղուց վախճանուած էր: Ուրեմն այդ երկու քոյրերը ով պիտի ծնէր Աղա-Մամադ-շահի համար, որ սիրէին Ապրես Բէկնազարեանին...

Եթէ ընդունենք անգամ, որ պարսից այդ ներքինի թագաւորը կանանց ունէր, բայց դարձեալ խիստ տարապայման կը լինէր ընդունել, որ Ապրես Բէկնազարեանը ապրում էր նրա պալատում եւ նրա կանանցի հետ յա-

<sup>1</sup> “Պատմութիւն Պարսից” Ա. Դ. Թաղեադեանցի Ա. հատ. եր. 206: “Պատմութիւն Նոր Զուղացու” Ա. հատ. եր. 279, 280: “Խամսայի Մելիքութիւնները” եր. 138:

<sup>2</sup> “Նամէյի Խօսրովան” (Գիրք թագաւորաց) Աշխատութիւն Զալալ-Միրզայի որդուոյ Գաթակի-շահի, Գ. հատ. եր. 422: Տպուած է Թէհրանում 1871 ամի:

<sup>3</sup> Զամէեանի Պատմութիւն Հայոց Գ. հատ. եր. 859:

բարերութիւններ ունէր։ Ապրես թէկնազարեանը այդ ժամանակը անպատճառ քսան տարեկան կը լինէր, իսկ այդ հասակում նրան կանանցը ներս չէին թողնի, մանաւանդ, որ նա քրիստոնեայ եւ նրա ներկայութիւնը, ըստ պարսից կրօնի, կարող էր ամեն ինչ պղծել մահմեդական ընտանիքում, եւ աւելի, մոլուանդ Աղա-Մամադ-շահի ընտանիքում։

Զարմանալին այն է, Աղա-Մամադ-շահը, որ Թիֆլիսից տարած 12.000 գերիների մեծ մասը զանազան հրապոյրների կամ մորակի ուժով մահմեդական դարձրեց, բայց Ապրես թէկնազարեանի կրօնին չդիպաւ։ Եւ նրան ոչ միայն որպէս քրիստոնեայ մնուցանում էր իւր պալատում, այլ մինչեւ անգամ նպաստում էր նրա մէջ հայրենական կրօնի պահպանուելուն։

“Ինչպէս իմ բարերար Շահն կարգադրած էր՝ զլում է ապրես թէկնազարեանը՝ ես ամեն շարաթերեկոյեան եւ կիւրակէ առաւոտեան եւ կէսօրին մեր եկեղեցին էի զնում, աղօթում եւ ուզած ժամանակս հաղորդվում եւ վերպառնում”, (եր. 229)։

Նա մինչեւ անգամ շահի պալատում շարունակում էր հայերէնով պարապուել։

“Բարձի թողի արած չէի եւ հայերէնս, այլ ինչպէս կանխաւ պատուիրած էր ինձ հայրս՝ զիշերներն առանձնացած ժամանակներս կարգաւ կարդում էի Ս. Աւետարանս իրեւ կրօնազիրք, Եղիշէս՝ իրեւ պատմազրութիւն ուսուցանող զիրք եւ Նարեկս՝ իրեւ աղօթազիրք, (եր. 222)։

Այդ բոլոր գուցէ լաւ կը լինէր մի վէպի մէջ, բայց ոչ թէ պատմութեան մէջ։ Երեւում է, որ միամիտ Ապրես թէկնազարեանը ոչ Աղա-Մամադ-շահին է տեսել

եւ ոչ էլ նրա պալատն է տեսել, որ գիտենար, թէ ինչեր կատարուեցան այդ պալատում։ Եթէ նա այնտեղ եղած լինէր, անպատճառ կը տեսնէր ուրիշ շատ հայ պատանիներ, որոնց Եղիշէն եւ Սարեկը ամեն գիշեր կարդում էր։ Նա կը տեսնէր Մանուչար — խանին<sup>1</sup>, Խոսրով-խանին<sup>2</sup>, Գիօրգին-խանին<sup>3</sup> եւ ուրիշ շատերին, որոնց ոչ միայն մահմեդականացրել էին, այլ եւ — ներքինի ացրել էին...։ Առանց ներքինի գարձնելու եւ առանց մահմեդական դարձնելու, պարսից շահերը ոչ մի օտար մարդու թոյլ չեն տալիս բնակուելու իրանց պալատում...։

Ով որ փոքր ի շատէ ուսումնասիրել է Աղա-Մամադ-շահին, հարկաւ, ծանօթ կը լինի նրա վերին աստիտաձի կրօնական մոլեռանիութեան հետ։ Նա մինչեւ անգամ բուն Պարսկաստանի, որի թագաւորն էր ինքը, մի նահանգից հայ գերիներ էր տանում դէպի միւսը՝ մահմեդականացնելու նպատակով<sup>4</sup>։ Իսկ նրա Թիֆլիսից տարած

<sup>1</sup> Մանուչար-խանը Թիֆլիսի Էնիկօլգիեանների տոհմից էր։

<sup>2</sup> Խոսրով-խանը Թիֆլիսի Տէր Սամուէլի որդին էր, Պայթմազեան տոհմից։

<sup>3</sup> Գիօրգին-խանը Մանուչար-խանի ազգականն էր, նոյնպէս Թիֆլիսեցի։

Այդ երեք անձանց մասին, որ բարձր պաշտօնների եւ աստիճանների հասան Պարսկաստանում, կը խօսուի հետեւեալ գլխում։

<sup>4</sup> 1785 թուի յուլիս ամի 23ին Աղա-Մամադ-շահը գերի վարեց Սպահանի նահանգի Փերիայ Կաչուած գաւառի հայ բնակիչներից շատերին, որոնք Շահ-Արա մեծի Պարսկաստան տարած գաղթականներից էին։ (“Պատմութիւն Նոր-Զուղայու” Ա. Հատ. եր. 342–343.)

Հետեւեալ տարին (1786 թ.) Աղա-Մամադ-շահը մի նոր արշաւանք կատարեց գէպի Սպահանի կողմերը։ Այս անգամ Փերիայ գաւառի հայ բնակիչները երկեղեց ամրացան լեռներում։ իսկ Շահը հրամայեց իւր զօրքերին աւարի առնել նրանց անտէր մնացած գիւղերը։ (“Պատմ. Նոր Զուղայու” Ա. Հատ. եր. 347.)

1787 թուին գարձեալ արշաւեց Աղա-Մամադ-շահը գէպի Սպահանի կողմերը եւ այս անգամ գերի վարեց հայոց բուրգարի կոչուած գաւառի բնակիչներից շատերին, որոնք նոյնպէս Շահ-Արա մեծի տարած հայ գալ-

ահագին գերիվարութեան հետքերն անդամ չեն մնացել  
այժմ Պարսկաստանում:

Բայց ինչ է ասում այդ գերիների մասին Ապրես  
Բէկնազարեանը:

“Պարսկաստան փոխադրած հայ եւ վրացի գերին  
սերն ընակութիւն հաստատած էին Թաւրիզում, սորա  
շրջականներում եւ փոքր մասամբ Թեհրանում: Վրացիք  
զգալի կերպիւ պարսկանում էին մահմեդական կրօնը  
ընդունելով, իսկ Հայք ընդհակառակն պահպանում էին  
իրենանց կրօնը եւ լեզուն, եկեղեցիներ շինելով եւ  
երեխայքը քահանայից ձեռօք ուսուցանելով, (Եր. 229):

Այդ խօսքերից խունկի հոտ է բուրում... երեւում  
է, որ գլողը մի հոգեւորական է... չէ ցանկացել, որ  
հայերը կորչէին Պարսկաստանում:

Եթէ Ապրես Բէկնազարեանը Պարսկաստանը տեսած  
լինէր, եւ Աղա-Մամադ-շահի գերիների հետ այնտեղ  
գնացած լինէր, հէնց այդ փոքրիկ հատուածի մէջ այնքան  
սխալներ չէր անի, որը ես այժմ պիտի ցցց տամ:

Ինչպէս վերեւում յիշեցի, Աղա-Մամադ-շահի տա-  
րած հայ եւ թէ վրացի գերիների հետքերն չեն մնացել  
Պարսկաստանում: Մահմեդականութիւնը բոլորին կլանեց:  
(Ի հարկէ, իմ խօսքը մի քանի զերծ մնացած անհատ-  
ների մասին չէ:) Սիսալ է այն, որ Աղա-Մամադ-շահը  
ընակեցրեց նրանց Թաւրիզում, նրա շրջակայ գիւղերում  
եւ մասամբ Թէհրանում: 12.000 գերին փոքր բան չէ,  
եթէ այդ քաղաքներում ընակեցրած լինէր, չէն կողչի,  
որովհետեւ հնուց հայ ազգաբնակութիւն կար:

Թականներից էին: Այդ գերիներին Աղա-Մամադ-շահը ընակեցրեց Թէհ-  
րանի շրջակայ գաւառներում եւ գլխաւորապէս Սաւայում: Մէծ մասը  
բռնութեամբ մահմեդականացրին: (“Պատմ. Նոր-Զուղայու” Ա. հատ.  
Եր. 348—349:)

Թաւրիզի հայ ազգաբնակութիւնը քաղկացած է  
զլսաւորապէս երկու տարրերից՝ բնիկներից եւ Ղարադաղի  
գաղթականներից, որոնք մինչեւ այսօր պահպանել են  
իրանց բարբառը եւ, թէ սովորութիւններով, թէ պա-  
րապմունքներով, բոլորովին որոշվում են միւսներից: Եթէ  
այդ քաղաքում բնակեցրած լինէին Թիֆլիսի գերիներին,  
այսօր կը տեսնէինք նրանց, մանաւանդ, որ խումբերով  
տարուած գաղթականները միշտ առանձին թաղեր են  
կազմում, եւ այդ թաղերը իրանց անունով են կոչում:  
Ինչպէս Շահ Աբասի Սպահան տարած գերիները բաժա-  
նուած էին զանազան թաղերի, եւ երեք ջուղայեցին  
չխառնուեցաւ երեւանցու հետ, կամ երեւանցին դաշտե-  
ցու (ներքին ագուլեցու) հետ:

Իսկ Թաւրիզի շրջակայքում, որ ցցց է տալիս Բէկ-  
նազարեանը, ոչ միայն Թիֆլիսեցոց գիւղեր չկան, այլ  
մինչեւ անդամ մահմեդականների — թուրքաց կամ պար-  
սից — գիւղեր չկան: Թաւրիզի շուրջը անապատ է, իսկ  
գիւղերը բաւական հեռու են: Հայոց երեք գիւղեր կան  
միայն, մի օրուայ ճանապարհի հեռաւորութեան վրայ,  
որոնց ընակիչները ոչ թէ Թիֆլիսեցիներ են, այլ բնիկներ  
կամ զարադաղլիքիք: Թէհրանում նոյնպէս Թիֆլիսեցի  
գաղթականներ չեն եղել, եւ այժմ չկան:

Ուրեմն ինչ եղան Աղա-Մամադ-շահի տարած գե-  
րիները:

Աղա-Մամադ-շահը նրանց մի մասը ընակեցրեց Մա-  
կանդարանում, որ իւր հայրենական երկիրն էր, մի մասը  
ընակեցրեց կասպից ծովի հարաւային գաւառներում,  
մնացածներին ցրիւ տուեց Պարսկաստանի զանազան խոր-  
քերում, հեռու քրիստոնեայ ազգաբնակութիւններից, որ-  
պէս զի հեշտ լինէր նրանց մահմեդականացնելու:

Այդ գլուում յիշուած բոլոր օրինակներից, որ ես քաղել եմ “Գաղանիք, ից, ինքն ըատ ինքեան ծագում է մի հարց. միթէ Ապրես Բէկնազարեանը, որ այնքան մերձաւոր էր Աղա-Մամադ շահին, որ նրա պալատումն էր ապրում, որ անձամբ ականատես եւ ներկայ էր իւր ժամանակի անցքերին, միթէ նա այսքան սխալներ կ'անէր, եթէ իրօք մի այդպիսի անձնաւորութիւն գոյութիւն ունենար:

Այդ սխալները Մակար վարդապետի սխալներն են: Եթէ նա փոքր ի շատէ ծանօթ լինէր պարախց կարգերի եւ սովորութիւնների հետ, եթէ նա յաւ ուսումնափրած լինէր այդ ժամանակներում կատարուած անցքերը, ի հարկէ, իւր ստեղծած պատմագրին մոլորութիւնների մէջ չէր ձգի:

Հետեւեալ գլուում ես ցոյց կը տամ աւելի խոշոր սխալներ հայր Բէկնազարեանի գործունեութեան մասին Պարսկաստանում, իսկ այժմ չեմ կարող առանց նկատողութեան թողնել մի մեծ հակասութիւն, որ իսպառոչնացնում է “Գաղանիք, ի մի զցդ հեղինակների գոյութիւնը եւ ցոյց է տալիս, որ նրանց գրածները երեւակայական առակաբանութիւն է, եւ աւելի ոչինչ:

Վերեւում տեսանք, թէ Բէկնազարեանները որտեղ բնակեցրին Աղա-Մամադ-շահի Պարսկաստան տարած հայ եւ վրացի գերիներին, — Թաւրիզ քաղաքում, նրա շրջակայ գիւղերում եւ Թէհրանում:

Բայց երեւում է, որ “Գաղանիք, ի մի զցդ հեղինակները սաստիկ մոռացկու են, գրքի մի տեղում գրածը միւս երեսում մոռանում են եւ նրա հակառակն են գրում: Նրանք “Գաղանիք, ի 169 երեսում Աղա-Մամադ-շահի վերառած հայ եւ վրացի գերիներին, հենց առա-

ջն իջեւանից, Սօղանլուխից, Մելիք-Մեջլումի<sup>1</sup> միջնորդութեամբ, վերադարձնում են կրկին իրանց տեղը — Թիֆլիս: Իսկ յետոյ, 229 երեսում, բնակեցնում են մի եւ նոյն գերիներին Պարսկաստանի Թաւրիզ քաղաքում, նրա շրջակայ գիւղերում, Թէհրանում եւ այլն: Այլ եւս ինչ գերիներ կը մնային այդ տեղերում բնակեցնելու համար, քանի որ բոլորին վերադարձել էր շահը:

Ահա “Գաղանիք, ի խօսքերը.

“Սօղանլու կոչուած տեղից, Մելիք-Մեժլումի միջնորդութեամբ՝ գերիներից Տփղիս վերադարձան տասն եւ երկու հազար վրացի եւ հայ գերուածներ՝ հանդերձ բոլոր եկեղեցական անօթներով եւ զարդերով, (եր. 169):

Գերիների թիւը ընդ ամենը 12.000 էր: Այդ թիւը առնուած է “Խամսայի Մելիքութիւններից», որի մէջ նոյնպէս 12.000 է նշանակուած (եր. 145): Իսկ Դուբրովինը նրանց թիւը աւելի պակաս է զնում — 10.000 (Ист. воинны и влодычества Русскихъ на Кавказѣ Т. III. стр. 42):

Այս տեսակ հակասութիւններ անում են այն հեղինակները, որոնցից մէկը — հայր Բէկնազարեանը — Աղա-Մամադ-շահի զօրապետն է եւ անձամբ մասնակցել է նոյն արշաւանքին, իսկ միւսը — որդի Բէկնազարեանը — ապրել է Շահի պալատում եւ զրել է ժամանակի պատմութիւնը . . . .

<sup>1</sup> Մելիք-Մեջլումը Ղարաբաղի Ջրաբերդ գաւառակի մելիքն էր, որ վերաբուած լինելով վրաց Հերակլ թագաւորից, առաջնորդեց Աղա-Մամադ-շահին Թիֆլիսի արշաւանքի ժամանակ:

դեցին Շահի հրամանաւ նոցա որդիքն։ Շահն բաւական մնաց իմ՝ այս ծառայութեամբ,, եւ այլն (Եր. 222):

Նա կարծում է, որ Հերաթը եւ Ղանդահարը առանձին երկրներ են, չգիտէ, որ երկուսն էլ Աւղանիստանի քաղաքներ են։ Այդ թողնենք։

Հետաքրքրականն այն է, թէ որքան շուտ են կատարվում «Գաղտնիք» մէջ գործերը։ Հայրը գնաց, այն եւս 10.000 սարվազ առնելով գնաց Հերաթի եւ Ղանդահարի ապստամբութիւնները զավելու . . . իսկ Շահն յաղթական փառքով մուաւ Թէհրան, ուր Փարսից աթոռանիստ քաղաքն էր<sup>2</sup>, (Եր. 221):

«Երբ Թաւրիզ հասանք<sup>1</sup>, — շարունակում է որդի Բէկնազարեանցը — հայրս Շահից զօրավար կարգուեցաւ եւ 10.000 սարվազ առնելով գնաց Հերաթի եւ Ղանդահարի ապստամբութիւնները զավելու . . . իսկ Շահն յաղթական փառքով մուաւ Թէհրան, ուր Փարսից աթոռանիստ քաղաքն էր<sup>2</sup>, (Եր. 221):

«Երբ Թաւրիզ հասանք, — շարունակում է որդի Բէկնազարեանցը — հայրս Շահից զօրավար կարգուեցաւ եւ 10.000 սարվազ առնելով գնաց Հերաթի եւ Ղանդահարի ապստամբութիւնները զավելու . . . իսկ Շահն յաղթական փառքով մուաւ Թէհրան, ուր Փարսից աթոռանիստ քաղաքն էր<sup>2</sup>, (Եր. 221):

«Հայրս վերադառն եւ պատմեց հետեւեալը.

«Միրելի Ապրես, իսպառ նուածեցինք Հերաթի եւ Ղանդահարի ապստամբութիւնները։ Տեղական ապստամբ խաներն սպանուեցան սպատերազմում եւ յաջոր-

<sup>1</sup> «Գաղտնիք» լի է անթիւ աշխարհագրական սիսակներով։ 172 եւ 173 երեսներում ասուած է, որ թէ իրանք, Բէկնազարեանները, եւ թէ շահը անցան Երասխը Խուդափերինի կամրջով։ Եթէ այսոեղից անցած լինէին, թաւրիզը չէին տեսնի։

<sup>2</sup> Պարսից աթոռանիստ քաղաքը Թէհրանումն էր, թէ Թէհրանն էր աթոռանիստ քաղաքը, — յայտնի չէ։ Բէկնազարեանը չգիտէ, որ Պարսից աթոռանիստ քաղաքը Սպահանն էր, իսկ Աղա-Մամադ-շահը եւ գլխաւորապէս նրա յաջորդները գարձրին Թէհրանը նոր մայրաքաղաք։

Դ.

Այժմ տեսնենք հայր Բէկնազարեանի — Արրահամի — գործունէութիւնը Պարսկաստանում։ Քննելով նրան, մենք քննած կը լինենք «Գաղտնիք»<sup>1</sup>։

Պէտք է չմոռանալ, որ Աղա-Մամադ-շահը, Թիֆլիս աւերակ գարձնելուց յետոյ, երբ վերադառնում էր Պարսկաստան, հայր եւ որդի Բէկնազարեաններին տարած իւր հետ։

«Շահն յայտնեց մելիքին (Մելք-Մէջլումին) որ ինքն ստիռած էր փութալ ի Պարսկաստան եւ իւր հետ տանել եւ հայրս եւ զիս, — այսինքն հայր եւ որդի Բէկնազարեաններին (Եր. 171):

«Երբ Թաւրիզ հասանք<sup>1</sup>, — շարունակում է որդի Բէկնազարեանցը — հայրս Շահից զօրավար կարգուեցաւ եւ 10.000 սարվազ առնելով գնաց Հերաթի եւ Ղանդահարի ապստամբութիւնները զավելու . . . իսկ Շահն յաղթական փառքով մուաւ Թէհրան, ուր Փարսից աթոռանիստ քաղաքն էր<sup>2</sup>, (Եր. 221):

«Հայրս վերադառն եւ պատմեց հետեւեալը.

«Միրելի Ապրես, իսպառ նուածեցինք Հերաթի եւ Ղանդահարի ապստամբութիւնները։ Տեղական ապստամբ խաներն սպանուեցան սպատերազմում եւ յաջոր-

«Գաղտնիք» ի համար, որպէս շատ օրինակներ կը տեսնենք, աշխարհագրական տարածութիւններ եւ ժամանակների տարբերութիւններ չկան։ Մարդիկ օդի մէջ են շրջում։ մի վայրկեան կը տեսնեք նրանց՝ Թաւրիզում, իսկ մի վայրկեանից յետոյ՝ Հնդկաստանում։ Մինչեւ Բէկնազարեանցը կը գնար Աւղանիստանի ապստամբութիւնները կը նուածէր եւ կը վերադառնար, շահին արդէն սպանուած կը գտնէր, եւ այլ եւս նրա շնորհակալութիւնը չէր կարող ստանալ, որովհետեւ, յիշեալ արշաւանքից յետոյ, շահը ապրեց մի եւ կէս տարի միայն։ Այդ տեսանք նախորդ գլուում։

Բայց հարցը դրանում չէ։ Մեզ համար հետաքրքրականն այն է։ արդեօք տեղի ունեցել է մի այդպիսի արշաւանք։

Այդ հարցը պարզելու համար, ես հարկաւոր եմ համարում բերել «Խամայի Մելքութիւններից» մի քանի քաղուածքներ մի եւ նոյն արշաւանքի մասին եւ զուգահեռաբար դնել «Գաղտնիք» պատմածների հետ։

“Որովհետեւ Աղա-Մա-  
մադ-խանը իր յաղթու-  
թիւնով (Թիֆլ. վերաբե-  
րութեամբ) առաւել պար-  
տական էր Մելիք-Մէջլու-  
մին, ճանապարհին, հենց  
առաջինիցեւանում (Սօղան-  
լուղիսում) հրամայեց իր գո-  
րապետներին, որ աւարից  
նրա մարդիկների համար բա-  
ժին հանեն, ասելով . “Քրիս-  
տոնեային պատկանածը՝ քրիս-  
տոնեային տուեցէք” : Մելիք-  
Մէջլումի ձիաւորները իրանց  
եափունջիները տարածեցին  
գետնի վրայ, եւ պարսից  
զօրքերը որքան խաչեր, եկե-  
ղեցական անօթներեւ զգեստ-  
ներ կողոպտել էին Թիֆլիսի  
եկեղեցիներից, բոլորը թա-  
փեցին նրանց եափունջիների  
վրայ: Մելիք-Մէջլումը այդ  
բոլորը յետ ուղարկեց Թիֆ-

“Սօղանլու կոչուած տե-  
ղից, Մելիք-Մէջլումի միջ-  
նորդութեամբ՝ զեղիներից  
Տփոյիս վերադարձան տասն  
եւ երկու հազար վրացի եւ  
հայ գերուածներ հանդերձ  
բոլոր եկեղեցական անօթ-  
ներով եւ զարդերով,  
(“Գաղտնիք” Եր. 169):

լիս” (Խամսայի Մելիք. Եր.

145):

“Շահը շնորհէց Մելիք-  
Մէջլումին այդ երեք արտօ-  
նութիւնները. 1. երբ եւ որօշմ՝ շքանշան<sup>1</sup>, երկու  
կամենայ, կարող է անար-

“Շահն նուիրեց Մելիք-  
Մէջլումին մի առիւծա-  
նութիւնները. 1. երբ եւ որօշմ՝ շքանշան<sup>2</sup>, երկու  
կամենայ, կարող է անար-

1 Ես առիթ կ'ունենամ ուրիշ տեղերում եւս ցոյց տալու, որ  
“Գաղտնիք”ի պատմական մասը ամբողջապէս առնուած է “Խամսայի Մե-  
լիքութիւններից” . Եւ ինչպէս այդ քաղուածքի մէջ երեւում է, ինչ փո-  
փոխութիւններ որ արել է “Գաղտնիք”ի հեղինակը, դրանք կամ խոչը-  
սիալներ են կամ փաստերի աղաւաղումներ: Այդ՝ եւ յետագայ ծանօթու-  
թեան օրինակները բաւական կը լինեն իմ կարծիքը ապացուցանելու հա-  
մար: Աղա-Մամադ-խանի օրերում առ իւ ծ ա դ ր ո շ մ շ ք ա ն շ ա ն ը դ ե ռ  
գործածական չէր, եւ նա մինչեւ անգամ իրաւունք չունէր տալու, որով-  
հետեւ, այդ միջոցին՝ նա գեռ հասարակ խան էր, ճանաչուած չէր՝ իրեւ-  
թագաւոր: Առիւ ծագրոշմ՝ շքանշանը գործածական դարձաւ նրա յաջորդ-  
ների — Գաթալի-շահի, Մամադ-շահի եւ մանաւանդ պարսից ներկայ շահի  
օրերում:

2 “Զիտանոյը” “Գաղտնիք”ի ծանօթութեան մէջ բացատրուած է.  
“Վրացւոց թագաւորների կտրած միաձոյլ 40 կոպէկանոց դրամ” : Վրաց  
թագաւորների եւ ոչ մէկի ժամանակ այդ դրամը չկար: Եւր վրաց վերջին  
թագաւորը, Գիորգին, մահուան անկողնի մէջն էր, այդ միջոցին նրա Ա. Պե-  
տերբուրգ ուղարկուած պատգամաւորները, ի թիւս այլ պայմանների, առա-  
ջարկում էին ուուսաց արբունիքին եւ դրամ հատանելու իրաւունք ունե-  
նալ: Այդ առաջարկութիւնը չիրագործուեցաւ, որովհետեւ Գիորգին շու-  
տով վախճանուեցաւ եւ նրա հետ վրաց թագաւորութիւնը վերջացաւ:  
(Исторія воїнів и відомічества Русскихъ на кавказѣ, Н. Дубрована Т. III.  
335 - 351): Յիշեալ դրամը, թէեւ վրաց տառեր է կրում, բայց ուուսաց  
փող է, թիֆլիսում հատանել սկսեցին 1805 թուին մինչեւ 1837 թուա-  
կանը, այսինքն, սկսեալ այն ժամանակից, երբ վրաց թագաւորութիւնը  
բոլորովին վերջացած էր եւ Վրաստանը միացած էր Ռուսաստանի հետ:  
Խակ Աղա-Մամադ-շահի արշաւանքը եւ նրա Թիֆլիսը աւերակ դարձնելը  
տեղի ունեցաւ ոչ թէ Գիորգիի օրերում, այլ նրա նախորդ Հերակլի օրե-  
րում, երբ այդ դրամները ամենեւին գոյութիւն չունէին: Ուրեմն որտեղից  
լորեց շահը իւր ջորիների բեռները յիշեալ դրամներով... Աւելորդ շեմ  
համարում յիշել եւ այն, որ վրաց վերջին թագաւորների ժամանակ, Թիֆ-  
լիսում եղած դրամահատութեան տունը, որ գտնվում էր իշխան Բէհրու-  
դեանների ձեռքում, — դա պարսից հիմնակութիւն էր եւ պարսից դրամ-

<sup>1</sup> Պարզ երեւում է, որ “Գաղտնիքը, քաղել է “Խամսայի Մելիք-  
քութիւններից”, միայն աւելացնելով, թէ եկեղեցական իրեղէնների հետ,  
Մելիք-Մէջլումի միջնորդութեամբ Աղա-Մամադ-շահը վերադրեց նաեւ  
իւր վերառած 12.000 հայ եւ վրացի գերիները: Այդ յաւելուածքը “Գաղ-  
տնիքը ամենախոշը հակասութիւններից մէկն է, որովհետեւ նոյն դրբի  
եր. 229 ասուած է, որ շահը նրանց տարած իւր հետ եւ բնակեցրեց թաւ-  
րիզ քաղաքում, նրա շրջակայ գիւղերում եւ թէհրանում: Այդ ես ցոյց  
տուի նախորդ գլխում:

գել կերպով ել եւ մուտ  
գործել իր մօտ. 2. ինչ որ  
խնդրելու լինի, նրա կամքը  
կը կատարուի. 3. արքունի  
գանձարանընդա տրամադրու-  
թեան ներքոյ կը լինի,  
(Խամն. Մելք. եր. 145—  
146):

“Բայց Մելք-Մէջլումը  
այն աստիճան հպարտ եւ  
անշահասէր մարդ էր, որ  
Շահից ուրիշ ոչինչ չպա-  
հանջեց, միայն Թիֆլիսը  
աւերակ գարձնելուց յետոյ,  
խնդրեց նրա օգնութիւնը  
Շուշի բերդը նոյնպէս կոր-  
ծանել, հրբահիմ-խանին  
ոչչացնել եւ աւելի հաս-  
տառութիւն տալ Հարա-

ծաթ եւ երկու քսակուկի...  
նոյն չափով եւ Զաւադ-  
խանին,, (“Գաղանիք” եր.  
171):

ներ էին կտրում, որովհետեւ Ալբաստանը, իրեն պարոկական մի աւատա-  
կան նահանգ, իրաւունք չուներ իւր սեպհական դրոշմով դրամ հաստանելու:  
Այդ պարսից դրամները եւ այսօր կարելի է տեսնել Թիֆլիսի հնավաճառ-  
ների կամ սուաֆների մօտ:

<sup>1</sup> “Ճըս”, բառը, որ խիստ յաճախ գործ է ածվում “Գաղանիք”ի  
մէջ եւ ամեն բոպէ անտանելի կերպով ականջ է ծակում, Մակա: վար-  
դապետը իւր ծանօթութեան մէջ թարգմանում է՝ “Վայրենի, անպատուաստ  
պաղատու ծառ”, իսկ փոխարերական մոքով “Կեղծ, շինծու, անհարազատ”:  
Բայց ճըս կամ աւելի ճիշտ ուղղագրութեամբ՝ ջըս, թուրքերէն բառ է՝  
ջըս մաք բայի արմատից կազմուած, եւ նշանակում է ճեղքուած  
կամ հերձուած: Այսպէս կոչում էին Պարաբազի այն մելքներին, որ  
բաժանուած էին հարազատ մելքների միաբանութիւնից եւ միացած էին  
նրանց թշնամի թուրք խաների հետ, որոնք բռնութեամբ աիրապետել էին  
Շուշին եւ Հարաբազի մի մասը:

“Բայց առաջինն (Մելք-  
Մէջլումը) չընդունեց (դրամ-  
ները), բոլոր ճըս երի՝  
(Շուշու հրբահիմ-խանի եւ  
նրա կուսակիցների) ջնջումը  
գերադաս համարելով քան  
թէ այդ որամը. միայն ըն-  
դունեց շքանշանը, պատ-  
ճառելով թէ ինքն բաւա-  
կան կը լինէր միայն ծըսե-  
րի ջնջելովն եւ այն՝ Շահն

բաղի մելքների իշխանու-  
թեանը” (Խամն. Մելք.  
եր. 146):

“Շահը յօժարուեցաւ  
ուղակի գնալ Հարաբազ,  
Շուշին գրաւելու եւ Մե-  
լք-Մէջլումի ցանկութիւն-  
ները կատարելու. համար:  
Բայց գժբախտաբար այդ  
միջոցներում Հանդահա-  
րի եւ Հերաթի կողմե-  
րում խռովութիւններ ծա-  
գեցան, եւ նա ստիպուեցաւ  
շտապել Պարսկաստան ապ-  
ստամբութիւնները զսպելու  
համար” (Խամն. Մելք.  
եր. 146):

“Նա (Շահն) յայտնեց  
Զաւադ-խանին եւ Մելք-  
Մէջլումին սպասել, խոստա-  
նալով, որ շուտով կը վե-  
րադառնայ” (Խամն. Մելք.  
եր. 146):

“Զաւադ-խանը Մելք-  
Մէջլումի հետ գնացին Գան-

ինքն անծամիլ (այսինքն որ  
Շահը անձամբ մասնակցէր  
ձըուերի ջնջման գործին),  
(“Գաղանիք” եր. 172):

“Եւ մինչդեռ հայ զօրա-  
կանաց սրտերն լցուած ու-  
րախութեամբ եւ Շահի  
տուած խոստմամբ ամա-  
պարում էին Շուշի, յան-  
կարծ Շահն մի նամակ  
ստացաւ Փարսկաստանից,  
որն յայտնում էր Շահին  
թէ զօրաւոր ապստամբու-  
թիւններ երեւան ելած էին  
Հանդահարի եւ Հերաթի կողմե-  
րում կողմերում: Հարկ  
էր փութալ ի Պարսկաս-  
տան, (‘Գաղանիք’ եր.  
170):

“Շահն յայտնեց Մելք-  
ըին (Մելք-Մէջլումին), որ  
ինքն ստիպուած էր փու-  
թալ ի Պարսկաստան...  
եւ խոստացաւ առաջիկայ  
զարնան կրկին գալ, զրաւել  
Շուշին եւ կատարել իւր  
խոստումները,, (‘Գաղ-  
անիք’ եր. 171):

“Շահն շնորհակալու-  
թեամբ հանդերձ, հրաժա-

ձակ, իսկ Շահը ուրիշ ձաւնապարհով դիմեց գէպի Պարսկաստան, (Խամս. Մելք. եր. 146):

Վերեւում դրած մի շաբթ զուգահեռական համեմատութիւններից պարզ երեւում է, որ՝ կամ “Խամսայի Մելքութիւնների” հեղինակը — ես — գողացել է “Գաղտնիքից, կամ “Գաղտնիքուի հեղինակը — Աբրահամ” թէկնազարեանը — գողացել է “Խամսայի Մելքութիւններից”:

Ես “Գաղտնիքուց գողանաւ չեմ կարող, որովհետեւ, երբ Աբրահամ թէկնազարեանը գրում էր յիշեալ տողերը (1795 թ.) ոչ ես ծնուած չեմ, այլ իմ հայրն անգամ ծնուած չեմ: Բացի դրանից, “Խամսայի Մելքութիւնները” լոյս է տեսել 1882 թուին, իսկ “Գաղտնիքուը այս տարի — 1886 թուին: Առաջինը երկրորդից օգուտ քաշել չեմ կարող”:

Բայց պէտք է խոստովանուել, որ Աբրահամ թէկնազարեանը նոյնպէս չեմ կարող օգուտ քաշել “Խամսայի Մելքութիւններից”, որովհետեւ նա մեռել է այդ գրքի լոյս տեսնելուց 58 տարի առաջ — 1828 թուին:

Ուրեմն ով է գողը...:

Գողը ինքն իրան կը գտնուի... բայց ես աւելորդ չեմ համարում յիշել մի զրոյց: Մի մարդից փողեր գողացան, նա ծիծաղերով ասաց. — Թող տանէ, շատ խէր չե տեսնի, նրանց միջում մէկը ղալք (կեղծ) էր...:

Նոյնը կրկնում եմ ես: “Խամսայի Մելքութիւններից, առած քաղուածքների մէջ մի խոշոր պատ-

մական սխալ կայ, եւ այդ սխալը նոյնութեամբ մտել է “Գաղտնիքուի մէջ”:

Այն կտորը, թէ Աղա-Մամադ-շահը թողեց Շուշի բերդը գրաւելու դիտաւորութիւնը եւ շտապեց Պարսկաստան՝ Ղանդահարի եւ Հերաթի ապստամբութիւնները զապելու համար, — դա բոլորովին սխալ է: Այսպիսի ապստամբութիւններ ոչ տեղի են ունեցել եւ ոչ էլ Աղա-Մամադ-շահը գնացել է նրանց զապելու:

Թէ ինչն է սխալցը ինձ, — այդ ես գիտեմ, եւ իմ սխալը ինքս ուղղում եմ:

Բայց ինչ որ ներելի կարող է լինել ինձ, որ գրել եմ “Խամսայի Մելքութիւնները, յիշեալ անցքից 87 տարի յետոյ, — այն չե կարող ներելի լինել Աբրահամ թէկնազարեանին, որ ոչ միայն գրում է յիշեալ երեւակայական արշաւանքի պատմութիւնը, այլ ինքը, Աղա-Մամադ-շահից զօրապետ կարգուելով, 10.000 սարվազով գնում է Աւղանիստան, Ղանդահարի եւ Հերաթի ապստամբութիւնները նուաճում է, տեղային խաներին կոտորում է, նրանց որդիներին յաջորդ է կարգում եւ այսպիսով խաղացնում է մի ամբողջ երկիր (եր. 221, 222):

(Յիշեալ արշաւանքի մասին “Գաղտնիքից” առած վկայութիւնները զրեցինք այս գլխի սկզբում, նորից կրկնել՝ աւելորդ ենք համարում):

Բայց ինչով բացատրել այդ հանելուկը: —

Ահա ինչով. Մակար վարդապետը ցանկացել է իւր ստեղծած պատմագրներին — հայր եւ որդի թէկնազարեաններին — ուղարկել Պարսկաստան, որ նրանք աղբիւրի հէնց մաքուր ակնից քաղեն բոլոր տեղեկութիւնները եւ արձանագրեն “Գաղտնիքուի մէջ”: Այդ նպատակով նա որդի թէկնազարեանին մոցրել է Աղա-Մամադ-շահի պալատը:

Այնտեղ նա պարսկերէն է սովորում, Շահի գաղտնի նամակները, հրովարտակները, շքաբերականներն է ընդօրինակում եւ, մի եւ նոյն ժամանակ, նրանց օրինակները մոցնում է «Գաղանիք»ի մէջ: (Այդ տեսանք թ. գլխում): Մնում է հայր Բէկնազարեանը: Մակար վարդապետը մտածել է՝ դրա համար եւս մի նպատակայարմար պաշտօն գտնել: Եւ կարգել է նրան զօրապետ Աղա-Մամադշահի մօտ, որպէս զի, նրա բոլոր զինուորական գործողութիւնների գաղանիքները իմանայ եւ նոյնպէս մոցնէ «Գաղանիք»ի մէջ: Բայց նրան պէտք է մի որ եւ է գործ տալ, որի մէջ յայտնուի, նշանակութիւն ստանայ: Մակար վարդապետը «Խամայի Մելքոնթիւնների» մէջ կարդացել է, թէ մի ինչ որ Հերաթի եւ Ղանդահարի ապստամբութիւններ են եղել: Եւ այդ գուտ ուկու տեղ ընդունելով, իսկոյն օգուտ է քաղել եւ Արրահամ Բէկնազարեանին ուղարկել է Աւղանիստան, որ նոյն ապստամբութիւնները զապող հերոսը դառնայ:

Այժմ, կարծեմ պարզ է, թէ ով է գողը...:

Եթէ ուրիշ ոչինչ չը լինէր, Աւղանիստանի երեւակայական արշաւանքն միայն բաւական էր՝ ցոյց տալու «Գաղանիք»-ի կեղծութիւնը:

Աղա-Մամադշահը այնքան զբաղուած էր բուն Պարսկաստանի ներքին գործերով, եւ զեռ եւս այնքան շատ գործեր ունէր տեղային խանների հետ, մինչեւ կարողանար բոլորին նուաճել եւ ի մի ձուլել ամբողջ Պարսկաստանը, — որ նա Պարսկաստանի սահմաններից դուրս աշխարհակալութիւններ անելու ոչ ժամանակ ունէր եւ ոչ ցանկութիւն:

Աղա-Մամադշահի օրերում Աւղանիստանը նոյնքան եւ գուցէ աւելի մի զօրեղ իշխանութիւն էր, որքան

Պարսկաստանը, եւ ամենեւին կախում չունէր վերջինից, որ Աղա-Մամադշահը ստիպուած լինէր՝ կամ ինքը գնալ, կամ Արրահամ Բէկնազարեանին ուղարկել՝ տեղային ապստամբութիւնները զապելու:

Դեռ շատ ժամանակ չեր անցել այն օրից (ընդամենը 68 տարի) որ սէֆէվիների գահի վըայ Սպահանում, նստում էին աւղանները: Նադիր-շահի հզօր ձեռքը միայն կարողացաւ մաքրել Պարսկաստանը աւղաններից: Այլ եւս ինչ հարկ կար, որ Աղա-Մամադշահը իւր զգոյշ ձեռքը միսէր օձերի բոյնի մէջ...:

Բայց մի անցք շտապեցրեց Աղա-Մամադշահին, թիֆլիսի աւելումից յետոյ, թողնել Շուշի բերդը եւ շտապել դէպի Պարսկաստան:

Այդ անցքը ոչ թէ Ղանդահարի եւ Հերաթի ապրատամբութիւններն էին, այլ Բուխարայի թաթառների յարձակումները Աղա-Մամադշահի նոր հիմնած պետութեան սահմանների վըայ: Եթէ Մակար վարդապետը դիմականար այդ, տարակոյս չկայ, որ նա Արրահամ Բէկնազարեանին այլ եւս Աւղանիստան չեր ուղարկի, այլ Բուխարայ կ'ուղարկէր թաթառներին զապելու համար:

Թաթառներին պատճելու նպատակով սկսուած արշաւանքը՝ Աղա-Մամադշահը սքօղեց Խորասանի ուխտագնացութեան պատրուակով: Այդ պատրուակի ներքոյ թագնուած էր մի այլ նպատակ եւս, այն է՝ ձեռք բերել Նադիր-շահի գանձերը, որ գեռ եւս մնացել էին նրա ժառանգների մօտ:

Այդ էր պատճառը, որ թիֆլիսից Պարսկաստան վերադառնալուց յետոյ, նա անմիջապէս դիմեց դէպի Խորասան:

Դեռ կենդանի էր կուրացեալ Շահ-Ռուխը — Նադիր-շահի թոռը: Երբ Աղա-Մամադ-շահը հասաւ Խորասանի պրազան քաղաքը, Մաշհադ, դժբախտ թագաւորը դիմաւորեց նրան եւ, նրա ձեռքից բռնելով, տարաւ իմամի սրբավայրը: Այստեղ Աղա-Մամադ-շահը իւր տղօթքը կատարելուց յետոյ, սկսեց Շահ-Ռուխից պահանջել Նադիր-Շահի գանձերը: Ծերունի թագաւորի բոլոր աղաշանքները ապարդիւն եղան՝ ամրելու Աղա-Մամադ-շահի ազահութիւնը: Նա սկսեց սարսափելի չարչարանքներով տանջել նրան: Իւր անգիւթիւնը այն աստիճանի հասցրեց, որ զրեց Շահ-Ռուխի դլսին մի պսակաձեւ շրջանակ եւ նրա մեջը հալած արձիճ լցնել տուեց: Այսպիսով ստացաւ նա այն խոշոր յակինթը<sup>1</sup>, որ մի ժամանակ զարգարում էր Ովրանգղէբայի թագի ձակառը, եւ որը բերել էր Նադիր-շահը Հնդկաստանից: Իւր կրած տանջանքներից մեռաւ Շահ-Ռուխը եւ նրա հետ հանդաւ աւշարեանների թագաւորութեան վերջին շառաւիղը<sup>2</sup>:

Խորասանից Աղա-Մամադ-շահը պատրաստվում էր գնալ թուխարայ թաթառներին պատժելու, երբ լսեց, որ ուուները նոր զօրքեր են ուղարկել Անդրկովկաս: Այստեղից ուղղակի դիմեց Շուշի, առանց պատերազմի զրաւեց, եւ այնտեղ սպանուեցաւ իւր երկու սպասաւորներից (1797 թ.):

Եւ այսպէս, Աբրահամ Բէկնազարեանի գործունէութիւնը Պարակաստանում սկսվում է մի առասպելից, այն

<sup>1</sup> Այդ նշանաւոր յակինթը մինչեւ այսօր պահվում է պարսից արքունիքում եւ, որքան յիշում եմ, կոչվում է «Գուրբի-գարիայ» — գոհհարի ծավ:

<sup>2</sup> «Պատմութիւն Պարսից», Մ. Դ. Թաղիադեանցի Ա. Հատ. Եր.

է Աւղանիստանի արշաւանքից, որ բնաւ պատմական հիմք չունի: Աղա-Մամադ-շահի օրերում մի այսպիսի արշաւանք տեղի չէ ունեցել:

Աւղանիստանի արշաւանքը տեղի է ունեցել ոչ թէ Աղա-Մամադ-շահի օրերում, որ նրա հերոսը երեւակայական Աբրահամ Բէկնազարեանը լինէր, այլ — նրա յաջորդ Փաթալի-շահի օրերում: Այդ ժամանակ Աւղանիստանի թագաւոր Զաման-շահը իւր ասպատակութիւններով սարսափի մէջ էր դրեւ ամբողջ Հնդկաստանը: Հնդկական թագաւորները մինը միւսից յետոյ ընկնում էին նրա զօրութեան առջեւ: Եւ որովհետեւ Զաման-շահի տիրապետութիւնները սաստիկ վնասում էին անգլիացների շահերին Հնդկաստանում, այդ պատճառով, անգլիական քաղաքագիտութիւնը յաջողեցրեց թէ հրանում՝ Փաթալի-շահին իւր զօրքերով շարժել դէպի Աւղանիստանի սահմանները, որպէս զի Զաման-շահը ստիպուած լինի թողնել Հնդկաստանը եւ վերադառնալ իւր երկիրը պաշտպանելու պարսիկներից: Այդ արշաւանքը կատարելու համար, մի քանի տարի շարունակ, Փաթալի-շահը ստանում էր անգլիացիներից օրեկան 1000 թուման ոսկիի:<sup>1</sup>

Ուր մնաց Աբրահամ Բէկնազարեանը, որը մինչեւ անգամ չգիտէ, որ իւր 10.000 սարվազով նուածած Աւղանիստանի տիրապետողները հասարակ խանէր չէին, այլ սարսափելի Զաման-շահն էր:

Փաթալի-շահի օրերում Բէկնազարեանները դարձեալ շարունակում են մնալ պարսից ծառայութեան մէջ, բայց թէ ի՞նչ է նրանց պաշտօնը, — այդ մասին որոշ յիշա-

<sup>1</sup> «Պատմութիւն Պարսից», Մ. Դ. Թաղիադեանցի Ա. Հատ. Եր. 222: ԳԱԶՄԻՔ ԿԱՐ.

տակութիւններ չկան “Գաղտնիք”-ի մէջ, միայն մի տեղում՝ կարդում ենք հետեւեալ մթին խօսքերը.

“Փաթալի-շահն իւր նախորդին պէս սիրեց եւ զիս (որդի Բէկնազարեանին) եւ հայրս (հայր Բէկնազարեանին): Վերջինս (հայր Բէկնազարեանը) թէեւ բագ մից թախանձանօք ազատութեան (?) հրաման ինդրեց առաջինից (Փաթալի-շահից) հայրենիք վերադառնալու՝ սակայն անկարելի եղաւ զայն ստանալ, քանզի Աքաս-Միրզան (թագաժառանգը) միշտ առարկում էր պատճառաբանելով. “Ես շատ հարկաւորութիւն ունիմ՝ քո (հայր Բէկնազարեանի) ներկայութեան, իմ՝ Հարաբաղում զործ դնելու նպատակներիս համար, իսկ շահական դիւանն՝ քո որդի Ալլահիներու (Ազրէս Բէկնազարեանի) ներկայութեան, զադունի նամակներ զրելու եւ խորհրդապահութեան համար”, (եր. 245):

“Գաղտնիք”-ի զիսաւոր հեղինակը — Ազրէս Բէկնազարեանը — արդէն սկսեց մահմեդական անունով ԱԼԼԱՀ ՎԵՐԴԻ ՀԻՇ ԿՈՉՈՒԹԻ: Այդ անունը պէտք է մտքում պահել, որովհետեւ դրա մասին կը խօսուի յետոյ:

Իսկ վերեւի մթին տողերը պարզելու համար, աւելորդ չեր ինի յիշեցնել ընթերցողին իմ հետազօտութեան դուրդ զիսի մի քանի տեղերը:

Մենք տեսանք, որ Բէկնազարեաններին բերեց Պարսկաստան Ազա-Մամադ-շահը: Մենք տեսանք, որ որդի Բէկնազարեանցի պարսկերէն սովորելը յիշեալ շահի պալատում տեւեց մի տարի միայն: Իսկ նրա ֆրանսիերէն սովորելը բանտարկեալ հայ-կաթոլիկ վարդապետից՝ նյուքան ժամանակ: Մենք ապացուցինք եւ այն, որ այդ

բոլորը առակաբանութիւն է, որովհետեւ Ապրես Բէկնազարեանը ոչ շահի պալատումն է եղել եւ ոչ պարսկերէն կամ ֆրանսիերէն է սովորել:

Սպանվում է Ազա-Մամադ-շահը եւ գահակալում է Փաթալի-շահը:

Այժմ Փաթալի-շահի դիւանը կարօտութիւն ունի մի տարուայ մէջ պարսկերէն եւ ֆրանսիերէն սովարած մի քսանամեայ պատանու — Ապրես Բէկնազարեանին... (Մակար վարդապետը միշտ մոռանում է նրա հասակը):

“Շահական դիւանը հարկաւորութիւն ունի նրա ներկայութեանը՝ գաղտնի նամակներ գրելու եւ և որ հրդական համար... Եւ այդ խօսքերը ովկ է ասում, — Աբաս-Միրզան, Պարսկաստանի երեւելի թագաժառանգը, որ իւր խորին քաղաքագիտութեամբ մատների վրայ էր խաղացնում իւր ժամանակի թէ ռուսաց եւ թէ եւրոպացւոց ներկայացուցիչներին, եւ որի գրանը այդ ժամանակ վիստում էին ոչ միայն երկրի ամենաազանդաւոր պարսիկ դպիրները, այլ շատ նշանաւոր հայ եւ եւրոպացի ծառայողներ:

Բայց ի՞նչն է ատիպել Մակար վարդապետին այս տեսակ երեխայական միամտութեամբ՝ իւր քսանամեայ Ապրես Բէկնազարեանին մացնել՝ շահ ական դիւանին՝ մէջ եւ պարսից թագաւորի բողոք գաղտնիքները նրա ձեռքը տալ: — Այդ հարցին կը պատասխանէ ինքը Ապրես Բէկնազարեանը:

Բերելով մի շարք նամակներ՝ որ Փաթալի-շահը ստացել է զանազան տեղերից, նա աւելացնում է.

“Յանկալի էր մեզ բոլոր նամակները նոյնութեամբ արտագրել այս տեղ (‘Գաղտնիք’-ի մէջ) բայց այդ սովորվին անկարելի էր, վասն զի հարկ էր հատորներ

կազմիլ մեծաթիւ քանակութեամբ։ Դիւանական թղթոց կարգադրութիւնն, գաղտնի նամակաց պատասխաններն, ներքին շրջաբերականների գրութիւններն եւ արտաքին յարաքերական թղթակցութիւններն յափշտակում էին մեր ժամանակի ամենամեծ մասը։ Ահա պատճառներն, յորոց ստիպեալ մենք համառոտում ենք յաճախ թղթակցութիւնները, բայց ոչ սակաւ։ Թողնում ենք յիշեցնել այն կասկածալի երկիւղը, որ պաշարում էր զմեզ այդպիսի գաղտնի նամակները (ո՞քան գործ է ածլում գաղտնի բառը՝ “Գաղտնիք,-ի մէջ), մանաւանդ պարսկերէնը, արտագրելու կամ համառոտագրելու ժամանակ (‘‘Գաղտնիք,-ի մէջ մոցնելու համար)։ Եթէ յայտնուէր մեր այդ գաղտնի ձեռնարկութիւնն Պարսիկ կառավարութեան՝ մահուան վտանգն պատրաստ էր մեզ համար նոյն ըովէին, (եր. 275)։

Կարգարով այդ տողերը, մարդ չգիտէ՝ ծիծառի թէ զարմանայ։ Միջմէ Փաթալի-շահը վէղերներ, վէքիւներ եւ այլ պաշտօնակատարներ չեւ ունեցել, որ իւր կառավարութեան բոլոր թէ ներքին եւ թէ արտաքին գործերը յանձնել էր մի որ եւ է Ազրես Բէկնազարեանի ձեռքը։

Փաթալի-շահը օրերից շատ ժամանակ չէ անցել։ Եթէ մի այսպիսի անձնաւորութիւն գոյութիւն ունենար, հարկաւ, չէր մոռացուիլ ոչ ժողովրդի յիշողութիւնից եւ ոչ պատմութիւնից։ Բաւական է կարգալ “Խամայի Մելքութիւնների” 266—273 երեսները, այնտեղ կարելի է գտնել՝ Փաթալի-շահի եւ նրա յաջորդների օրերելի գտնել։ Փաթալի-շահի եւ նրա յաջորդների օրերում, Պարսկաստանում յայտնի եղած, բոլոր հայազգի պաշտօնականների անունները, որ եռեսունից անցնում

է։ Այդ անունների ցանկում ոչ Ազրես Բէկնազարեանի եւ ոչ նրա հօր անունը կայ։

Եւ, վերջապէս, ինչպէս եղաւ, որ այդ մի զցյդ հայր եւ որդի Բէկնազարեանները, որոնք պարսից երեք թագաւորների՝ — Աղա-Մամադ-շահի, Փաթալի-շահի, Մամադ-շահի — եւ մի թագաժառանգի — Արա-Միրզայի մօտ այնքան մեծամեծ պաշտօններ էին վարում, եւ այդ թագաւորների ամենասիրելիններն էին, բայց ոչ մի աստիճան եւ ոչ մի տիտղոս չստացան։ Հայր Բէկնազարեանը ծառայում է 33 տարի (1795—1828), իսկ որդի Բէկնազարեանը 43 տարի (1795—1838), բայց երկուսից եւ ոչ մէկը որ եւ է աստիճան չէ ստանում։ Պարսից թագաւորները ախտղոսներ եւ աստիճաններ շնորհելու մէջ ժլատ չեն, այլ, ընդհակառակն, շատ առատաձեռն են։ Յիշեալ թագաւորների օրերում հայերը ստացան խիստ փայլուն եւ խիստ փառաւոր տիտղոսներ, ստացան եւ բարձր աստիճաններ։ Ես կը յիշեմ մի քանիսի անուններն միայն։

Մանուչար-խանը ստացաւ “մօհ հթամէ գովլէ, տիտղոսը, որ նշանակում է նեցուկ կամ սիւն պետութեան։ Դա Աղա-Մամադ-շահի թիֆլիսից տարած գերիններից էր, լնիկօլոփեանների տոհմից։ Պարսկաստանում այն աստիճան բարձրացաւ, որ Փաթալի-շահի օրերում վարում էր կասպից ծովի հարաւային նահանգների, Գիլանի, Մազանդարանի, Փոխարքայութեան պաշտօնը։ Իսկ Մամադ-շահի օրերում Սպահանի եւ ամբողջ պարսկական Արարիստանի փոխարքան գարձաւ։ Ուսուաց թագաւորը ուղարկեց նրան մի թանգարին, ականակուռ գաշցն։ Եւ մինչդեռ ուռսաց Պարսկաստանի լիազօր գեսպանը, կոմս Մէդդէմը, պատրաստ

վում էր այդ լնծան մատուցանել, նա արդէն մեռած  
էր (1847 թ.):<sup>1</sup>

Խոսրովի խանը ստացաւ “վալեն” տիտղոսը, որ  
նշանակում է տիրապետող իշխան, իւր չափազանց ու-  
ժեղութեան պատճառով՝ նա կոչվում էր եւ “շիր”,  
որ նշանակում է առիւծ: Դա նոյնպէս Աղա-Մամադ-  
շահի Թիֆլիսից տարած գերիներիցն էր, տէր Սամուելի  
որդին, Ղայթմազեանց տոհմից: 1838 թուին կարգուեցաւ  
փոխարքայ Փարսիստանի եւ խաղաղացրեց Սպահանի խռո-  
վութիւնները, որ տեղի ունեցան Փաթալի-շահի վախ-  
ճանուելուց յեայ:<sup>2</sup>

Սուլեյման-խանը, նոյնպէս լնիկօլօփեանների  
տոհմից, ստացաւ “սամբը-դօվլեն” տիտղոսը, որ նշա-  
նակում է սուր պետութեան: Դա մի նշանաւոր զօրավար  
էր, երկար ժամանակ վարեց Շիրազի, Բակորիայի, Հոռիս-  
տանի, Շուշլէրի եւ Դասփուլի փոխարքայութեան  
պաշտօնները<sup>3</sup>:

Այլ եւս չեմ յիշում իւսուֆ-խան “ըսփան-  
դիար”, ին (մարզպան) որ Արազստանի կուսակալն էր եւ  
Զօհրաբ խան “խազնադար-շահի արարին”, որ Փա-  
թալի-շահի փեսան եւ նրա պետական գանձարանի կա-  
ռավարիչն էր: Չեմ յիշում եւ մի քանի տասնեակ այլ  
հայերի անուններ, որ մեծամեծ պաշտօններ էին վարում:

<sup>1</sup> «Խամսայի Մելքոնթիւնները», եր. 270, 271: «Պատմութիւն Պարսից»  
Մ. Դ. Թաղիադեանցի հատ. Ա. եր. 213, 214, 261, 278: «Պատմութիւն  
Նոր Զուղայի», հատ. Ա. եր. 437—444:

<sup>2</sup> «Խամսայի Մելքոնթիւնները», եր. 271: «Պատմութիւն Պարսից»  
Մ. Դ. Թաղիադեանցի հատ. Ա. եր. 213—214: «Պատմութիւն Նոր  
Զուղայի», հատ. Ա. եր. 432, 437:

<sup>3</sup> «Խամսայի Մելքոնթիւնները», եր. 271: «Պատմութիւն Կոր Զու-  
ղայի», հատ. Ա. եր. 446:

Եւ զանազան տիտղոսներ էին կրում, — բայց կը յիշեմ  
մէկին, որ “ամիր-դիւանի խանական տիտղոսն էր կրում,  
որ նշանակում է պետական զիւանի զլսաւորը կամ  
պետը: Դա էր Աղա-Բահրամ ներքինին, որ մահմեգա-  
կանացած հայ էր: — Ահա դա էր “շահական-  
դիւանի”, զլսաւորը՝ եւ ոչ թէ երեւակայական Ապրես  
Բէկնազարեանը, որին Մակար վարդապետը զօրով մտցրել  
է Շահի զիւանի մէջ, որպէս զի այնտեղից “Գաղտնիք,,,-ի  
համար գաղտնիքներ ժողովէ...”

Թէ հայր եւ թէ որդի Բէկնազարեանները այն աս-  
տիճան տգէտ են Պարսկաստանի վերաբերութեամբ եւ այն  
աստիճան անձանօթ են իրանց ժամանակի անցքերի եւ  
անձինքների հետ, որ իրանք իրանց մատնում են, որ այդ  
մարդիկը Պարսկաստանը բնաւ չեն տեսել:

Բէկնազարեանները յիշեցնում են այն յայտնի ստա-  
խօսին, որ հիացած պատմում էր իւր բարեկամին, թէ  
որպիսի զարմանալի մժղուկներ, փոքրիկ սողոջներ եւ թի-  
թեռնիկներ տեսաւ մուգէօնում: Իսկ երբ բարեկամը  
նրանից հարցրեց. — Դու տեսա՞ր այնտեղ փղին: Նա  
պատասխանեց, — “Միթէ նա այնտեղ էր...”

Բէկնազարեանները նոյնպէս մժղուկներին տեսնում են  
Պարսկաստանում, իսկ այն հսկայ հայ փղերին, որոնք  
իրանց հզօր ուսերի վրայ էին տանում Պարսկաս-  
տանի կառավարութեան ծանրութիւնները, — դրանց  
չեն տեսնում:

Նրանք գիտեն, որ Աղա-Մամադ-շահի կանանցում  
երկու վրացի աղախիններ կային, մէկի անունը Էլիզա էր,  
միւսինը՝ Թամարա (եր. 230): Նրանք գիտեն, որ Աբաս-  
Միրզան մի վրացի լրտես ունէր, անունը Սուլի էր. գիտեն

<sup>1</sup> «Խամսայի Մելքոնթիւնները» եր. 270:

որ այդ Սուլին կրօնը փոխել էր, “Քեապա ուխտի էր գնացած եւ քեալպա ալայի Հայտար էր կոչուած” (Եր. 247): Նրանք գիտեն եւ այն, որ “Հարաբաղց Պարսկաստան փոխազրուած հայ գերեաց մէջ երեւելի եղան Հատրութեցի Յովսէփ Ներսէսեանցը եւ Փառուխ Ամիրխանեանցը, որոնք Արաս-Միրզայի հոգատարութեամբ ստացան լաւ կրթութիւն եւ պարսկերէն ուսում եւ մտան Շահական դիւանատունն գրազրութեան պաշտօնով: Սոքա հետզետէ այնպէս կատարելագործեցին այդ մասնաճիւղը(?) մինչեւ անգամ ստացան “Միրզայ, տիտղսուր<sup>2</sup>, որք կոչուեցան Միրզա-Եռուսուֆ եւ Միրզա-Փառուխ”, (Եր. 391): — Այդ բոլորը գիտեն Բէկնազարեանները, որովհետեւ ամեն մի ղարաբաղցի գիտէ, թէ ով է Միրզա-Փարրուխը, կամ ով է Միրզա-Իւսուփը, — գիտէ մինչեւ անգամ Մակար վարդապետը: Բայց այն անձինքը, որ խակապէս փառաւոր տիտղոսներ ստացան, նրանց մասին տեղեկութիւն չունի Մակար վարդապետը, եւ այդ պատճառով նրանց անունները չեն մտնում “Գաղտնիքնի մէջ:

<sup>1</sup> Այս տեսակ երեւակայական անունները հեշտ է ստեղծել: Բայց Բէկնազարեանները մի քանի տասնեակ տարիներ Պարսկաստանում ապրելով եւ պարսկական կրթութիւն ստանալով, գարձեալ չգիտեն, որ Քեարա գնացող ու խտաւորները “քալբալային” չեն կոչվում, որովհետեւ քեարան Մեքքայի սրբավայրն է. այնտեղ գնացող ու խտաւորները կոչվում են “հաջին”: Իսկ “քալբալային” կոչվում են Բաղդադի ու խտաւորները, որտեղ դրան են նահատակուած իմամների շերիմները:

<sup>2</sup> Ամենահասարակ աեղեկութիւնների մէջ անգամ Բէկնազարեանները ցոյց են տալիս իրանց խորին տղիտութիւնը: Պալայցլեզւում “Միրզա” բառը ափազու չէ, երբ նա անուան սկզբումն է դրվում. ասելով Միրզա-Փարրուխ, հասկացվում է զրագիր-Փարրուխ. այսպէս կոչվում են եւ ամենահասարակ գրագրները: Բայց “միրզան” բառը տիտղոս է դառնում, երբ անու ան վերջու մն է զրվում, որինակ, Արաս-Միրզա, որ նշանակում է Արաս-իշխան: Պարսից բոլոր արքայազնները այդ տիտղոսով են կոչվում, օրինակ՝ Զալալ-Միրզա, Գէրուզ-Միրզա, Մալիք-Ղասում-Միրզա եւայլն:

ինչ որ Մակար վարդապետը չգիտէ, այն չգիտեն եւ “Գաղտնիքնի մի զոյգ հեղինակները...”:

Դիմենք փաստերին:

Վերեւում արդէն յիշեցինք, թէ Բէկնազարեանների օրերում ինչ նշանաւոր հայազգիներ կային Պարսկաստանում, եւ ինչ բարձր պաշտօններ էին վարում: Եթէ խակապէս Բէկնազարեանները նյոնպիսի բարձր պաշտօններ էին վարում պարսից Շահերի Դռանը, որպիսին իրանք ցոյց են տալիս “Գաղտնիքնի մէջ, — այդ դէպքում, շատ տարօրինակ պէտք էր համարել, որ նրանք միւս հայազգի ծառայողների հետ յարաբերութիւններ չունենային եւ նրանց մասին մի որ եւ է յիշատակութիւն չանէին իրանց պատմութեան մէջ: Առիթներ շատ կային եւ այդ առիթները ես ցոյց կը տամ:

Ապրես Բէկնազարեանը իւր մի քանի ամիսների մէջ սովորած պարսկերէնով դառնում է Փաթալի-շահի գիւանի ոչ միայն ներքին գործերի ատենադպիրը կամ քարտուղարը, այլ — եւ նրա “արտաքին յարաբերական թղթակցութիւնների” խորհրդականն եւ թարգմանն է դառնում (Եր. 275): Դրա համար պէտք էր գիտենալ եւրոպական լեզուներ: Եւ որովհետեւ պարսից արտաքին յարաբերութիւնների մէջ ընդունուած լեզուն Փրանսերէնն է, — նա այդ լեզուն զարձեալ մի քանի ամիսներում սովորում է բանտարկեալ հայ-կաթոլիկ վարդապետից, հենց բանտի մէջ (Եր. 229)...:

Բայց Փաթալի-շահի արքունիքում այդ պաշտօնը կատարում էր ոչ թէ Ապրես Բէկնազարեանը, այլ մի ուրիշ նշանաւոր հայազգի, մի կատարեալ եւրոպական կրթութիւն ստացած գիւանագէտ, որ Դռան առաջին թարգմանը եւ, մի եւ նոյն ժամանակ, թագաւորի արտա-

քին գործերի խորհրդականն էր: — Դա էր Դաւիթ-Խան ՄԵԼՔ-Շահնազարեան Դէ-Շապուրը, որը Նազօլէօն առաջնի օրերում Փաթալի-շահի կողմից ուղարկուեցաւ Փարսիկ, իբրեւ լիազօր գեսպան<sup>1</sup>:

Դրան չեն ճանաչում Բէկնազարեանները:

Վախճանվում է Փաթալի-շահը եւ գահակալում է Մամադ-շահը: Այդ մասին հինգ տող միայն նուիրուած է երկհատոր «Գաղանիք»ի մէջ, այն եւս լի սխալներով:

“1834 թուին վախճանուեցաւ Փաթալի-շահն եւ հանդիսով թաղուեցաւ Շահերի յատուկ ղամբարանում<sup>2</sup>: Գահակալութեան կարգն թէեւ Մամատ-Միրզային չէր պատկանում” (Ենչու) սակայն սա յաջողեցաւ զան բարձրանալ որ եւ կոչուեցաւ Մամատ-շահ, (եր. 390):

Օրինաւոր ժառանգը հէնց Մամադ-Միրզան էր, այսինքն թագաժառանգ Արաս-Միրզայի որդին. նախ այն պատճառով, որ հանգուցեալ Փաթալի-շահը իւր կտակի մէջ նրան էր նշանակել գահակալ, երկրորդ, որ Պարսկաստանի թէ ոռուսաց եւ թէ անգլիացւոց ներկայացուցիչները նրան էին ճանաչում իբրեւ օրինաւոր ժառանգ

<sup>1</sup> “Պատմութիւն Պարսից”, Մ. Դ. Թաղիադեանցի հատ. Ա. եր. 223: Խանայի ՄԵԼՔ-Շահները, եր. 270:

<sup>2</sup> Փաթալի-շահը իւր մայրաքաղաքում, այն է՝ Թահրանում, չվախճանուեցաւ, այլ վախճանուեցաւ Սպահանում, ուր գնացել էր տեղային խոռովութիւններ խաղաղացներու: Նրա վախճանուելուց յետոյ Պարսկաստանում այնպիսի խռովութիւններ ծագեցան, որ ոչ ժամանակ չուներ հանդիսաւոր թաղման վրայ մասածելու: Հանգուցեալ մարմինը մի քանի օր թագցրին, յետոյ տարան թաղեցին զում կոչուած փոքրիկ քաղաքում, Մսումայի մզկիթում: Մեսրոպ Թաղիադեանցը, որ այդ ժամանակ Սպահանումն էր գտնվում, իւր “Պատմութիւն Պարսից”, հատ. Ա. եր. 232. 233, 235, ասում է. “Այլ ես զարմանամ արդարեւ զի ի բազմութենէ անտի թոշակաւոր դենպետաց եւ Մոլլայից Ասպահանայ չդտաւ: որ կարդայր զթաթա (հոգուոց), կամ զդամբարականն ի վերայ սորին (Փաթալի-շահի):

եւ ամեն կերպով աշխատում էին, որ հանգուցեալ թագաւորի կտակը կատարուած լինի:

Բայց «Գաղանիք»ի հեղինակը չփիտէ, թէ այդ ժամանակ՝ գահակալութեան առիթով ինչ խռովութիւններ ծագեցան Պարսկաստանում: Եթէ, իրաւ, նա մի որ եւ է պաշտօն էր վարում Փաթալի-շահի Դրանը, այդ խռովութիւնները պէտք է հետաքրքրէին նրան, մանաւանդ այն պատճառով, որ հայ պաշտօնակալները այդ միջոցին մեծ գեր կատարեցին:

Փաթալի-շահը, բազմացնելով իւր կանանց թիւը, բազմացրեց մի եւ նոյն ժամանակ իւր որդիների թիւը: Դեռ իւր կենդանութեան ժամանակ նրանց Պարսկաստանի գանազան նահանգների փոխարքաներ կարգեց: Երբ վախճանուեցաւ, որդիներից իւրաքանչեւրը աշխատում էր թափուր մնացած գահի ժառանգը ինքը լինել: Մի քանիսը իրանց կառավարութեան ներքոյ գտնուող նահանգներում իրանց թագաւոր հրատարակեցին: Միաժամանակ, զանազան թագաւորների անկարգութիւններից, երկիրը ընկաւ կատարեալ անիշխանութեան մէջ: Ներքին կոհւները, երկպառակութիւնը յուզման մէջ էին պահել ամբողջ Պարսկաստանը: Ամեն կողմում տիրում էր արիւնչեղութիւն եւ ասպատակութիւն: Ամեն մի ժառանգ աշխատում էր կաշառքով եւ խռոտումներով իրան թագաւոր Ճանաչել տալ: Թէ հրանում Ալիշահ-Միրզան բացարեց հօր հարուստ գանձերը եւ մի օրուայ մէջ երկու միլիոն թուման բաժանեց գանազան ազգեցութիւն ունեցող անձինքների, որ իրան թագաւոր Ճանաչեն: Պարսից աւագանին, Ռամազանի տօնին, հազցրեց նրան արքայական ծիրանին, նստացրեց գահը եւ թագաւոր հրատարակեց<sup>3</sup>:

<sup>1</sup> “Պատմութիւն Պարսից”, Մ. Դ. Թաղիադեանցի հատ. Ա. եր. 231—257:

Այդ անկարգութիւնների միջոցին, օրինաւոր թագաժառանգը, Մամադ-Միրզան, գտանվում էր Թաւրիգում, որտեղ վարում էր Ատրպատականի փոխարքայութեան պաշտօնը: Ուուսաց եւ անգլիացւոց քաղաքականութիւնը սաստիկ մաքառման մէջ էր, իւրաքանչիւրը աշխատում էր, որ իւր միջամտութեամբ եւ ջանքերով թագաժառանգին գահ բարձրացնէ, որ նրան պարտաւորացնէ:

Բայց Թէհրանում արգէն գահի վրայ բազմած էր Ալիշահ-Միրզան:

Թագաժառանգին Թէհրան տանելու եւ ինքնակոչ թագաւորին այնտեղեց վանելու համար, ոչ բաւական զինուորական ոյժ կար եւ ոչ նիւթական կարողութիւն: Արքունի գանձարանը գրաւել էր Ալիշահ-Միրզան եւ իւր կեղծ դիրքը պահպանելու համար շռայլաբար վատնում էր:

Պարսկաստանի ուուսաց դեսպանը, կոմս Սիմօնովիչը, եւ անգլիացոց դեսպանը, Սըր Ֆան Կամբել, այդ միջոցին Թաւրիգումն էին գտնվում, թագաժառանգի մօտ: Ուուսաց դեսպանը կամեցաւ Անդրկովկասից 7000 զինուոր բերել տալ՝ թագաժառանգին Թէհրան տանելու համար: Բայց անգլիական ներկայացուցիչը խափանեց այդ ձեռնարկութիւնը: Ատրպատականի պարսկական զօրքերը շարժելու համար միջոցներ չկային: Այդ ծախքը իւր վրայ առեց անգլիական դեսպանը, այն պայմանով, որ պարսից զօրքերի ընդհանուր հրամանատարը լինի մի անգլիացի զինուորական: Առաջարկութիւնը ընդունուեցաւ: Պասմօրը հրամանատար կարգուեցաւ, իսկ Սըր Հենրի Արթուր եւ Շինշանակուեցան զօրապետներ: Այդ պատրաստութեամբ թագաժառանգը Թաւրիգից ճանապարհ ընկաւ դէպի Թէհ-

հրան: Նրա հետ էին ուուսաց եւ անգլիական դեսպանները: Դեռ երեք օրուայ ճանապարհ մնում էր՝ մինչեւ կը հասնէին պարսից աթոռանիստ քաղաքը, առաջինը, որ Թէհրանից իւր զօրքերով դուրս եկաւ թագաժառանգի առջեւ եւ ընդունեց նրան, — էր հայազգի Խոսրովիան-Շիրը, — Աւիւծը: Յետոյ Ոաշտից իւր հեծելազօրքով վրահասաւ «Մօհթամէդ-Դօվլան», — պետութեան նեցուկը: Նա էր հայազգի Մանուչար խանը, որ իւր անբաւ հարստութիւնից 80.000 թուման դրեց թագաժառանգի առջեւ, որովհետեւ նա իւր սկզբնական ծախքերի համար անգամ բաւական փող չունէր:

Թէհեւ Ալիշահ-Միրզան քսան հազար զինուորներից բազացած մի զօրախումբ ուղարկեց ընդդիմադրելու իւր ախոյեանին, բայց նրանք, տեսնելով թագաժառանգի ահարկու զօրութիւնը, առանց պատերազմի անձնատուր եղան: Նոր թագաւորը խոստացաւ ներել իւր հակառակորդներին: Այդ ժամանակ անձնատուր եղաւ եւ Ալիշահ-Միրզան: Նա ցած իջաւ գահից եւ այն թագը, որ բոնութեամբ յափշտակել էր ցանկանում, իւր ձեռքով տարաւ դրեց արքունի գանձարանը, եւ խոնարհուեցաւ Ճակատագրի առջեւ...:

Այդ բոլորը կատարուեցաւ, բայց «Գաղտնիք»ի հեղինակը, որ անձամբ նոր թագաւորի մօտ էր, ոչինչ չտեսաւ... ոչինչ չիմացաւ... Նա չտեսաւ եւ այն, որ լիշեալ խոսովութիւնների միջոցում, հայազգի գեներալ Դաւիթիթիւնների միջոցում, հայազգի գեներալ Դավիթիթիւններին Սագինեանի քաջութիւնը եւ թնդանօթները միայն կարողացան պահպանել Սպահանը մի սոսկալի ապստամբական պահպանների միայն պիտի զոհ գնային տեղային բութիւնից, որին ոչ միայն պիտի զոհ գնային տեղային

<sup>1</sup> «Պատմութիւն Պարսից» Մ. Դ. Թաղիազեանցի հատ. Ա. եր. 246 - 257:

Հայերը, այլ Պարսկաստանը պիտի ենթարկուէր, մի այլ թագաւորի բռնապետութեանը՝ հանգուցեալ Փաթալիշահի որդիներից, որին շատ գժուար պիտի լինէր հեռացնել իւր գահից<sup>1</sup>:

Ահա ի՞նչու վերեւում ես ասեցի, թէ առիթներ շատ կային, որ Բէկնազարեանները խօսէին՝ իրանց ժամանակում Պարսկաստանում գտնուած նշանաւոր հայազգի պաշտօնականների մասին, որոնք այնքան մեծամեծ գործեր կատարեցին, որոնք ոչ սակաւ նպաստեցին ազատելու տատանուող պետութիւնը իւր ահեղ կործանումից: Եւ եթէ Բէկնազարեանները լուում են, — այդ արդէն պարզ ապացոյց է, որ նրանք ոչ Պարսկաստանումն են եղել եւ ոչ պարսից թագաւորների մօտ որ եւ է պաշտօն են կատարել: Որովհետեւ նրանք բոլորովին մանր եւ չնչին բանների վրայ ուշագրութիւն են գարձնում, իսկ պատմական խոշոր երեւոյթները չեն տեսնում: Մուգէօն այցելող ստուխօսի նման՝ մժղուկներին տեսնում են, իսկ փղերին չեն նկատում...:

Մի այլ փաստ, որի մէջ երեւում է Բէկնազարեանների կատարեալ ագիտութիւնը Պարսկաստանի վերաբերութեամբ:

Հայր Բէկնազարեանը հիւանդանում է: — Ո՞րտեղ: Թաւրիղում: Զմոռանանք այդ: Որդի Բէկնազարեանը այդպէս է գրում իւր հօր հիւանդութեան մասին.

“Հայրս երկու ամսից ի վեր հիւանդ էր ընկողմած անկողնում: Հիւանդութիւնն ջերմի ամենասաստիկ տեսակիցն էր. այսու ամենայնիւ Շահի ըժիշկներն յուսադրում էին որ կառողջանայ: Թէ որքան խնամք

<sup>1</sup> “Պատմութիւն Պարսից”, Ա. Դ. Թաղթագեանցի հատ. Ա. Եր 232, 2+2, 265:

տարաւ բարեխնամ՝ Փաթալի-Շահն հօրս առողջութեան համար՝ անկարելի է մի ըստ միոջէ նկարագրել այստեղ, (Եր. 383):

Յիշեալ ասացուածների մէջ նկատողութեան արժանի երկու կէտ կայ. առաջինը, արդեօք կարող էին շահի բժիշկները այցելել հիւանդին, երկրորդ, կարող էր բարեխնամ՝ Փաթալի-Շահը հոգ տանել հիւանդին: Ու առաջինը կարելի էր եւ ոչ երկրորդը: Ի՞նչու: Որովհետեւ հիւանդը դրած էր թաւրիղում, իսկ թէ շահը եւ թէ նրա բժիշկները կենում էին թէհրանում:

“Գաղանիք, ի մէջ միշտ շփոթում են թաւրիղը թէհրանի հետ, եւ պարսից շահերի մօտ ապրող Բէկնազարեանները չփառեն, որ թաւրիղը պարսից աթոռանիսա քաղաք չէր, որ Փաթալի-շահը այնտեղ լինէր եւ խնամք տանէր հիւանդին: Գոնէ Բէկնազարեանները գիտենային, թէ ով էր շահի բժիշկը:

Թէ Փաթալի-շահի օրերում եւ թէ նրա յաջորդ Մամադ-շահի օրերում պարախ Դուան արքունի բժիշկը հայազգի Դաւիթ-խան Մկրտչեան կարպեցին էր, ասպետ եւ նշանակիր Արեգական եւ Առիւծոյ<sup>1</sup>: Գոնէ յիշէին այդ նշանաւոր մարդու անունը, որ, բացի բժշկութիւնից, պարսից Դուան ազգեցութիւն ունեցող անձինքներից մէկն էր:

Վերջապէս, Հայր Բէկնազարեանը վախճանվում է (1828 թ.) եւ նրա մարմինը հանդիսաւոր կերպով թաղվում է թաւրիղից հայոց եկեղեցու գաւթում: Որդին այդպէս է նկարագրում հօր թաղման հանդէսը:

“Ես չեմ կարող նկարագրել այս տեղ այն դառն վշտերը եւ անփարատելի ցաւերը, զորս պատճառեց

<sup>1</sup> “Խամապի Մելիքութիւնները” Եր. 270: “Պատմութիւն Պարսից”, Ա. Դ. Թաղթագեանցի հատ. Ա. Եր. 250:

ինձ հօրս մահն։ Բայց այսու ամենայնիւ սակաւ միսիթարութիւն չզգացի յուղարկաւորութեան հանդիսի փառաւորութեամբն, որը կարգադրած էր քարեխնամ՝ Արա-Միրզան (պարսից թագաժառանգը)։ Յուղարկաւորութեան հանդէսն կատարուեցաւ զինուորական կարգաւ, ուր ներկայ էին շատ քարծր զինուորականք, ինքն Արա-Միրզան եւ բոլոր հայ ժողովուրդն (հայ հոգեւորականներ չկան)։ Հօրս մարմինը ամիտիուեցաւ ժաւրիզի Հայոց եկեղեցւոյ գալթում, կից Մելիք-Արուլեան մելիք ժառանգ Առատամ-բէկի գերեզմանին,, (եր. 390)։

Թողնենք այն, որ պարսից կրօնի տրամադրութեամբ թաղումը նկատվում է իրրեւ մի հոգեւոր խորհուրդ եւ նրա վրայ զինուորական հանդէսներ չեն կատարվում։ Թողնենք եւ այն, որ Արաս-Միրզան, պարսից թագաժառանգը, որ աւելի մեծ ազդեցութիւն ունէր, քան թէ թագաւորը, որքան եւ հայասէր լինէր, բայց դարձեալ իրան թոյլ չէր տայ Աբրահամ Բէկնազարեանի թաղման հանդէսին ներկայ լինել։ — Նկատենք միայն այն, թէ ինչ մի տարաբախտ ժամանակ էր 1828 թուականը Պարսկաստանի համար, արդեօք Արաս-Միրզան ժամանակ ունէր Աբրահամ Բէկնազարեանի թաղման հանդէսներով զբաղուելու, երբ նոյն իսկ Պարսկաստանը մահուան տագնապի մէջ էր, երբ նոյն իսկ Պարսկաստանը մօտ էր իւր գերեզմանին...։

Այդ այն ժամանակն էր, որ Արաս-Միրզայի միրելի զօրքերը խորտակուել էին Պասկեւիչի առջեւ, իսկ ոռւսաց յաղթական զօրքերը դրաւել էին Ատրպատականի հայաբնակ գաւառները։ Այդ այն ժամանակն էր, որ ժաւրիզը, Արաս-Միրզայի աթոռանիստ քաղաքը, նոյնպէս գրաւուած

էր ոռւսաց զօրքերով։ Այդ այն ժամանակն էր, որ գուխուրդանեան եւ ապա թուրքման-չայի գաշնադրութիւններից յետոյ, Արաս-Միրզայի եւ Պասկեւիչի մէջ, Պարսկաստանը կորցնում էր իւր Անդրկովկասեան գաւառները, Երասխը դառնում էր սահմանագիծ, եւ Պարսկաստանը ենթարկվում էր քսան միլիօն զբոան պատերազմական տուգանքի։ Եւ, վերջապէս, այդ այն ժամանակն էր, որ Պարսկաստանը, կորցնելով իւր ամենաբարեբեր երկրները, կորցնում էր, միեւնոյն ժամանակ, իւր ժողովրդի մի արգիւնաւոր մասը — հայերն։ Հազարոս Հազարեանը ամենայն փութաջանութեամբ Պարսկաստանի հայ գաղթականների ստուար խումբերը անց էր կացնում դէպի Երասխի միւս կողմը, ոռւսաց հողի վրայ։ Եւ հայերի գաղթականութիւնը աւելի հոգսեր էր պատճառում Արաս-Միրզային, քան թէ պարսկական երկրների կորուստը։ — Այդ խառնաշփոթ, տագնապալի ժամանակներում, որ տեւեց երկու տարի (1827—1828) ծիծաղելի եւ աւելի քան ծիծաղելի կը լինէր մտածել, թէ Փալթալի-շահը զբաղուած էր մի որ եւ է Աբրահամ Բէկնազարեանի հիւանդութիւնով, իսկ Արաս-Միրզան նրա թաղման հանդէսով... քանի որ, նրանք շատ եւ շատ ուրիշ վերքեր ունին դարմանելու...։

Ես թաւրիզը շատ անգամ եմ տեսել, իսկ վերջին ժամանակներում, երկու տարի շարունակ, տեղային հայոց դպրոցում վարժապետութեան պաշտօն էի վարում։ Եկեղեցին կից է դպրոցին։ Շատ անգամ հետաքրքրուել եմ այդ եկեղեցու գաւթում դրած գերեզմաններով, որոնց թուում գտնվում է եւ իմ հարազատը... Այնտեղ ես գտայ Մեսրոպ թաղիազեանցի կնոջ գերեզմանը՝ իւր մարմարիօնի շերիմով եւ անբախտ բանաստեղծի սրտառուչ ԳԱՂՅԱՒՔ ԶԱՅՐ.

տապանագրով։ Այնտեղ դրած են եւ շատ եւրոպացիների գերեզմաններ, զանազան ազգութիւններից, որոնք առանձին գերեզմանատուն չունենալով, եկեղեցու գաւթումն են թաղուած։ Բայց Աբրահամ Բէկնազարեանի գերեզման չկայ այնտեղ, եթէ լինէր, մի այնպիսի նշանաւոր անձի գերեզմանը չէր մոռացուի։

Համարեա մի եւ նոյն ժամանակներում, երբ հայր եւ որդի Բէկնազարեանները Պարսկաստանումն էին, այնտեղ էր եւ Մեսրոպ Թաղիազեանցը, նախ Թաւրիզում, յետոյ գնաց Սպահան, իսկ այնտեղից Հնդկաստան։ Իւր Պատմութիւն Պարսից, կոչուած զրքի մէջ՝ Թաղիազեանցը խօսում է պարսից վերջին թագաւորների ծառայութեան մէջ յայտնի եղած նշանաւոր հայազգի պաշտօնականների մասին։ Ի՞նչպէս զանցառութեան կը տար Թաղիազեանցը Բէկնազարեանների նման երեւելիներին, որոնք, ինչպէս ցոյց է տալիս “Գաղտնիք”ը, Աղա-Մամադշահի, Փաթալիշահի, Աբաս-Միրզայի եւ Մամադշահի, — այդ երեք թագաւորների եւ մի թագաժառանգի ոչ միայն սիրելիներն էին, այլ նրանց կառավարութեան ամենազաղտնի թելերը իրանց ձեռքումն ունեին։

Ես ինքս, իբրեւ պարսկաստանցի, հետամուտ եմ եղել հաւաքելու Պարսկաստանում յայտնուած հայազգի պաշտօնականների կենսագրութիւնները, բայց Բէկնազարեանների անուանը երբէք չեմ հանդիպել։ Եթէ այդ անձինքը գոյութիւն ունենային, իրանց բարձր գիրքով, անկարելի է, որ բոլորովին անհետ լինէին եւ ոչ մի յիշտակ չժողնէին Պարսկաստանում։

Նոյն իսկ Գաղտնիքի մէջ Բէկնազարեանները պատած են մի տեսակ անթափանցիկ մայլով, եւ պարզ չէ երեւում, թէ այդ մարդիկը ի՞նչ պաշտօն էին վարում

պարսից թագաւորների Դուանը։ Հայրը զինուորական է։ Բայց զինուորականները, ինչպէս ամեն պետութեան մէջ, նոյնպէս եւ Պարսկաստանում, զանազան աստիճաններ ունին։ Արդեօք հայր Բէկնազարեանը սուլթան էր, եավար էր, սարհանգ էր, սարթիփ էր, միր-փանջ էր, սրփահ-սալար էր, — ի՞նչ էր, դրանք են պարսից զինուորական աստիճանները։ Նա մինչեւ անգամ խանութեան տիտղոս չունի։ Բայց յանկարծ տեսնում ենք նրան 10.000 զինուորների հրամանատար... Որդի Բէկնազարեանը պարսից շահի “Գաղտնին ամակագիր»։ Այս տեսակ պաշտօն չկայ Պարսից թագաւորների արքունիքում։ Ինչպէս ամեն թագաւոր, նոյնպէս եւ պարսից թագաւորը, ունի զանազան կոչումներով եւ զանազան բաժանմունքներով վէզիրներ (մինիստրութիւններ) եւ իւրաքանչիւրի պարապմունքը որուցուած է։ Իսկ Ապրես Բէկնազարեանը միշտ մնում է Ապրես, ոչ մի տիտղոս չէ ստանում, բայց, մի եւ նոյն ժամանակ, կառավարում է պարսից թագաւորների ամբողջ պետական բաժան դիւանը...։

Ինչո՞ւ Մակար վարդապետը չէ կամեցել իւր ստեղծած Բէկնազարեաններին մի որ եւ է տիտղոս տալ։

Շատ պարզ է՝ թէ ինչո՞ւ։ Եթէ, օրինակ, Մակար վարդապետը կոչէր Աբրահամ Բէկնազարեանին՝ “Իբրահիմ-խան սարթիփ», — գեներալ-Աբրահամ-խան, — իսկ նրա որդի Ապրես Բէկնազարեանին՝ պարսկական անունով՝ “Աֆրիս-խան-ամիր-դիւանիսայի-ազամ” այսինքն՝ Ապրես-խան-պետ-բարձր-դիւանի, (որպէս եւ համարում է նրան Մակար վարդապետը) — այդ գէպքում Բէկնազարեանները շատ կը խոշորանային եւ աչքի կը լինէին, այնուհետեւ դժուար կը լինէր նրանց թագցնել։ Իսկ Մակար

վարդապետը կամեցել է երկու նպատակի միանդամբց հասնել, մի կողմից՝ աշխատել է թէկնազարեաններին այնպիսի երեւակայան պաշտօնների մէջ մայնել, որ կարողանան “Գաղտնիք”, ի համար նիւթեր մատակարարել, իսկ, միւս կողմից՝ աշխատել է նրանց պահել փոքրութեան մէջ, որ յետոյ հեշտ լիներ կորցնել նրանց, որ հետքերը չերեւան, որպէս զե անկարելի լինի ստուգել՝ արդեօք այդպիսի անձնաւորութիւններ գոյութիւն ունեցել են, թէ ոչ:

Զնայելով Մակար վարդապետի բոլոր նախազդուշութիւններին, “Գաղտնիք”, ի մէջ անդիտակցաբար սպրտած են այնպիսի յիշատակութիւններ, որոնք ոչ միայն երեւան են հանում թէկնազարեանների ով կամ ինչ պաշտօնի տէր մարդիկ լինելը, այլ, մի եւ նոյն ժամանակ, առաջ են բերում անթիւ հակասութիւններ՝ այն բոլոր փաստերի նկատմամբ, որոնց վերայ հիմնուած է “Գաղտնիք”, ըստ որոնք այդ գրքի բովանդակութիւնն են կազմում:

Ժամանակ է լուծելու “Գաղտնիք”, ի գաղտնիքը եւ ցոյց տալու այդ գրքի մի զյու երեւակայական հեղինակների ով լինելը:

Մակար վարդապետը ցանկացել է, որ “Գաղտնիք”, ի զյու հեղինակները բնիկ ղարաբաղցիներ լինեն: Նա որոնել է “Խամայի Մելքոնթիւնների”, 270—272 երեսներում նշանակուած Պարսկաստանի հայագիտ պաշտօնակաների ցուցակը: Նրանց թուում գտել է երկու ղարաբաղցիների անուններ: Դրանցից մէկը մի ներքինի է Փաթալի-շահի կանանցում, Աղա-հրբահիմ անունով, իսկ միւսը՝ Մամադ-շահի կնքապահն է, Ալահվէրդի բէկ անունով: Երկուսն եւ քրիստոնէութիւնը ուրացած եւ մահմեղականութիւն ընդունած հայեր են:

Բայց Մակար վարդապետը, իւր վրայ վստահ լինելով, թէ նրանց կրօնափոխութիւնը կարող է ծածկել եւ իւր նպատակներին ծառայեցնել, — մէկին, Աղա-հրբահիմ ներքինին, անուան մօաւորութեան համար, դարձրել է Արքահամ թէկնազարեան, իսկ միւսին Ալահվէրդի բէկին՝ դարձրել է նրա որդի Ապրես թէկնազարեան: Մէկը “Գաղտնիք”, իսկ միւսը՝ նրա շարունակողը եւ վերջացնողը:

Բերենք “Գաղտնիք”, ի վկայութիւնը.

“Մի օր հայրս ներկայացաւ Շահին — զրում է որդի թէկնազարեանը — եւ նրաժեշտ տուաւ զինուորական ծառայութիւնից, պատճառաբանելով, թէ ինքն արդէն ծերացած էր եւ պէտք ունէր հանգստանալու: Փաթալի-Շահն նախ շնորհակալութիւն յայտնեց հօրս, սորա Պարսից մնատուցած ծառայութեանց համար, ապա նշանակեց ցման քաւարար թոշակ եւ ապա տոյն խօսքերով ներքին ապ եւ ութիւնը յանձնեց հօրս. “Յաճախ անկարգութիւններ են ծագում մեր անպետան ներքինեաց եւ կանանց մէջ. վասն որոյ մենք ցանկանում ենք քեզ նման մի ազդու մարդ ներքին ապ եւ ունենալ, որով կը դադարին ամեն անկարգութիւն եւ խոռվութիւն: Մեր օրինաց նկատմամբ ներքինապետութիւնն մեծ եւ պատուալոր պաշտօն է, քանզի շահական ներքին պատուոյ հսկողութիւնն է եւ հաւատարմապահութիւնն: Նոյնպէս մեր օրէնքն արգելում է վստահիլ այդ պաշտօնն ըներքինացած մարդոյ. բայց որովհետեւ ժամանակն արդէն զծեզ ներքինացրած է, մենք այնպէս կը հոչակենք, որ մենք նախ զծեզ ներքինացնել տուած եւ ապա ձեզ յանձնած ենք այս պաշտօնը, (Եր. 309):

Այդ քաղուածքի մէջ երկու նկատողութեան արժանի կէտ կայ։ առաջինը, որ Մակար վարդապետը թագյնում է Աբրահամ թէկնազարեանի մահմեդականութիւն ընդունելը եւ դրա վրայով լուութեամբ է անցնում, երկրորդը, որ թագյնում է նրա ներքինիամնալն, այսինքն՝ խզուին։ Առանց այդ երկու պայմանների, որ օրէնքի նշանակութիւն ունին պարսից պալատում, անկարելի է ներքինի կամ ներքինապետ լինել եւ շահի պալատը մտնել, որքան եւ ծեր լինէր մի մարդ։

Բայց Մակար վարդապետը ստիպում է Փաթալիշահին, հակառակ իւր կրօնի եւ պարսից արքունիքի աւանդական օրէնքների, մի խոշոր սուտ հրատարակել։ «Մենք այնպէս կը հռչակենք, որ մենք նախ զձեզ ներքինացնել տուած եւ ապա ձեզ յանձնած ենք այս պաշտօնը...» Որքան ել ցանկանար Փաթալիշահը, չէր կարող այդ սուտը հռչակել, որովհետեւ ներքինիացնելու ծէսը գաղտնի չէ կատարվում, այլ կատարվում է հանդիսաւոր կերպով, բժիշկների եւ վկաների ներկայութեամբ։

Բայց Մակար վարդապետի միամտութեան ծիծաղելի կողմն այն է, թէ ի՞նչ կարօտութիւն ունէր հզօր Փաթալիշահը, որ իրան թոյլ տար՝ այս տեսակ աչքակապութիւններ անել մի որ եւ իցէ Աբրահամ թէկնազարեանի վերաբերութեամբ, — այն Փաթալիշահը, որի հարուստ կանանցը լցուած էր ուրիշ աւելի նշանաւոր հայագի ներքինիներով եւ ներքինապետներով, որոնց ոչ միայն խզել էին տուած, այլ եւ — մահմեդականացրել էին։ Բաւական է միայն ցոյց տալ նախորդ դլասում յիշած Մանուչար-խանին, որ նոյնպէս մի ժամանակ ներքինապետ էր Փաթալիշահի կանանցում, — Խոսրով-խանին, որ նոյնպէս ներքինապետ էր Փաթալիշահի կանանց

յում<sup>1</sup>։ — Ներքինիներ եւ ներքինապետներ էին նաեւ Աղա-նաղուրը, միւս Աղա-Նաղուր երեւանցին եւ Աղա-Բահրամը<sup>2</sup>։ Այդ դժբախտները՝ ամենքը մահմեդականացրած հայեր էին...»

Փաթալիշահը ունէր երեքհարիւրի չափ կանայք եւ հազարից աւելի պալատական նաժիշտներ եւ Հարճեր։ Այդ բազմութիւնը կառավարելու համար, ի հարկէ, պէտք էր ներքինիների եւ ներքինապետների մի ստուար պաշտօնէութիւն, եւ նրանցից շատերն հայեր էին, կամ Աղա-Մամադ-շահի տարած գերիներից, եւ կամ այն գերիներից, որ տարուեցան ոռուս-պարակական վերջին պատերազմներում, Փաթալիշահի ժամանակ։ Գերին պարակական օրէնքով անհատ չէ, այլ իր է։ Տէրը կարող է նրա հետ ամեն կերպ վարուել։ Այդ էր պատճառը, որ շատերին ներքինիացրին։

Փաթալիշահի Աղա-Իբրահիմ ներքինին — «Գաղանիք, ի Աբրահամ թէկնազարեանը — Աղա-Մամադ-շահի Ղարաբաղից տարած գերիներից էր։ Եւ նրան խզել էին ոչ թէ ծերութեան հասակում, այլ մանկութեան հասակում։

<sup>1</sup> Թէ Մանուչար-խանը եւ թէ Խոսրով-խանը թէեւ պետական խոշոր պաշտօնականներ էին, եւ երկուսն էլ ունէին անբաւ հարստութիւն, բայց հայութեան համար կորած մարդիկ էին։ Մանուչար-խանի հարստութիւնը զանազան պարսիկների կոկորդն անցաւ, եւ մեռնելուց յետոյ նրա մարմնը տարուեցաւ Պատմ. քաղաքը, թաղուեցաւ Մասումայի հռչակաւոր մղկիթում, որտեղ քրած էր եւ Գաթալիշահի շիրիմ։ Հանգուցեալի քեռորդի իշխան Միրզա-Դաւթիթ-խան Մելիքեան, մի փառաւոր մատուռ կանգնեցրեց նրա գերեզմանի վրայ, եւ մշտական թոշակով կարգեց այնտեղ աղօթող մօլլաներ, որ միտ Պօրան կարդային։ («Պատմութիւն Նոր Զուղայի», հատ. Ա. 437—444.) Խոկ միւսը, Խոսրով-խանը, որ վախճանուեցաւ 1857 թուին, իւր բոլոր հարստութիւնը եւ գիլանում գնած գիւղերն ու կարուածները կտակեց պարսից ներկայ շահին («Պատմ. Նոր Զուղայի», 432—437)։

<sup>2</sup> «Խամսայի Մելիքութիւնները», եր. 270։

Պարսկաստանում ներքինիացնելը կատարվում է երկու նպատակով։ մէկը՝ քաղաքական նպատակով, որ նա ժառանգներ չթողնէ, ինչպէս, օրինակ, Աղա-Մամադ-շահը ներքինիացրած էր, — միւսը՝ հարեմական նպատակով։ Թէ՛ առաջինը եւ թէ երկրորդը կատարվում են մանկութեան հասակում, երբ մանուկը տակաւին անչափահայս է։

Եւ այդ ընդունուած սովորութիւնների համեմատ, տարակոյս չկայ, որ Աբրահամ Բէկնազարեանը պէտք է ներքինի դառնար նոյն հասակում, որ փոքր առ փոքր վարժուելով, կանանցի կարգերի հետ ծանօթանարով, այնքան մեծանար, որ վերջը մինչեւ ներքինապետի աստիճանը բարձրանար։

Այն հանգամանքը, — այսինքն Աբրահամ Բէկնազարեանի մանկութիւնից Փաթալի-շահի կանանցի մտնելը եւ այստեղ ներքինի լինելը, — միանգամայն ոչնչացնում է «Գաղտնիք»ի ամբողջ շինուածքը եւ իսպառ հերքում է այն բոլոր երեւակայական սխրագործութիւնները, որ այդ գրքում կապուած են Ա. Բէկնազարեանի անձնառութեան հետ։

Ինչո՞ւ։

Նրա համար որ, Փաթալի-շահի կանանցի Աղա-իբրահիմը մի յայտնի անձնաւորութիւն է։ Նա, ինչպէս վերեւում յիշեցի, Աղա-Մամադ-շահի Հարաբաղից 1795 թուին տարած գերիներից էր։ Այդ թուականում նա դեռ 10—15 տարեկան մանուկ էր։ Յետոյ ներքինի դարձաւ։ Այժմ «Գաղտնիք»ից բերած վկայութիւնից հաստատվում է, որ Աբրահամ Բէկնազարեանը եւ յիշեալ Աղա-իբրահիմ ներքինին մի եւ նոյն անձնաւորութիւններն են։ Եթէ այդպէս է, ուրեմն ինչպէս կարող էր նա 1680 թուականներում աշակերտած լինել դանձասարի

Ներսէս կաթողիկոսի մօտ եւ «Գաղտնիք»ի համար պատմական նիւթեր ընդօրինակել<sup>1</sup>։ Ախար 1795 թուականի եւ 1680ական թուականների մէջ 115 տարուայ տարբերութիւն կայ։ Եթէ այդ 15 տարին տանք Աբրահամ Բէկնազարեանի հասակին, երբ նա Դարաբաղից գերի տարուեցաւ Պարսկաստան, — 100 տարին բոլորովին բաց է մնում, եւ այդ 100 տարուայ ընթացքում՝ դեռ չձնուած Բէկնազարեանի գործերը, որոնք ընդարձակ տեղ են բոնում «Գաղտնիք»ի մէջ, ինքն ըստ ինքեան ջնջվում են, ինքն ըստ ինքեան ոչնչանում են, եւ դրանք մնում են միայն իրեւ Մակար վարդապետի երեւակայութեան ողորմելի արգասիք...։

Կրկնում եմ, Աբրահամ Բէկնազարեանի եւ Փաթալի-շահի կանանցի Աղա-իբրահիմ ներքինիի մի եւ նոյն անձնաւորութիւններ լինելը՝ միանգամայն տակնուվը է անում «Գաղտնիք»ի ամբողջ շինուածքը եւ նրա ամբողջ բովանդակութիւնը դարձնում է բոլորովին կեղծ եւ առասպելական յօրինուածք։ Ես գարմանում եմ, թէ ի՞նչպէս Մակար վարդապետը չէ նկատել այդ, եւ իրան թոյլ է տուել մի այգալիսի անհամեմատ խոշոր հակասութիւն։

Աղա-իբրահիմ ներքինին, մանկութիւնից Պարսկաստան տարուած, կրօնը փոխած, մի մոլեռանդ մահմեդական էր, թէ եւ ծագումով հայ։ Նա իրան բոլորովին հեռու էր պահում հայերից, եւ մեռաւ մահմեդականութեան մէջ, մարմինը տարուեցաւ Քալբալա։

Իսկ Աբրահամ Բէկնազարեանը «Գաղտնիք»ի մէջ ներկայանում է իրեւ մի քաջ հերոս, որ պատերազմում է իւր հայունիքի փրկութեան համար, որ աշխատում է վերականգնել Հարաբաղի ընկած մէլիքութիւն-

<sup>1</sup> Տես Բ. գլուխ։

ները, որ գրում է ժամանակի պատմութիւնը, որպէս զերբեւ խրատ թողնէ ապագայ սերունդներին, — եւ յանհարծ դուրս է գալիս, որ այդ երեւելի ազգասէրը ուրիշ ոչ չէ, եթէ ոչ, մի թշուառ, մահմեղականացած ներքինի, Փաթալի-շահի կանանցում, որի համար ոչ հայոց ազգ կայ եւ ոչ հայոց հայրենիք...

Մակար վարդապետը այնքան մօռանում է իրան, որ այդ մահմեղական ներքինիի մարմինը տանում է թաղել է տալիս Թաւրիղի հայոց եկեղեցու գաւթում, եւ մինչեւ անգամ Աբաս-Միրզային, Պարսկաստանի թագաժառանգին, Հրաւիրում է թաղման հանդէսին ներկայ լինել... Ովկ թոյլ կը տար: Մի հայ, որ կրօնը փոխել է, եթէ տեսնելու լինեն նրան մի այլ հայի հետ խօսելիս, կամ հայի տուն մտնելիս, իսկոյն մահմեղականները կը քարկոծեն, ուր մնաց, որ նրա մարմինը թոյլ տային հայոց եկեղեցու գաւթում թաղելու:

Այդ բոլորը, թէ Աբրահամ Բէկնազարեանին Փաթալի-շահի կանանցում իրեւ քրիստոնեայ պահելը եւ թէ նրա մարմինը հայոց եկեղեցու գաւթում թաղել տալը, — ես վերաբերում եմ Մակար վարդապետի, որպէս կրօնաւորի, քրիստոնէական ջերմեռանդութեանը, բայց այս տեսակ ջերմեռանդութիւններ պատմութեան համար ոչինչ նշանակութիւն չունեն:

Նոյն ջերմեռանդութիւնը Մակար վարդապետը գործ է դնում եւ Աբրահամ Բէկնազարեանի որդի Ապրեսի վերաբերութեամբ եւ նրան նրուսաղէմ է ուղարկում... բայց իսկոյն կը տեսնենք, որ նրա մարմինը նոյնպէս, իւր հօր նման, թաղուեցաւ Քալբալյայում...:

Ապրես Բէկնազարեանը, «Դաղտնիք, ի շարունակող եւ վերջնող հեղինակը, եւ իւր աշխատութիւնը 1881

թուին Մակար վարդապետին յանձնող հեղինակը, յանհարծ մի եւ նոյն գրքում ներկայանում է Ալլահվերդի կամ Ալլահվերդի-Բէկ անունով:

«Զմուանամ՝ ասել որ հայրս կոչվում էր իրահիմ-Աղա, իսկ ես կոչվում էի «Միրզա-Ալլահվերդի», սակայն յաճախ գործածական էր իմ նախ կի ն «Ալլահվերդի-Բէկ», անունն, (Եր. 312):

Ո՞րտեղից ստացաւ նա այդ մահմեղական անունը եւ ինչու:

Այդ հարցին կը պատասխանէ ինքը Ապրես Բէկ-նազարեանը.

«Իսկոյն (Աղա-Մամադ-շահն) զիս ոք ու եգ ըեւ լով ասաց. «Սիրուն եւ անմեղ փոքրիկ, ոու այդ մանկական հասակում ցանկացած ես Շահը տեսնել: Աղա-Մամադ-իսանն այնքան ապաշնորհ ըինիք, որ քո այդ ազնիւ փափազը ըստ արժանոյն գնահատել չգիտնայ: Դու այսուհետեւ Աղա-Մամադ-իսանի հոգեկի ոք ու ին ես, բայց այն պայմանաւ, ոք ու ու ապա ին ական հաւատը, և եզուն: Յետոյ իմ Ապրես անունը «Ալլահվերդի», փոխեց, իբր թէ ինքն ներքինի եւ անզաւակ գոլով Աստուած պարզեւեց իրան մի որդի Աստուածատուր անուամբ»,<sup>1</sup> (Եր. 136):

Մակար վարդապետը այնպէս թեթեւ կերպով է վերաբերում պատմական փաստերին, կարծելով թէ, ինչպէս որ ինքը ցանկանում է, այնպէս եւս կարող երլինել:

<sup>1</sup> Ալլահվերդի թուրքերէն նշանակում է Աստուածատուր: Աղա-Մամադ-շահը պարսկերէն էր խօսում, նա թուրքերէն չգիտէր. եթէ ցանկանար Աստուածատուր անուան համանիշ մի անուն տալ Ապրես Բէկնազարեանին, նրան խուդա-դատ կը կոչէր եւ ոչ Ալլահվերդի:

Աղա-Մամադ-շահը, պարսիցներկայ Ղաջարեան տոհմի թագաւորութեան հիմնագիրը, որովհետեւ ինքը զաւակ չունի, որդեգրում է մի խնածախցի հայ տղայի, որ իւր գահի ժառանգը լինի, — այն եւս այն պայմանով, որ նա “անիս ախտ պահէ իւր պապեն ական հաւատը եւ լեզուն...” Պարսից գահի վրայ քրիստոնեայ թագաւոր... Այստեսակ երազների վրայ մտածեն անգամ յիմարութիւն կը լինէր:

Աղա-Մամադ-շահը, իրաւ է, զաւակ չունէր, բայց նա արդէն որդեգրել էր իւր եղանակ թարա-խանին, որ նրանից յետոյ թագաւոր գարձաւ Փաթալի-շահ անունով: Այլ եւս ինչ պէտք ունէր Ապրես թէկնազարեանին...

Բայց չնայելով Աղա-Մամադ-շահի ցանկութեանը (կամենում եմ ասել Մակար վարդապետի ցանկութեանը), փոքրիկ Ապրեսը անխախտ չպահպանեց իւր “պապեն ական հաւատը եւ լեզուն”: Այն օրից, որ տրուեցաւ նրան Ալլահվէրդի անունը, հենց այն օրից թլիատութիւն ընդունեց...:

Մակար վարդապետը իւր Ալլահվէրդի-բէկին նոյնացրել է “Խամայի Մելիքութիւնների” (270 եր.) Ալլահվէրդի-բէկի հետ, օդուտ քաղելով միայն այն հանգամանքից, որ երկուսն էլ զարաբաղցի հայեր են: ինչու:

Նրա համար, որ “Խամայի Մելիքութիւնների”, Ալլահվէրդի-բէկը Մամադ-շահի “մօհրդարն” է, այսինքն կնքապահն է. շահի դիւանից որքան հրովարտակներ դուրս գալու լինին, նա պէտք է կարդայ, արքայական կնիքով կնքէ, յետոյ թագաւորի ստորագրութեանը ներկայացնէ: Իսկ մի այդպիսի մարդ Մակար վարդապետին պէտք էր,

որ նոյն հրովարտակների գաղտնիքը մտցնէ “Գաղտնիք” մէջ...:

Հարցնող լինի, թէ ի՞նչ գաղտնիքներ դուրս բերեց Ալլահվէրդի-բէկը շահի դիւանից, որոնք մեզ յայտնի չեն մինչեւ “Գաղտնիք”ի լոյս տեսնելը: Այդ թողնենք:

Միայն կարեւոր ենք համարում նկատել, որ այն բոլոր ջանքերով, որով Մակար վարդապետը աշխատել է՝ իւր Ալլահվէրդի-բէկին զանազան ոլոր-մոլոր ճանապարհներով մայնել շահի դիւանի մէջ, — զրանից ոչ միայն որ եւ է իրական օդուտ չէ քաղել, այլ իրան դրել է անխուսափելի հակասութիւնների մէջ:

Ահա ինչու.

Մահմադ-շահի կնքապահ Ալլահվէրդի-բէկը մահկութիւնից Պարսկաստան տարուած եւ մահմեդականութիւն ընդունած մի գերի էր: Նա ուրացել էր որպէս հայութիւնը, նոյնպէս եւ հայոց կրօնը: Նա հայերէն գրել կարդալ անգամ չգիտէր: Ուրեմն ի՞նչպէս հեղինակեց “Գաղտնիքը”:

Եւ, վերջապէս, նա ապրեց որպէս մի մոլեռանդ մահմեդական, հոգուով եւ սրտով, — եւ մեռաւ որպէս մահմեդական: 1847 թուին նրա մարմինը տարուեցաւ Քալեալա եւ թաղուեցաւ իմամների սուրբ հողի մէջ:

Եւ ահա նոր հրաշք. —

Նոյն Ալլահվէրդի-բէկն (‘Գաղտնիք’ի հեղինակ Ապրես թէկ.) Քալեալյից յարութիւն է առնում, 43 տարի ճանապարհորդութիւններ է անում, այցելում է Հայաստանի բոլոր վանքերին (եր. 394—395) իւր մեղքերը քաւում է, եւ յետոյ 1881 թուին գալիս է Շուշի, մուրացկանի կերպարանքով ներկայանում է Մակար վարդապետին, եւ — “Գաղտնիք”ը յանձնում է հայր սուրբին...:

Ե.

Այն բազմաթիւ փաստերը, որ առաջ բերուեցան նախընթաց գլուխներում, կարծեմ, բաւական պէտք է համարուին՝ ապացուցանելու համար, որ “Գաղտնիք”ի մի զցդ հեղինակները — հայր եւ որդի Բէկնազարեանները — բոլորվին երեւակայական անձնաւորութիւններ են, եւ թէ այդ գիրքը Մակար վարդապետի աշխատութիւնն է, որի վրայ մի հին դրոշմ դնելու նպատակով, կնքել է Բէկնազարեանների անունով։

Այժմ պէտք է նայել “Գաղտնիք”ի վրայ, որպէս Մակար վարդապետի հեղինակութեան վրայ։

Որպէս մի պատմական աշխատութիւն, հարկաւոր է նախ որոշել, թէ ի՞նչ մասներից է կազմուած “Գաղտնիքը”։ Այդ հազիւթէ կարելի կը լինէր, որովհետեւ զրքի մէջ բաժանմունքներ չկան։ Հեղինակը ի՞նչ որ գտել է, ի՞նչ որ երեւակայել է, ի տեղի եւ անտեղի՝ կարկատել է միմեանց հետ, առանց դասաւորութեան եւ առանց կարգի։ Այսպիսով առաջ է եկել այն բարելական խառնաշփոթութիւնը, այն անցքերի եւ շատախօսութիւնների մթին քաօրը, որ ընթերցողին մոլորութեան մէջ է դնում, թէ ո՞րտեղից է սկսվում այդ զիրքը եւ ո՞րտեղ է վերջանում։ Այսուամենայնիւ, որպէս զի հնար լինի փոքր է շատէ պարզ գաղափար տալ “Գաղտնիք”ի բովանդակութեան մասին, կարելի է նրան մօտաւորապէս այսպէս բաժանել։

1. Մի պատկեր, որ ներկայացնում է Շուշի բերդի պաշտումը Աղա-Մամադ-շահից։

2. Ժամանակագրական յիշատակարան գանազան պատմական անցքերի։

3. Պաշտօնական թղթակցութիւններ, պայմանագրեր եւ այլն։

Սկսենք պատկերից։

Բայց նախ հարկաւոր է ծանօթացնել մի քանի պարագաների հետ, որպէս զի հասկանալի լինին պատկերի մանրամասները։

Շուշի բերդից երկու ժամ հեռաւորութեան վրայ գտնվում է Խնածախ գիւղը։ Մակար վարդապետը այդ զիւղացի է։ Նա ցանկացել է անմահացնել իւր ծննդավայրը եւ նրան Ղարաբաղի մելքների պատմութեան մէջ մի փայլուն դեր տալ։ Բայց դժբախտաբար Խնածախը թէ իւր դիրքով եւ թէ իւր սեւ անցեալով այն յարմարութիւնները չեն ունեցել, որ Մակար վարդապետի փափազներին լիակատար բաւականութիւն տար։ Իսկ այդ բնաւ չի յուսահատացրել հայր սուրբին։ Նա գիւղի շիրքը կարողացել է ամրացնել։ Նրա շուրջը անմատչելի լեռներ է ստեղծել եւ այդ լեռները պատել է կաղնիների խիտ անտառով։ Նոյն լեռների մէջ զետեղել է մի ընդարձակ այր, որ կոչվում է “Ծակ-Քար”, եւ որը վտանգի ժամանակ կարող է պատապարել իւր մէջ մի քանի հարիւր հոգի<sup>1</sup>։ Դիւղը արդէն պատերազմական բոլոր յարմարութիւնները ստացաւ, բայց ի՞նչ անել գիւղացիների անցեալի հետ։

Թէ Խնածախը եւ թէ նրա մերձակայ Բալուջայ գիւղը՝ երկումն էլ Շուշի բերդի հբրահիմ-խանի կալուածներն են — այն հբրահիմ-խանի, որ Ղարաբաղի մելքութիւնների կործանման պատճառը դարձաւ, եւ որը զեռ շարունակում է պատերազմել մելքների հետ։ Իսկ այդ

<sup>1</sup> Այդ այրը ես տեսել եմ, նրա մէջ երեք, թէ չորս հոգուց աւելի մարդիկ չեն կարող պատապարուել։

երկու գիւղերում զետեղուած են այն բոլոր փախառականները, որոնք դաւաճանել են հայոց մելիքներին եւ անցել են նրանց թշնամի իբրահիմ-խանի կողմը։ Հիմա ինչպէս անել, որ մի կողմից կարելի լինի ծածկել դաւաճանութեան արաւոր, որ դրած է յիշեալ գիւղացիների վրայ, իսկ միւս կողմից, նրանցից հայրենիքի պաշտպանութեան համար հերոսներ ստեղծել։

Մակար վարդապետի հնարագիտութեան տաղանդը այդ դէպքում եւս անձար չէ մնացել. նա յօրինել է մի դաշնագիր յիշեալ գիւղացիների եւ իբրահիմ-խանի մէջ։ Ես կը բերեմ այդ դաշնագրի հետաքրքիր յօդուածները, որովհետեւ դրա նման են “Գաղտնիք”ի մէջ արձանագրուած բոլոր դաշնագրները։

Ա. “Զրաբերդից Խաչէն տեղափոխուող “ք ա ջ երին,, տան զլուխ վնարեց իբրահիմ-խանը երե՛ք հարիւր թուման իբրեւ նոր շինութեան ծախը եւ հնոց կարասիները նորերի մէջ փոխադրելու վարձ,,։

Բ. Յոդուածը որոշում է երկու գիւղերի սահմանները, հողերի տարածութիւնը, որ տալս է իբրահիմ-խանը “ք ա ջ երին,, իբրեւ մշտական սեպհականութիւն՝ յօրդոց յօրդիւ։

Գ. “Ոչ իբրահիմ-խանն իրաւունք ունի “ք ա ջ երից,, եւ սոցա յետագայներից պահանջել տուրք կամ պիսահարկ եւ կամ տասանորդ, ոչ այս խանի յետագայներն, եթէ կը լինէին,,... (Ղարաբաղի տիրապետողը յոյս չունի, որ ինքն յետագայներ կ'ունենայ եւ այդ գրում է պայմանի մէջ)....։

Դ. “Ոչ ոք իրաւունք կ'ունենայ պահանջել այս “ք ա ջ երից,, ոչ զօրք եւ ոչ զօրադրամ,,։

Ե. “Միայն թէ այդ “ք ա ջ եր ն,, բնաւ չմասնակցէին մելիքների պատերազմներին եւ զինէին ընդդէմ իսանին,, (եր. 117—118):

Այդ “ք ա ջ երը, իբր թէ Զրաբերդի Մելիք-Աթամի զինուորներն են եղել եւ խանը, նրանց կաշառելով, գաղթեցրել է Զրաբերդից։ Իսկ Զրաբերդի իշխող Մելիք-Աթամը հաճութիւն է տալիս նրանց տեղափոխութեանը, հաւատացած լինելով, որ “ք ա ջ երը, դարձեալ իւր օգտին կը ծառայեն։ “Ք ա ջ երը” եւս իրանց կողմից յանձն են առնում այդ երկերեսանի գերը, մի կողմից խարել միամիտ իբրահիմ-խանին (շատ միամիտ էր...) եւ վյելել նրա առատ բարիքները, իսկ միւս կողմից, նպաստել հայոց մելիքների շահերին եւ այլն (եր. 118):

Բանը շինուեցաւ։

Ղարաբաղի մելիքութիւնները ոչնչացնող իբրահիմ-խանը, որ գոռողութեամբ մի կողմից եղջիւր էր ածում ռուսայ զօրութեան դէմ, միւս կողմից, պարսից շահերի դէմ, — այն աստիճան տկարանում է մի քանի գիւղա-

<sup>1</sup> Գոսէ նոր խնածախ անունը պէտք է փոքր ի շատէ զսպէր Մակար վարդապետի վատահութիւնը՝ պատմութիւնը այդպէս հսմարձակ կերպով զեղծելու մէջ։ Եթէ արդ գիւղը նոր խնածախն է, ուրեմն եղել է եւ հին խնածախ։ Որպէս զարաբաղցի, անկարեկի է, որ Մակար վարդապետին յայտնի չլինէր, որ հին խնածախը գտնվում է Զանգազօրի գաւառում, որ եւ կոչվում է Քշտաղի խնածախ, եւ որը Մելիք-Հայկազեանների գիւղն էր։ Այստեղից գաղթեցին Մակար վարդապետի հայրենակիցները եւ հիմնեցին նոր խնածախը, պահպանելով իրանց գիւղն նախկին անունը։ Ուրեմն ինչպէս կարող էին լինել նրանք Զրաբերդի գաւառից գաղթածներ, կամ այդ գաւառի տիրապետող Մելիք-Աթամի զինուորներ։ Թէ Ղարաբաղում, թէ Ղափանում եւ թէ Սիսիանում շատ կան նոյնառուն գիւղեր։ որ զանազան պատմական հանգարանքների պատճառով, մէկ գաւառից գաղթել են դէպի միւսը, նոր գիւղ են հիմնել եւ իրանց հին գիւղի անունովն են կոչել։

յիների առջեւ, եւ այն աստիճան յիմարանում է, որ Մակար վարդապետի շնորհիւ՝ մի այդպիսի պայման է կապում “քաջերի” հետ։ Ի՞նչ կարօտութիւն ուներ նա մի քանի թափառական գիւղացիների մէջ, երբ այդ ժամանակ նա ամրող Ղարաբաղի տէրն եւ իշլանն էր Համարվում։ Եւ երբ Ղարաբաղի նախկին տիրապետող մելիքները, չկարողանալով տանել նրա բարբարոսութիւնները, արդէն իրանց ժողովրդով սկսել էին գաղթել դէպի օտար երկրներ (եր. 115—116)։

Հետաքրին այն է, որ յիշեալ պայմանագիրը գրվում է եւ վաւերանում է մի եւ նոյն տարւոյ մէջ եւ միեւնոյն ժամանակ (1770 թ. մայիսի 10ին), երբ այդ մի բուռն “քաջերը” կոտորում են Իրբահիմ-խանի զօրքերը եւ նրան իւր կուսակից հայ մելիքների հետ փախցնում են Շուշի բերդը... (Համեմատեցէք 65 եւ 119 երեսները)։

Վերջապէս, “քաջերը” ստանում են Իրբահիմ-խանի խոստացած փողերը, հիմնում են Խնածախ եւ Բալուջա գիւղերը։ Առաջինի մէջ բնակութիւն են Հաստատում 50 ընտանիքներ, իսկ երկրորդի մէջ 70 ընտանիքներ։ Ընդամենը 120 ընտանիք։

Հաշուենք, թէ ո՞րքան ծախսեց Իրբահիմ-խանը այդ 120 ընտանիքը գաղթեցնելու համար։

Իւրաքանչիւր ընտանիքին տուեց 300 թուման պարսից ոսկի։ Ուրեմն 120 ընտանիքը ստացաւ 36.000 ոսկի։ Եթէ այդ գումարը վերածենք ոռոսաց ոռորը (իւրաքանչիւր ոսկին 3½ ոռորի հաշուելով) կը ստանանք 126.000 րուրի։ Այդ գումարով կարելի էր այն ժամանակ (1770 թ.) ամբողջ Ղարաբաղը գնել։

Ցցց տալու համար Մակար վարդապետի թուանշանների փաւստուեան շռայլութիւնը, աւելորդ չեր լինի մէջ

բերել մի փաստ, թէ ո՞րքան սուղ էր փողը այդ ժամանակներում։

Յիշեալ երկու գիւղերի հիմնուելուց 58 տարի յետոյ (1828 թ.), երբ Համեմատաբար գրամի աւելի առատութիւն պէտք է լինէր, ոռոսաց կառավարութիւնը Պարսկաստանից գէպի Անդրկովկաս գաղթեցրած 8249 հայ ընտանիքների վրայ, Ղազարոս Լազարեանի ձեռքով ծախսեց ընդամենը 14.000 ոսկի եւ 400 ռուրի միայն, եւ այդ գումարը կոմ Պասկեւիչը չափաղանց էր գտնում։ Ռուսաց կառավարութեան այդ ժամանակուայ գրամական միջոյները յայտնի էին։ Միայն 20 միլիոն կոան պատերազմական տուգանք դրեց Պարսկաստանի վրայ, երբ տեղափոխում էր այդ գաղթականները։ Եւ այդ գումարի մի մասը արդէն ստացել էր։ Այսուամենայնիւ, 14.000 ոսկին շատ էր գանում 8249 ընտանիքի տեղափոխութեան համար, այն եւս Պարսկաստանից Անդրկովկաս։ Ո՞րքան հեռաւորութիւն։ Իսկ Իրբահիմ-խանը իւր բոլոր չքաւորութեամբ, Քրաքերդից մինչեւ Խաչէն (մի օրուայ Ճանապարհ է) 120 ընտանիք գաղթեցնելու համար ծախսում է 36.000 պարսկական ոսկի, — 126.000 ռուրի... Ստախօսութիւնը եթէ փոքր ինչ չափաւոր լինէր, այդքան զղուելի չէր լինի։

Երբ Իրբահիմ-խանը մտաւ ոռոսաց հպատակութեան ներքոյ, Քուրակ-շայի դաշնագրից յետոյ իշ. Յիշիանովի հետ (1805 թ.), նա խոստացաւ ամրող Ղարաբաղից

<sup>1</sup> Մակար վարդապետը Պարսկաստանից տեղափոխած հայ գաղթականների թիւը դնում է 26.000 գերդաստան (եր. 382)։ Պարձեալ փաւստուեան չափաղանցութիւն...։

<sup>2</sup> Տես Ղազարոս Լազարեանի 1829 ամի 24 գեկտեմբերի զեկուցումը, որ մատուցած է կոմ Պատկեւիչին։ “Ակարազիր գաղթականութեան հայոց Պարսկաստանէ ի Ռուսաստան, եր. 94։ Տպուած է Մոսկուայում 1832 ամի 40\*.

իբրեւ հարկ վճարել ռուսներին 8000 ռոկի միայն։ Վերջը այդ գումարը վճարել չկարողացաւ, խոստացաւ ձիաներ տալ, այն եւս տալ չկարողացաւ։ Իսկ 1770 թուին որտեղից ունէր իբրահիմ-խանը այնքան ոսկիներ, որ տար Մակար վարդապետի հայրենակիցներին, եւ ինչու համար . . .

Թէ այդպէս, թէ այնպէս, Խնածախը հիմնվում է։ Այդ գիւղը, որպէս վերեւում յիշեցի, թէ Մակար վարդապետի, եւ թէ “Գաղտնիքի հեղինակ” հայր եւ որդի Բէկնազարեանների ծննդավայրն է։

Խնածախի հիմնուելուց 25 տարի յետոյ (1795 թ.) Աղա-Մամադ-շահը պաշարում է Շուշի բերդը, որը յիշեալ գիւղից 2 ժամուայ հեռաւորութեան վրայ է։ Այդ միջոցին դուրս են գալիս մի խումբ խնածախցի “քաջեր” եւ հրաշքներ են գործում։ Հետաքրիր են այդ “քաջերի” անունները։ Այդ պատճառով ես աւելորդ չեմ համարում անունները մի առ մի յիշել, որովհետեւ հենց անունների մէջն է նրանց քաջութեան նշանաբանը։

1. Խումբի գլխաւորը, նոյն ինքն “Գաղտնիքի հեղինակ” Արքահամ Բէկնազարեանն է։ Նա կոչվում է Ազրայէլ-իբրահիմ<sup>1</sup> յետոյ իւր անհամեմատ քաջադործութիւնների համար կոչուեցաւ “Հրաշագործ-Ազրայէլ” (եր. 162)։ — Ազրայէլ կոչվում է արարացւոց հոգեառ հրեշտակը։ Դա անդութ, կոտորող եւ ոչնչացնող մի ոյժ է։ Գոնէ իւր անուան վերաբերութեամբ պէտք էր, որ “Գաղտնիքի հեղինակը փոքր ինչ համեստ լինէր”։

<sup>1</sup> Բոլոր անունների եւ մականունների մէջ՝ Մակար վարդապետը միայն 19 անուն է բացատրում, բայց ես չհետեւեցի նրա բացատրութիւններին, որովհետեւ ինքն եւս չգիտէ իւր հնարած մականունների իսկական նշանակութիւնն։

2. “Գիւլ-Ռւհան”<sup>1</sup> — նշանակում է Գայլօհան։ Դա այն յատկութիւններն ունի, որ աչքերը գայլի նման գիշերուայ մութի մէջ տեսնում են, գայլի նման ոռնում է եւ իւր ընկերներին զանազան ազդարութիւններ է անում, իսկ կոխուների միջոցին՝ գայլի նման լափում է թշնամուն (եր. 63)։

3. “Առան-Մանուչար”, — նշանակում է Առիւծ-Մանուչար։ “Սա ունի առիւծի յատուկ վեհանձնութիւն, աներկիւղ սիրտ, լայնալանջ կուրծք, աննահանջելի յարձակումն, անդիմադրելի ուժգնութիւն, շափազմնց ոյժ։ Եւայլն (եր. 66, 67)։

4. “Շիր-Նասիպ”, — նշ. Առիւծ-Նասիր։

5. “Պէտիւ-Մախոմուր”, — “բարբո պարակերէն նշանակում է վազր, իսկ Մախոմուր անուն է։

Ուշագլութիւն գարձրէք 2ից մինչեւ 5րդ մականունների վրայ, — գայլ, առիւծ եւ վազր — գաղաններից առնուած են ամենակատաղինները։

6. “Օշափի աղդասար”, — նշանակում է Վիշապ-Բաղդասար։ Վիշապների նման նա սարսափի է ձգում թշնամինների վրայ եւ վիշապների նման կլանում է նրանց բազմութիւնը (եր. 66)։

7. “Աժտահա-Անտարի”, — նշանակում է Աժդահակ կամ Վիշապ-Անդրէաս։ “Այս բարձրահասակ, յաղթամադամ, ուժեղ եւ արիստիրտ տղամարդը,, վիշապի

<sup>1</sup> Ես բոլոր անունների ուղղագրութիւնը թողեցի նոյն ձեւով, որպէս գրել է Մակար վարդապետը։ Հայր սուրբը Տաճկաստանում ստացած լինելով իւր կրթութիւնը եւ երկար ժամանակ այնտեղ մնալով, գործ է ածում Տաճկաստանի հայերի ուղղագրութիւնը բ-ի տեղ պ, դ-ի տեղ տ, ջ-ի տեղ ձ, եւն։ Դա արդէն պարզ նշան է, որ “Գաղտնիքը գրել է Մակար վարդապետը եւ ոչ Բէկնազարեանները, որոնք, հարկաւ, տաճկահայոց սիամ հնչելներին կամ ուղղագրութեանը չէին հետեւի։

կլանող յատկութիւններն ունի, թշնամու ամբողջ գունդերը վիշտապի նման անհետացնում է (եր. 67):

8. “Շահմար-Ղաւալ,, — Շահմար նշանակում է օձերի թագաւոր. հեքաթների մէջ այդ հրեշիւր հայեացքովն անդամ թունաւորել կարող է: Իսկ “Ղաւալ” անուն է, թէեւ թմբուկ բառի նշանակութիւնն եւս ունի (եր. 70):

Ուշադրութիւն դարձրէք 9ից մինչեւ 8րդ նոյնանշան երեք մականունների վրայ, որոնք հսկայ օձեր, կամ օձերի թագաւորներ են ներկայացնում:

9. “Փիղ-Առուշան,, — նշանակում է Փիղ Բովշան: — Բովշան պարսկական անուն է: “Փիղ” մականունը ստացել է այդ հսկան իւր փղային ուժի պատճառով (եր. 70):

10. “Նէ առ-Եղի աղար,, — “Նառ” պարսկերէն արու է նշանակում: “Նառ, կոչվում են եւ արուուղտերը, իսկ ժողովրդի հասկացողութեամբ այդ բառը չափազանց ուժեղութեան նշանակութիւն ունի:

Ուշադրութիւն դարձրէք 9ից մինչեւ 10րդ մականունների վրայ, խոտածարակներից ընտրուած են ամենահզօրագոյնները, — փիղը եւ ուղտը, միայն գոմէշը մոռացուած է...:

11. “Կէ ծակ-Վանի,, — նշանակում է Կայծակ-Յովհանէս: Դա կայծակի նման շանթահարում է թշնամու գունդերը եւ իւր ծանր թրի մի հարուածքով թշնամիների գլուխները երկու հաւասար կէսերի է բաժնում, ոչ աւել, ոչ պակաս (եր. 63):

12. “Կարկուտ-Սմաւէն,, — նշանակում է Կարկուտ-Սիմօն: Դա այն աստիճան արագաշարժ է, որ

իւր հրացանի գնդակները կարկուտի նման թափում է թշնամու վրայ (եր. 67):

Ուշադրութիւն դարձրէք 11 եւ 12րդ մականունների վրայ, երկնքի երկու պատուհաններն եւս բաց չեն թողուած — կայծակը եւ կարկուտը:

13. “Ցէ օվ-Գաւալ,, — նշանակում է Դէվ-Կասպար: Դէվերը թէ պարսից եւ թէ հայոց առասպելների մէջ վեթխարի հսկաներ կամ քաջքեր են: “Դաղտնիք” ի “Ցէօվ-Գեասպարը,, “ունի յաղթանդամ կազմուածք, սամսոնական ոյժ, առիւծական սիրտ, պողպատեայ բազուկներ,, եւն (եր. 64):

14. “Մէ առուատ է օվ Աթան,, — նշանակում է Հայր — Նառագէվ: Դա հեքաթների մէջ պատմուած գէվերի կամ հրեշների եօթնազլիսեան թագաւորն է: Իսկական անունը Սահակ է: “Մա ունի պարթեւական հասակ, արտաքոյ կարգի ոյժ, աներկիւղ սիրտ եւ այլն (եր. 68): Դա յետոյ կոչուեցաւ “Քաջայաղթթարդ 8րդատան” (եր. 278):

15. “Ազնաւուր-Ուհան,, — “Ազնաւուր” պարսից այբաժար բառի աղաւազուածը պէտք է լինի, որ նշանակում է հրեշաւոր, այլանդակ, Ճիւաղ: Իսկ “Ուհան” Յովհաննէս անունն է: Այդ անունը ստանում է նա Երասխ գետի ափերի մօտ կատարած զարմանալի յաղթութիւնների պատճառով (եր. 65, 66):

Ուշադրութիւն դարձրէք 13ից մինչեւ 15րդ մականունների վրայ, բոլոր նշանաւոր առասպելաբանական հրեշները չեն մոռացուած:

16. “Քեալլակէօղ-Առստամ,, — “Քալլագօղ” նշանակում է գագաթի վրայ մի հատիկ աչք ունեցող: Դա թուրքերի առասպելների մէջ համապատասխանում

է չոմերոսի Պօլիւփեմէս անուն կիկղոպին, որ ճակատի վրայ մի հատիկ աչք ունէր եւ կերակրվում էր մարդկային մսով։ Իսկ Առաստամ՝ Փրիդովսու Ռոստոմ հերոսի աղաւաղուած անունն է։

17. «ՓէՀլուան-Սագին, — նշ. հսկայ-Սարգիս»:

Ուշադրութիւն դարձրէք 16ից մինչեւ 17րդ մականունների վրայ, հսկանների եւ ճիւաղների անուններն եւս բաց չեն թողուած։

18. «Քեարվանդուան-Բրուտ», — քարվանդուան նշանակում է քարաւան կոտորող, աւազակ, յուղահար։ Դա արհեստով բրուտ է. իսկական անունը Թիւնի (Յարութիւն) է։ «Սա ունի պարթեւական հասակ, արդատեան ոյժ եւ ահարկու տեսք»։ Մի անգամ բոլորովին միայնակ կոտորեց նա իբրահիմ-խանի 150 զինեալ թուրքերին, որ քարաւանի պատրուակով ուղարկել էր խանը նրան սպանելու։ Եւ երեւակայեցէք, Բրուտը առանց զէնքի կատարեց այդ մեծ կոտորածը, որովհետեւ այդ միջոցին գնացել էր նա Կուր գետից ձուկ որսալու (Եր. 64):

19. «Թուլի-Արզուման», — «Թուլի» նշ. աւազակ, յուղահար, ասպատակող։

20. «Բասար-Կէչէր-Գեափին», — «բասար-գէչար» թուրքերէն նշանակում է կոխ տուող եւ անցնող, իսկ Գեափին կրծատուած Գաբրիէլ անունն է։

21. «Զափար-Սարասար», նշանակում է «կը կոտորէ զլիսից ցզլուխ», այսինքն՝ ծայրէ ի ծայր։ Դա թշնամու որ կողմի վրայ եւ յարձակվում է, ծայրէ ի ծայր կոտորում է։ Իսկ թշնամու յարձակումները սանձահարելու պատճառով, կոչում է նաեւ «Զլով», որ նշանակում է սանձ (Եր. 64, 65):

Ուշադրութիւն դարձրէք 18ից մինչեւ 21րդ մականունների վրայ, բոլորը նոյն իմաստը ունեցող աւազակների եւ ասպատակների անուններ են։

22. «Քեանդխուտա-Խաչատուր», — նշանակում է՝ տանուտէր Խաչատուր։

23. «Զարպազան-Եռղուրլու», նշանակում է Բախտաւոր-Թնդանօթ։ Դա թնդանօթի նման ռմբակոծում է թշնամու գունդերը. իւր ամբողջ կեանքում միշտ յաղթել է եւ երբէք չէ յաղթուել. այդ պատճառով վայելում էր եւ «Քաջայաղթ» մականունը (Եր. 67, 68):

24. «Սէնկիար-Ասրի», — նշանակում է Պատնէշ-Խորայէլ։ Ինչպէս պատնէշը պատերազմի ժամանակ մի զօրաւոր թումբ կամ ամբարտակ է թշնամու առջեւ, նոյնպէս է եւ այդ Խորայէլը։

Ուշադրութիւն դարձրէք 23 եւ 24րդ մականունների վրայ, — մէկը թնդանօթ, միւսը՝ պատնէշ թնդանօթի գէմ...»

25. «Ուզուն-զլիճ-Սային-ուզուն-զլիճ» թուրքերէն նշանակում է երկայնասուր, այսինքն՝ երկար սուր կրող։ Իսկ Սային աղաւաղուած Եսային անունն է։

26. «Պատման-զլիճ-Մարտի», — «Բաթման» թուրքերէն մի ծանրութիւն է, որ, կարծեմ, հաւասար պէտք է լինի ոռւսաց  $\frac{1}{2}$  պուդին։ Իսկ «Բաթման զլիճ» նշանակում է՝ մի բաթմանի ծանրութեամբ սուր կրող։ «Մարտի» կրծատած Մարտիրոս անունն է։

27. «Պատման-թօփուզ-Թէոս», — նշանակում է մի բաթմանի ծանրութեամբ լախտ կրող թաղէոս։

28. «Թօփուզ-աշղ-Ղարա», — «Թօփուզ» նշանակում է զլիսին գնդաձեւ երկաթ ունեցող լախտ, որ հին ժամանակներում գործ էին ածում որպէս զէնք, իսկ

“աշղ-զարա,, նշան. սեւ աշուղ։ Դա մի երդիչ է, որ իւր  
նուազարանը ցած է դրել. վեր է առել զէնքեր, սկսել  
է հայրենիքը պաշտպանել (եր. 69):

Ուշադրութիւն դարձրէք 25ից մինչեւ 28րդ մա-  
կանունների վրայ, որոնք արտայայտում են զէնքերի եւ  
զինակրների տարօրինակ վելթխարիութիւնը։

29. “Անյաղթ-Ղազար,, — հասկանալի է։

30. “Անգութ-Խաչեն,, — հասկանալի է։ Խաչի  
Խաչատուր անուան կրծատուածն է։

31. “Քաջալ-Մօսին,, նշ. քոստ Մովսէս։

Երբ որ քաջալը կայ, անպատճառ քոսակն էլ պէտք  
է լինի...”

32. “Քօսակ-Գիւգին,, — նշ. քոսակ Գրիգոր։ Թէ  
քաջաները եւ թէ քօսակները ժողովրդի հասկացողու-  
թեամբ խորամանի, հնարագէտ, նենգաւոր եւ ճարպիկ են  
լինում։

33. “Գիժ-Միքին,, — նշ. գիժ Միքայէլ։ Պա-  
տերազմնող անձանց վերաբերութեամբ “գիժ”, մականունը  
ունի վայրագութեան նշանակութիւն, ինչպէս մեր Հայկ  
գիւցազնի հետ պատերազմնող տիտաններին “խօլ” այսինքն  
խենթ անունն է տալիս պատմութիւնը։

34. “Դէլի-Մահրասա,, նշ. գիժ-վարդապետ։  
Բայց “գալին բառը հեքամների մէջ տարապայման քաջի  
նշանակութիւն եւս ունի։ “Դալիներ կոչում էին Քօր-  
օլու թիկնապահներն եւս։

35. “Դէլի-քէշիշ,, — նշ. գիժ-քահանայ։

36. “Պէլ-Շամալ,, — “պէլ” բառը հայ ռամկի  
լեզուում նոյն միտքն ունի, որպէս “գալին բառը թուր-  
քերի մէջ, նշանակում է՝ գիժ, խօլ, վայրագ, տարա-  
պայման քաջ։ Արդեօք այդ “Պէլ”, սեմեանների առաս-

պելական թէլը կամ Ներրովթը չէ, որ մնացել է մեր  
ժողովրդի մէջ։ — Ծամալ՝ աւելի Ճիշտ՝ Զամալ թուրքաց  
անուն է, որ գործ են ածում եւ հայերը։ Բայց այդ  
Պէլ-Շամալը մի զարմանալի տիպ է “Գաղանիք,ի մէջ։  
Մակար վարդապետը տուել է նրան մի երկրորդ անուն  
եւս — “Արագահաս-Սուրբ-Մարգիս” (եր. 278)։

Ուշադրութիւն դարձրէք 33ից մինչեւ 36րդ մակա-  
նունների վրայ, բոլորը գժեր ու խենթեր են... ոչ մի  
խելացի չկայ այդ չորս անունների մէջ...”

37. “Տէօնմազ-Բէլլուն,, — նշանակում է՝ մէջքը  
կամ թիկունքը յետ չղարցնող։ Այսպէս կոչվում է նա,  
այն պատճառով, որ երբէք առանց յաղթութեան յետ  
չէ դառնում կոիւի գաշաից (եր. 68)։

38. “Պրախմազ-Օսէփ,, — նշանակում է՝ բաց  
ժմողնող-Յովսէփ։ Այդ անունը ստացել է նա, որովհե-  
տեւ միանգամ իւր ձեռքն ընկած թշնամուն բաց չի  
թողնի, կ'ոչնչացնէ, եւ առաւելապէս սիրում է կոտորել  
թշնամու զօրապետներին (եր. 69)։

39. “Պողպատ,, իբրեւ մարդու անուն, նշանա-  
կում է՝ պողպատեայ կամ երկաթեայ կազմուածք ունե-  
ցող, զէնքերից անմիտելի”։

40. “Քեարփեթիւն-Տէտէն,, — “քալփաթին”  
նշ. ազգան կամ ունելի — հիւսների եւ գարբինների այն  
գործիքը, որով մեխ են գուրս քարշում կամ շեկացրած  
երկաթ են բռնում։ — “Տէտէն, ինձ յայտնի չէ, թէ որ  
անուան կրծատուածն է։

41. “Թօխմախ-Սափարի,, — “թօխմախ” կոչ-  
վում է այն գործիքը, որով պարսիկները ջարդում են  
յանցաւորների զլուխները. դա ահագին երկաթեայ մուրճ  
է, գարբինների մուրճի կամ կոանի նման։

42. “Զնդան-Աւթանդիւ,, — “զնդան,, կամ աւելի ուղիղ “սնդան,, կոչվում է դարբինների սալը, որի վրայ երկաթ են կռում: Իսկ ժողովրդի լեզում փոխաբերական մտքով ամրութիւն է նշանակում:

Ուշադրութիւն դարձրեք 40ից մինչեւ 42րդ մականունների վրայ, որ ներկայացնում են դարբինների երեք անբաժան գործիքները, միայն փուքը մոռացուած է:

43. “Ղաքեւ-Զաքի,, — նշ. կաքաւ-Զաքարիա: Դա սուրհանդակի կամ փայետակի պաշտօն է կատարում. այսպէս կոչվում է իւր չափազանց արագընթացութեան պատճառով:

44. “Ղարա-Խան-Խւզեաշի,, — նշ. Սեւ-Խան-Հարիւրապետ:

45. “Ալբէթիւն-Բատի,, — Ճիշտ ուղղագրութեամբ “Ալբէթիւն,, չէ, այլ “Աֆլաթուն,, է: Դա արաբացոց Պլատոնն է, մի հրաշագործ բժիշկ եւ փիլիսոփայ: Բայց արեւելեան ազգերի մէջ, նոյնպէս եւ հայոց մէջ, փոխաբերական իմաստով՝ “աֆլաթուն,, բառը հնարագէտ, ամեն բանի ճարն ու դարմանը գտնող մարդու նշանակութիւն ունի: — “Բատի,, բաղդասար անուան կրծատուածն է:

Այդ բոլոր այլանդակ մականունների մէջ միայն սատանան էր պակաս, այն եւս չէ մոռացել Մակար վարդապետը, — ահա եւ սատանան:

46. “Շէյթան-Թիւնի,, — նշ. Սատանայ-Յարութիւն: Դա ուրիշ անուններ եւս ունի “Այր Աստուծոյ,, “Ամբակում մարգարէն եւն: — Շէյթան-Թիւնին ահաղտնիքնի մէջ նոյն տիպն է, ինչ որ է քաւոր-Պետրոսը “Խաչագողի Յիշատակարանին մէջ. ամեն ձեւ ու կերպարանք ընդունում է, ամեն լեզուներով խօսում է,

ամեն տեղ մտնում է, առանց ճանաչուած լինելու: Դա մի քօմէլէօն է, որ ամեն ըոպէ մի նոր տեսք է ստանում:

Մակար վարդապետի վառ երեւակայութիւնը միայն կարող էր այսպէս հրէշտոր մականուններ ստեղծել: “Գաղտնիքը” լի է ուրիշ շատ այս տեսակ մականուններով: Օրինակ, “Քօրողլի-քէշիշ” (Քօրողլի-քահանայ) որ յետոյ կոչուեցաւ “Վարդան Մամիկոնեան” (Եր. 278), “Քաջալ-Սագին”, “Քեօհան-Սագին”, (Եր. 103). Որ նշանակում է սիդապանծ-նժոյգ-Սարգիս: “Տօյտաղ-Քիսին”, (Եր. 104), որ նշանակում է վայրենի-սագ-Կասպար: “Ծէյրան-Ծատուլին”, (Եր. 118), որ նշանակում է եղջերու-Աստուածատուր:

Հոգեւորականներն անդամ առանց այս տեսակ մականունների չեն, օրինակ, “Արծիւ-Թաղէոս-Եպիսկոպոս” (Եր. 56). “Ալբէթիւն-Վարդապետ,, (Եր. 56), “Ասլան-Մահրասա-Մեսրոպ-Վարդապետ,, (Եր. 57), “Օղամ-քէշիշ,, (Եր. 133), այսինքն տղամարդ-քահանայ: “Քօրողլի-քէշիշ” եւայն եւայն: Ծիծէ ժամանակ ունենայի “Գաղտնիքինի բոլոր ծալքերը քրքրելու, գուցէ հարիւրներով կը գտնէի այս տեսակ անուններ, բայց ինչ որ գտայ, դասաւորեցի եւ նկատողութիւններով մատնանիշ արեցի այն անբնական արհեստականութեան վրայ, որով կազմուած են այդ անունները, եւ որոնք պարզ ցոյց են տալիս իրանց պատմական անգյունթիւնը:

Մի խօսքով, բացի այն անուններից, որ Մակար վարդապետը առել է “Խամսայի Մելքոնթիւններից”, մնացեալ համարեա բոլոր անունները՝ այս տեսակ ուռած, փքած մականուններով կեղծեալ անուններ են, որոնք ամենեւին պատմական գյունթիւն չեն ունեցել:

Հետաքրիր են այդ զանազան “կայծակների,,,” կարկուտների,,,” վիշապների,,” եւ “գեղերի,,” զօրախումբերի անունները:

“Ազրայէլի,,” (‘Գաղանիք,,ի հեղինակ Արրահամ թէկնազարեանի) զօրախումբը կոչվում է՝ “Արագահաւասուր Սուրբ Սարգիս,,”:

“Քօրօղէ-քէշեցի,,” (Քօրօղի-տէրտէրի) զօրախումբը կոչվում է՝ “Հրեղէն-թուրը,,”:

“Խուդադատ-բէկը,,” կոչվում է՝ “Սուրբ-Դէորդ,,” իսկ իւր զօրախումբը կոչվում է՝ “Թուր-Տօ-Քշի,,” որ նշանապիկ յորդած հեղեղ, որ ամեն ինչ քշում տանում է:

“Վանի-իւզբաշին,,” կոչվում է՝ “Հայկ Դիւցազն,,,” իսկ իւր զօրախումբը՝ կոչվում է՝ “Զարապատիժ-Դժոխը,,”:

“Եէառատէօվի,,” զօրախումբը կոչվում է՝ “Հրեղէն-թագակիունիք,,”:

<sup>1, 2</sup> Թէ սուրբ Սարդիսը եւ թէ սուրբ Գէորգը ժողովրդի աւանդութիւնների մէջ, ամեն վտանգի ժամանակ, նեղեաներին օգնութեան են համարմ, այդ պատճառով սուրբ Սարդիսը կրում է “արագահաս,,” մականունը, իսկ սուրբ Գէորգը “զօրաւոր,,”

<sup>3</sup> Երբ “Գաղանիք,,ի մէջ մոնում են իսկապէս պատմական անձնաւորութիւններ, որոնց ժամանակներն ներկայում եւս գոյութիւն ունին, եւ մանաւանդ, երբ այդ ժամանակները որ եւ է նշանակութիւն ունեցող մարդիկ են, — այդ գէպքում հեղինակի շողբորդութիւնները ոչ չափ ունին եւ ոչ օհման: Վանի իւզբաշին, որ յետոյ եղաւ Մելիք-Վանի, պատմական անձնաւորութիւն է: Կրա մասին խօսուել է “Խամայի Մելիքութիւնների,,” մէջ (եր. 222—227): Կրա մասին խօսում է եւ Դուրբովինը „Աշ. ՅՈՒ. և ՅՈՒ. Ռ. Կավկազ“ թ. IV տ. 451, 452): Մելիք-Վանի թռուները այժմեան Աթարէկեաններն են, որոնց ամեն օր տեսնում ենք: Հարցրէք նրանցից որին որ կամենում էք, թէ ձեր պապը որ եւ իցէ ժամանակ կոչուել է՝ “Հայկ-Գիւցազն,,,” կամ նա ունեցե՞՞ է մի հզօր կաղմակերպուած զօրախումբ, որ կոչվում էր “Զարապատիժ-Դժոխը,,”: — Ես հաւատացած եմ, որ ամեն մի Աթարէկեան խիստ կուշտ ծիծազելուց յետոյ, կ'առէ ձեղ. “Այդ ով է հնարել. մեր պապը երբէք այս տեսակ բաներ չէ ունեցել...”

Մակար վարդապետը այն աստիճան յափշտակուած է եղել այդ անուններով, որ միեւնոյն երեսի վրայ (եր. 278) “Քօրօղլու,,” անունը երկու անգամ է կրկնում, եւ ամեն անգամին նրա զօրախումբին զանազան անուններ է տալիս. նախ “Հրեղէն-Թուրը,,” իսկ երկու տողեց յետոյ՝ “Ժեփի-Անցկաց,,” որ նշ. զարկիր, անցիր:

Մակար վարդապետը միայն մոռացել է այդ զօրախումբի դրօշակները նկարագրել: Ի հարկէ, նրանք ել զանազան հրեշների եւ Ճիւաղների նշաններով կը լինէին զարդարուած:

Ղարաբաղի մելիքները երբէք կանոնաւոր զօրք չեն ունեցել, որ նրանց զօրքերը զանազան գունդերի բաժանուած լինէին, եւ այդ գունդերը զանազան անուններ ունենային: Նրանց ժամանակում ամեն մի զարաբաղցի զինուոր էր: Երբ թշնամին մօտենում էր, մելիքը բարձրանում էր իւր տան կտուրի վրայ, ձայն էր տալիս, եւ նոյն լուպէում, իւրաքանչիւր գիւղացի առնում էր զէնքերը, նստում էր ձին եւ հետեւում էր մելիքին:

Ծշմարիտ է, ժողովուրդը, իւր հասկացողութեան համեմատ, իւր հերոսներին մականուններ է տալիս: Բայց այն տեսակ հերոսներ, որ իրանց գործողութիւններով սաստիկ ազդում են ժողովրդի երեւակայութեան վրայ, պաշտելի են դառնում եւ ժողովրդից մականուններ են ստանում, — այն տեսակները դարերի ընթացքում յայտնվում են մի կամ երկու հատ միայն: Հայոց ամբողջ պատմութեան մէջ՝ Հայկ-Դիւցազն, Վահագն-Վիշապաքաղ, Տողք-Անգեղեայ, Ցովհան-Քօշ, Գայլ-Վահան, Աշոտ-Երկաթ, Աշոտ-Մասկեր, Գող-Վասիլ, Առիւծ-Խաչիկ, — զիւնք այնպիսի հերոսներ են, որոնց նմանները ուրիշ դարեր չեն ծնել: Դրանց անուան հետ ժողովուրդը

կապել է իւր զգացմունքը, իւր երգերը եւ իւր առասպելաբանական էպօսը:

Բայց “Գաղտնիք”ի մէջ յանկարծ եւ միաժամանակ բուսնում են 60—70 հերոսներ, որոնցից եւ ոչ մէկը առանց մականունի չէ: — Դա պատմական խկութիւն չէ, դա մի անբնական վիժմունք է, միայն Մակար վարդապետի գլխից: Որովհետեւ մարդկային պատմութիւնը ունի իւր անխախտ օրէնքները, իւր յղութիւնը եւ իւր ծնունդը:

Զարմանալին այն է, որ յիշեալ 60—70 հերոսներից՝ ամբողջ 50ը Մակար վարդապետի գիւղացիներն են, յսնածախից, — մի գիւղից, որ ընդամենը 50 ընտանիքից է բաղկացած: Իւրաքանչիւր ընտանիք ծնել է մի-մի “Կայծակ”, մի-մի “Կարկուտ”, մի-մի “Վիշապ”, եւայն: Եւ դրանք հասարակ մարդիկ չեն, այլ ամենքը Հարաբաղել մելիքների մօտ “Հարիւրապետի”, “Հազարապետի”, “Պօրավարի”, պաշտօն են վարում: Կարծես, ամբողջ յսնածախը մի զինուորական դասակարգ լինելու, եւ զօրապետութիւնը միայն այդ գիւղացիների արտօնական ժառանգութիւնը լինելու: Ո՞րտեղ կորան նրանց սերունդները: Եթէ զօրապետներ էին, հարիւր, եւ ազնուականներ էին եւ կալուածատէրներ էին: Բայց ամբողջ յսնածախը ոչ մի ազնուական չունի, ոչ մի կալուածատէր չունի: Ամենքը հբրահիմ-խանի ժառանգների հասարակ գիւղացիներն են եւ նրանց հողերն են մշակում:

Ինձ յայտնի են փաստեր, որ շատերը այնքան ձարպիկ, այնքան նախանձախնդիր են գտնուել ազնուականութիւն ժառանգելու, որ բոլորովին գուեհիկ գիւղացիներ, անյայտ ծագումից, ձեռք բերելով մի որ եւ է վկայական, իրանց տոհմի կապել են այս եւ այն մելիքի կամ բէկի

տոհմի հետ, կրելով նրանց ազգանունները: Եթէ յսնածախի ամբողջ 50 ազնուատոհմ ընտանիքների սերունդները բոլորովին ջնջուեին (որ անկարելի բան է), դարձեալ կը գտնուեին մարդիկ, որ իրանց ժառանգ կը յայտնէին, եւ նրանց տոհմանունները կը պահպանուեին: Բայց յիշեալ 50 ազնուական հերոսների եւ ոչ մէկի ժառանգներն են մնացել՝ թէ յսնածախում եւ թէ մի այլ ուրեք: Իսկ ժամանակները գեռ եւս այնքան չեն անցել, որ կարող լինեին խապառ կլանել եւ անհետացնել նրանց: Եւ, վերջապէս, ի՞նչ եղան այդ “Վիշապների”, եւ “Վիշապազունների”, կալուածքները: Հարաբաղել մելիքներից եւ նրանց մօտ ծառայող “իւղբաշխներից”,<sup>1</sup> չկար մէկը, որ գիւղեր, անտառներ եւ ընդարձակ կալուածներ չունենար: Եւ այսօր նրանց սերունդներից շատերը վայելում են հայրենական ժառանգութիւնը: Իսկ Մակար վարդապետի ստեղծած 60—70 հերոսները, որոնք ամենքն զօրապետներ եւ զօրավարներ էին, մնում են առանց որ եւ է ժառանգութեան:<sup>2</sup>

Մելիքների տիրապետութեան դարերում, այնքան պատերազմական փայլուն գործողութիւնների մէջ, ան-

<sup>1</sup> Հարաբաղել մելիքները միայն մէկ զինուորական աստիճան են ունեցել եւ այդ “իւղբաշխների” (հարիւրապետ) աստիճանն է, թէ եւ “իւղբաշխներ” էր հարիւրից աւել պատերազմողներ ունենալ իւր ձեռքի տակ: Բայց Մակար վարդապետը ստեղծել է “հազարապետներ”, եւ այլ զանազան աստիճաններ:

<sup>2</sup> Մակար վարդապետը իւր ժանօթութիւնների մէջ (եր. 21, 63, 64, 65, 68) անդադար կրկնում է հինգ հասարակ անուններ՝ Բէլլուենց, Եւղուրլուենց, Ջլանց, Ամոնց, Գիւլ-Ռւհան, — եւ խիստ միամիտ կերպով աւելացնում է. “Այս մականուններից շատերն (?) ցարդ մնացած են յսնածախում... իսկ ոմանք չեն յիշում, քանզի ժամանակի երկարութիւնն (ընդամենն 50—60 տարի) ջնջած է հասարակութեան միջեց:” Հայր սուրբը չգիտէ, որ իւր ստեղծած հսկայ անձնաւորութիւններն շատ խոշոր յիշատակներ պէտք է թողած լինէին՝ իրանց պատմական գոյութիւնը ապացուցնելու համար:

կարելի էր, որ Ղարաբաղը նոյնպէս չունենար իւր հերոսները, որոնց սիրէր ժողովուրդը, որոնց իւր յատուկ տիտղոսը տար ժողովուրդը: Դրանց թիւը շատ չէ, երեք հոգի է միայն — Դալի-Մահրասան, Թուլի-Արզումանը եւ Զալաղան-Իւզբաշին: Առաջին երկուսի անունները Մակար վարդապետը առել է «Խամայի-Մելքութիւններից» եւ մայրել է իւր եօթանասնից անունների մէջ, իսկ վերջինը չէ յիշվում:

Ժողովրդական հերոսները ժողովրդի աւանդութիւնների մէջ՝ ոչ թէ մեռնում են, այլ դարերի ընթացքում, հետզհետէ աճում են, մեծանում են, եւ մինչեւ անգամ, ինչ որ նրանց ժամանակներում եւ նրանց ձեռքով չէ կատարուած, — ժողովուրդը յատկացնում է նրանց: Օրինակ, վեր առնենք Քօրօղլին: Սկսեալ Թիֆլիսից մինչեւ Երեւան եւ Երեւանից մինչեւ Հին-Բայազէտ, եւ այստեղց մինչեւ Կարին, որ լեռան դագաթին մի աւերակ կը տեսնէք, ձեզ կ'ասին՝ «դա Քօրօղլու բերդն է», թէեւ նրանցից եւ ոչ մէկը Քօրօղլու բերդը չի եղել: Վրաստանում ամեն մի աւերակ յատկացնում են Թամարա թագուհուն: Շուշի բերդի ստորոտում, քարաժայոի մէջ, կայ մի ընդարձակ այր՝ զանազան ամրութիւններով, իսկ նրա հանդէպ, նոյնպէս քարաժայոի ճակատին, կայ մի երկրորդ այր, դարձեալ ամրացած պարիսպներով եւ բուրգերով: Առաջինը յատկացնում են Սիւնեաց հերոս Դափիմ-բէկին, իսկ երկրորդը՝ Գուգարացւոց հերոս Աւանիւզբաշուն, թէ եւ երկուսն էլ այս կողմերում ամրոցներ չեն ունեցել:

Ժողովուրդը իւր հերոսներին աւելի է տալիս, քան թէ նրանք ունեցել են: Իսկ ինչ որ իսկապէս ունեցել են, — այն պահում է իւր յիշողութեան մէջ անմոռաց:

Ես, ի հարկէ, չեմ խօսում Ղարաբաղի մելքների մասին, որոնց բերդերը, ամրոցները եւ պալատների աւերակները մինչեւ այսօր մնում են: Իմ խօսքը ժողովրդական հերոսների մասին է: Ղարաբաղի պատմութեան մէջ, որպէս վերեւում յիշեցի, միայն երեք անձնաւորութիւններ կան, որոնց անունների հետ կապուած են ժողովրդի ամենասրտագին աւանդութիւնները: Դրանք են Դալի-Մահրասան<sup>1</sup>, Թուլի-Արզումանը<sup>2</sup> եւ Զալաղան-Իւզբաշին<sup>3</sup>: Ես տեսել եմ այն աշտարակը Եղիշէ-Առաքելոյ վանքի մօտ, որի մէջ բնակվում էր Դալի-Մահրասան եւ որի բաղձրութիւնից սարսափ էր տարածում Ղարաբաղի թշնամիների վրայ: Ես տեսել եմ Թուլի-Արզումանի ամրոցը Երից-մանկանց վանքի հանդէպ, Թըրղի գետի ափի մօտ՝ այն սոսկալի եւ միթին խոխոնների մէջ, ուր եւ այժմ նայողը զարհուրում է: Ես տեսել եմ նոյնպէս Զալաղան-Իւզբաշու ամրոցի աւերակները Թարթարի վրայ, այն անտառապատ թաւուտների մէջ, ուր բոյն էր դրել այդ յափշտակող դիշակերը<sup>4</sup>: Ամեն մի դիշակացի մատով ցոյց

<sup>1</sup> Դալի - Մահրասան այս նշանակում է խենդ-վարդապետ. դա Եղիշէ Առաքեալի վանքի վանահայրն էր, որը գտնվում է Թարթար գետի ձախի կողմում: Նրա խոկական անունը Աւագ քարդապետ էր: Մելքների ժամանակ՝ իւր զարմանալի քաջագործութիւններով՝ այդ հերոս-վարդապետը անմոռաց անուն թողեց: Տես «Խամայի Մելքութիւնները եր. 63—65, 71, 105, 121, 123, 155—158, 218, 272:

<sup>2</sup> Թուլի - Արզուման նշանակում է Աւազակ-Արզուման: Դա Զրաբերդի Մելք-Աթամի եւ նրա որդի Մելք-Մէլլումի քաջերից մէկն էր, որին յանձնում էին ամենայանդուգն եւ ամենալուսանդուոր ձեռնարկութիւններ: «Խամա. Մել..» եր. 64—71, 105—116, 121—155:

<sup>3</sup> Զալաղան - իւզբաշի, նշ. յափշտակող կամ ասպատակող հարիւրապետ: Այդ անունը ստացաւ նա այն մեծամեծ հարուածների եւ աւարառութիւնների պատճառով, որ կատարեց Ղարաբաղի թշնամիների վերաբերութեամբ: «Խամա. Մել..» եր. 64, 67, 272:

<sup>4</sup> Զալաղան նշանակում է եւ ցին կամ ուրուր կոչուած դիշակեր թուզունը:

է տալիս այդ տեղերը եւ նրանց մասին պատմում է շատ եւ շատ զարմանայի բաներ... իսկ այդ անմոռանալի անձնաւորութիւնները “Գաղտնիք, ի մէջ շատ մննշան դեր են կատարում: Որի ընդհակառակն, Մակար վարդապետի հսկաները հրաշքներ են գործում, բայց ոչ մի շօշափելի յիշատակ չեն թողնում...”

Մակար վարդապետը ամբողջ Ղարաբաղում կարող է ցոյց տալ մի բերդ, մի ամրոց եւ, վերջապէս, մի աւերակ շէնք, որոնց յիշատակը կապուած լինէր իւր հերոսների անունների հետ: Նրա Ազրայէլը (‘Գաղտնիք, ի հղինակ Աբրահամ Բէկնազարեանը) իւր հրամանի ներքյ ունէր 5000 կանոնաւոր զօրք եւ 3000 անկանոն զօրք (եր. 94), բայց ոչ մի ամրոց կամ բերդ ունէր: Ղարաբաղի մելիքներից եւ ոչ մէկը ունեցել է այդքան զօրք<sup>1</sup>, բայց ամենքը բերդեր եւ ամրոցներ չունէին: Մի տանձենի միայն Խնածախ գիւղում պահպանում էր Բէկնազարեանների անունը, այն եւս Մակար վարդապետը թուրքերի ձեռքով կտրել է տալիս եւ իւր հերոսների անունները խաղառ անշետացնում է (եր. 398)...

Այդ բոլորից յետոյ, շատ պարզ է, որ Մակար վարդապետի 60—70 հերոսներն, իրանց այլանդակ եւ հրէշաւոր մականուններով, որոնց ներկայացնում է նաև “Գաղտնիք, ի մէջ իբրեւ պատմական անձնաւորութիւններ, — ամենը միասին վերառած, երբէք պատմական գոյութիւն չեն ունեցել: Նրանք մինչեւ անդամ, ժողովրդի

<sup>1</sup> Մակար վարդապետը փաւստոսեան չափազանցութեամբ զարմանալի շատ զօրքեր է տալիս իւր հերոսների ձեռքք: Երբ Պետրոս մեծը պիտի գար գտանձակ, կայսրին գիւղաւորելու եւ իրանց ուժը ներկայացնելու համար, Ղարաբաղի բոլոր մելիքները միասին կարողացան գուրս բերել Կոշկար գետի մօտ 12.000 զօրք միայն: “Պատմութիւն Աղուանից” տպուած է Հռոշի 1839 ամ, եր. 58:

աւանդութիւնների մէջ, առասպելտրանական գոյութիւն չունին: — Նրանք հայր սուրբի վառ երեւակայութեան ծնունդն են, եւ աւելի ոչինչ...

Հետեւեալ զլիում ցոյց կը տանք այն պատկերը, որի մէջ գործում են այդ հերոսները:

## Զ.

Այժմ ներկայացնենք այն պատկերը, որի մէջ նկարագրուած է Շուշի բերդի պաշարումը Աղա-Մամադշահից:

1795 թուին Աղա-Մամադ-շահը 60.000 (?) զօրքերով պաշարում է Շուշի բերդը: Բերդում ամրացած է իբրահիմիսանը, որ իրան թէ այդ բերդը եւ թէ Ղարաբաղի իշխանն էր համարում: Շրջակայ հայոց գիւղերի բնակիչները վաղօրոք փախել եւ մտել են բերդը: Այստեղ պատապարուած են նաեւ Մակար վարդապետի հերոսների ընտանիքներն — խնածախցիք: Տները մնացել են դատարկ:

Խնածախցի “քաջերը”, թուով 20 հոգի, ալիւր են կրում գէպի բերդը, որպէս զի պաշարեալները առանց պաշարի չմնան: Դրանք նոյն “կայծակներն”, “կարկուտներն”, “վիշապներն” եւ զանազան հսկաներն են, որոնց հետ ծանօթացանք նախորդ զլիում: (Այստեղ Մակար վարդապետը մոռացել է իւր հերոսների խակական նշանակութիւնը եւ, նրանց հասարակ գիւղացիների տեղ զնելով, ալիւր է կրել տալիս, մինչդեռ նրանց իւրաքանչեւրը մի քանի հազար զինուորների հրամանատար էր:)

Յանկարծ 20 հոգի խնածախցի ալիւր տանողներին պատահում են Աղա-Մամադ-շահի սարվազները (զինուորները): Այդ միջոցին խնածախցիների հետ միանում են

60 բալուծեցիներ, որոնք նոյնպէս ալիւր էին տանում բերդը։ Մակար վարդապետի “քաջերին, թիւր դառնում է 80 հոգի։

Խնածախի “քաջերին, թուում գտնվում է եւ “Ազրայ է լը, — Մակար վարդապետի ստեղծած հոգեհան հրեշտակը, — այդպէս էր կոչվում “Գաղտնիք” հեղինակ Արքահամ Բէկնազարեանը։ Հօր հետ լինում է եւ որդին — Ապրես Բէկնազարեանը, — Գաղտնիք, երկրորդ հեղինակը։ Ազրայէլը, տեսնելով Շահի սարվազներին, որ ուղեղ դիմում են դէպի Խնածախ, հասկանում է նրանց դիտաւորութիւնը, եւ պատրաստվում է միւս “քաջերին, հետ պաշտպանել գիւղը։

Շահի զօրքերին առաջնորդում էր հայազգի գնդապետ Յովհաննէս Մելիք-Հայկազեանը, որ ունէր իւր հրամանի ներքոյ “2000 կանոնաւոր եւ 2000 անկանոն սարվազներ”, (երբ սարվազներ էին՝ անկանոն չէին կարող լինել)։ Նրանց հետ միացած էին 3000 ձիաւորներ, երկու “հազարապետներին, զիսաւորութեամբ, որոնց մէկը անունը Սուլէյման էր, իսկ միւսի անունը՝ հստամազ։ Եւ այսպէս, թշնամու ամբողջ զօրութիւնը բաղկացած էր 7000 հետեւակ եւ ձիաւոր զինուորներից։ Այդ ահազին բազմութիւնը գալիս էր երկու դատարկ գիւղեր ոչնչացնելու — Խնածախը եւ Բալուծան — որոնց բնակիչները փախել, մտել էին Շուշի բերդը։

Բայց 80 հոգի ալիւր տանողները մնացել էին բերդի դրսում։ Դրանք հանդիպում են Շահի զօրքերին։ Կոխւր սկսվում է հէնց Խնածախի մօտ։ Մի քանի ժամուայ մէջ երեք անդամ ճակատամարտ է լինում, եւ ամեն անդամին Շահի զօրքերը տերեւների նման թօթափվում են այդ մի բուռն “քաջերից”, թողնելով պատերազմի դաշտում դիակների ահազին բազմութիւն։

Սուլէյման եւ հստամազ “հազարապետները, սպանվում են, եւ նրանց հրամանատարութեան ներքոյ գտնուած 3000 ձիաւորներից մի հատ էլ չէ մնում, — հայոց “քաջերը, բոլորին ամբողջապէս կոտորում են (եր. 37)։ Իսկ հետեւակ սարվազներից կոտորում են 2671 հոգի, որոց թուում կային 1 հազարապետ եւ 18 յիսնապետ (եր. 34)։ Եւ այսպէս, թշնամուց սպանուածների ամբողջ թիւր լինում է 5671 հոգի։

Իսկ հայոց “քաջերից, սպանվում են 2 հոգի միայն . . .”

Յաղթութիւնը մնում է 80 հոգի ալիւր տանողների կողմը . . .”

Այդ սարսափելի ստախօսութիւնից յետոյ, “Գաղտնիք”, ի հեղինակ Արքահամ Բէկնազարեանը, որ ինքը անձամբ մասնակցում էր կոխւին, դեռ եւս երես ունի ասելու. “Սպանուածների քանակութիւնն թերեւս չափազնցութիւն կ'երեւի ընթերցողաց, բայց մենք Ճշմարտութեամբ գրեցինք,, (եր. 34)։

Եթէ Աղա-Մամադ-շահի զօրքերը ամբողջապէս ոտները կապած հաւերից բաղկացած լինեին, դարձեալ անկարելի էր մի քանի ժամուայ մէջ 5671 հաւ կոտորել։

Բայց այդ մի քանի ժամուայ մէջ Մակար վարդապետի “քաջերը, ուրիշ գործեր եւս կատարեցին։ Նախ բոլոր 5671 սպանուածների զիակները թաղեցին հողետակ, եւ իրանց յաղթութիւնը յաւերժացնելու համար, նրանց վրայ բարձր հողաբլուրներ կանգնեցրին։ Յետոյ Սուլէյման հազարապետի ընկած տեղի անունը կոչեցին “Սուլէյմանի-խութ,,,”, իսկ հստամազ հազարապետի ընկած տեղի անունը կոչեցին “հստամազի-ձոր,,,: Բայց այն տեղը, ուր թշնամուն կենդանի այրել էին, կոչեցին “Կոռուուտ,,”

որ մահմեղականաց գերեզմանատուն է նշանակում (եր. 35, 37):

Այդ յիշեցնում է Զենոբի եւ նրա պատմութիւնը շարունակողի միամսութիւնը, որ ամեն մի կռիւից յետոյ, դէպքերի համեմատ, տեղերին անուշներ են տալիս:

Երբ ամեն ինչ վերջացած էր, Գիւլ-Ռւհանը գայլ  
նման ոռնում է, եւ բոլոր “քաջերը”, խաղաղ ու հան-  
գիստ կերպով նստում են բաց օդի մէջ ճաշելու (եր. 38):  
Հետաքրքիր է, թէ ով պատրաստեց նրանց համար այդ  
ճաշը: Ամբողջ Խնածախը այրուած էր. իսկ “քաջերի,  
ընտանիքները գտնվում էին Շուշի բերդում: Բայց բանը  
դրանում չէ, երեւի, երկնքից իջաւ ճաշը, — բանը  
նրանումն է, որ ճաշելուց յետոյ, նոր կնքուած “կոռուտին”,  
մօտ՝ անմիջապէս կազմուեցաւ “քաջերի”, խորհուրդը, որ  
դ. Պօլսի այժմեան երեսփոխանական ժողովի ճիշտ ձեւը եւ  
համանման կազմակերպութիւնն ունէր: Այդ ժողովի մասին  
ես կը խօսեմ յետոյ, բայց տեսնենք, ի՞նչ եղան Շահի  
մնացած զօրքերը, ի՞նչ եղաւ գնդապետ Մելիք-Հայկա-  
զեանը: Այդ զօրսապետը, կարծես, եկել էր նրա համար  
միայն, որ ձեռքերը ծալած կանգնէ եւ ամենայն սառ-  
նասրտութեամբ ականատես լինի, թէ ինչպէս մի բուռն  
գիւղացիներ կոտորում են իւր հրամանատարութեանը  
յանձնուած զօրքերը, որ յետոյ գնայ եւ իւր թագաւորին  
խարար տանէ, որի 60.000 զինուորներից բաղկացած բա-  
նակը դրած էր մի քանի քայլ հեռաւորութեան վրայ:

(Աւելորդ չեմ համարում յիշեցնել, որ Խնածախ գիւղը Շուշի բերդից 2 ժամուայ հեռաւորութիւն ունի, իսկ բերդը այդ միջոցին պաշարուած էր Աղա-Մամադշահի զօրքերով։ Այստեղ 80 գիւղացիներ կոտրում էին Շահի զօրքերը, իսկ այնտեղ՝ 60.000 զինուորներից բաղ-

կացած բանակում հրացանների ձայնը չէին լսում, որ գոնէ օգնութեան հասնէին։ Իսկ Շահի զօրապետները այնքան յիմարուեցան, որ մի մարդ էլ չուղարկեցին բանակը՝ օգնութիւն խնդրելու, եւ իդուր տեղը 5671 զինուոր կոտորել տուին . . . .)

Կրկնում եմ, ի՞նչ եղաւ գնդապետ Մելիք-Հայկացեանը:

Կռուի սաստիկ ջերմութեան միջոցին՝ պատահեց մի միջանկեալ դէպք. առանց որ եւ է ստիպողական պատճառի, չնայելով, որ յաղթութիւնը իւր կողմն էր, ինածախցի “քաջերի,, հրամանատար Աբրահամ Բէկնազարեանը (‘‘Գաղանիք,,ի հեղինակը’’) իւր զէնքերը դրեց Մելք-Հայկագեանի ոտքերի տակ եւ անձնատուր եղաւ։ Վերջինը ամենայն ազնուութեամբ նրա զէնքերը յետ տուեց եւ իսկոյն բարեկամացան, սկսեցին միմեանց քաղցր խօսքերով ողջագուրել։ Իսկ նրանց աչքերի առջեւ ինածախցիները դեռ շարունակում էին կոտորել Շահի զօրքերը։ Մելք-Հայկագեանը այն աստիճան յափշտակուած էր հայր եւ որդի Բէկնազարեաններով, որ, կարծես, արբեցած լինէր նրանց սիրով, եւ ամեննեւին չէր նկատում, թէ ինչպէս են կոտորում իւր զօրքերը։ Նա այնքան բարի գտնուեցաւ, որ, որպէս զի փոքրիկ Ապրես Բէկնազարեանը չվախենայ այլանդակուած դիակներից, առեց պատանիին եւ նրա հօր հետ մեկուսացաւ դէպի մի այլ կողմ։ Իսկ ինածախցիք շարունակում էին կոտորել (Եր. 24, 25)։

Այդ միջոցին յայտնվում են երկու սուրհանդակներ եւ բերում են երկու նամակներ։ Մէկը Շահը ուղարկել էր գնդապետ Մելքը-Հայկազեանին, միւսը, Մելք-Մէջլումը, որ նյոնպէս Շահի բանակումն էր գտնվում, ուղարկել էր Աբրահամ Բէկնազարեանին։

Շահը գրում էր իւր նամակի մէջ, թէ Սուլէյման եւ իստամազ “Հաղարապետները,, խաբել են իրան: (Դրանք նոյն անձննքն են, որ իրանց 3000 ձիաւորների հետ սպանուեցան խնածախցի “Քաջերից,,;) Թէ այդ մարդիկը հրահիմ-խանի գործիքներն են եղել, եւ նրա թելագրութեամբ ուղարկուած են եղել իւր բանակը, որպէս զի, առ երես Շահին բարեկամ ձեւանալով, կարողանան իւր (Շահի) ձեռքով Խնածախ եւ Բալուջայ գիւղերը ոչնչացնել տալ: Թէ այդ մարդիկը դիմեցին իրան, հաւատացնելով, որ խնածախցիք եւ բալուջեցիք Շահի թշնամիներն են եւ հրահիմ-խանի բարեկամները: Այդ պատճառով ինքը (Շահը), նրանց “Հաղարապետութեան,,(?) աստիճան շնորհերով, իրանց 3000 ձիաւորներով՝ կարգեց իրեւ առաջնորդ գնդապետ Մելիք-Հայկաղեանին, որ գնան յիշեալ գիւղերը ոչնչացնելու եւայլն:

(Եթէ Մելիք-Հայկաղեանը մի այսպիսի հրահանգ էր ստացած, այդ ամբողջ պատմութիւնը պէտք է առաջուց գիտենար, ի՞նչ հարկ կար, որ Շահը նորից գրէր նրան, այն եւս մի քանի քայլ հեռաւորութիւնից, երբ աւելի հեշտ էր մի աստիճանաւոր ուղարկել եւ հրամայել նրան, թէ յետ դարձրէք:)

Շահը իւր երկար նամակը վերջացնում էր, պատուիրելով Մելիք-Հայկաղեանին, որ Սուլէյմանին եւ իստամազին կենդանի իւր մօտ բերէ պատժելու համար, իսկ յիշեալ գիւղերին ամենափոքր վնաս անգամ չը պատճառէ:

Մելիք-Մէջումի նամակը նոյն միտքն էր յայտնում Շահի խաբուած լինելու մասին, յետոյ շարունակում էր մի երկար պատմութիւն Ղարաբաղի հարազատ եւ անհարազատ մելիքների մասին, Ղարաբաղի հարազատ եւ ան-

հարազատ կաթողիկոսների մասին, Շահի խոստումների մասին՝ վաղեմի մելիքութիւնները վերականգնելու եւ այլն: Վերջը հրաւիրում էր Աբրահամ Բէկնազարեանին, որ իւր հետ առնելով խնածախցի եւ բալուջեցի “Քաջերին,, զիմէ Շահի բանակը, խորհուրդ տալով, թէ աւելի նապատակայարմար էր ծառայել Շահին եւ սպասել նրա խոստումներին եւ այլն:

“Հայրս, — շարունակում է որդի Բէկնազարեանը, ինդրեց Շահի նամակի հայերէն պատճէնը. գնդապետն հայերէն թարգմանեց եւ հայրս մատի ու ով գրեց թղթի վրայ: Մելիք-Հայկաղեանն զարմանք յայտնեց հօրս նախապատրաստութեան վրայ, որն կրում էր միշտ իւր վերայ թանաքաման, թուղթ եւ գրիչ (Եր. 32):

Այսօր անգամ Խնածախ գիւղում անկարելի է մի հատ մատիտ գտնել: Իսկ Աբրահամ Բէկնազարեանը գործ է ածում մատիտը՝ գիտէք երբ, — 1795 թուին, մեզնից 90 տարի առաջ, երբ Անդրկովկասում մատիտ անունն անգամ չէին լսել: Եւ հետաքրքիրն այն է, որ կոիւի միջոցին, “Գաղանիք,,ի հեղինակը՝ զէնքերի հետ՝ կրում է իւր վրայ թուղթ, թանաքաման եւ գրիչ... Այդ բոլոր “Նախապատրաստութիւնները,, տարակցյա չը կայ, որ “Գաղանիք,,ի համար էին, եւ հէնց այդ նպատակով Աբ. Բէկնազարեանը ինդրեց Շահի նամակի հայերէն թարգմանութիւնը: Եւ Շահի միամիտ գնդապետը իւր թագաւորի պաշտօնական նամակի պատճէնը յանձնեց “Գաղանիք,,ի հեղինակին, հէնց նոյն բոպէներում, երբ խնածախցիք նրա աչքերի առջեւ դեռ շարունակում էին կոտորել իւր զօրքերը: Կարծես, դա նրա համար միայն եկած լինէր, որ “Գաղանիք,,ին մի նոր նիւթ մատակարարէր...”

Իսկ Արբահամ Բէկնազարեանը ոտքի վրայ դրում էր Մելք-Մէջումից ստացած նամակի պատասխանը։ Երբ վերջացրեց, սուրհանդակին ձանապարհ դրեց։  
Խնածախցիք դեռ կոտրում էին...

Արբահամ Բէկնազարեանը իւր որդուն, փոքրիկ Ապրեմին, յանձնում է գնդապետի պահպանութեանը, իսկ ինքը աճապարում է դէպի անտառի կողմը, որտեղ կռիւր նորից բողբոքուել էր։ Շահիքարեսիրտ գնդապետը մնում է այնտեղ եւ այժմ դայեակի պաշտօն է կատարում... (եր. 33)։

Այդ բոլորը, շատ հասկանալի է, սպիտակ թելով կարկատած զառանցութիւններ են, մի այնպիսի մարդու գլխից ծագած, որ, ինչպէս երեւում է, իւր կեանքում ոչ պատերազմ է տեսել եւ ոչ գիտէ պատերազմող մարդու պարտաւորութիւնները։ Մելք-Հայկազեանը իւր թագաւորին դաւաճանած կը լինէր, եթէ թոյլ տար, որ իւր հրամանին յանձնուած զօրքերը կոտրուեին, իսկ ինքը զքաղուեր թարգմանութիւններով, կամ իւր ախցեանի որդուն պահպանելով...

Բայց բանը դրանում չէ։ Ես աւելորդ չեմ համարում ցոյց տալ այն ծիծախելի ինտրիգը (բանսարկութիւնը), որ Մակար վարդապետի նկարած պատկերի հիւսուածքն է կազմում։

Երեւակայեցէք, Խնածախ եւ Բալուջայ գիւղերը, որպէս նախորդ գլխում տեսանք, Իրբահիմ-խանի սեպհական կալուածքներն էին։ Եթէ այդ գիւղացիները անհաւատարիմ յայտնուեցան, Իրբահիմ-խանը, որ այսօր պարսից ահարկու թագաւորին իւր 60.000 զօրքերով պահել էր իւր անմատչելի բերդի պարիսպների մօտ<sup>1</sup>, —

<sup>1</sup> Այս անգամին Աղա-Մամադ-շահը չկարողացաւ գրաւել խանի բերդը։

միթէ նոյն Իրբահիմ-խանը չէր կարող մի հարուածով ոչնչացնել յիշեալ գիւղերը, որոնց երկուսը միասին միայն 120 ընտանիքից էին բաղկացած։ Այն բարբարոսը, որ Ղարաբաղի վաղեմի մելքութիւնները ոչնչացրեց եւ նոր, իրան հաւատարիմ, մելքութիւններ ստեղծեց, — այն երեւելի խորամանկը, որ Ղարաբաղի հարավատ կաթողիկոսութիւնը ոչնչացրեց եւ նոր, իրան հաւատարիմ, կաթողիկոսութիւն ստեղծեց, — միթէ չէր կարող առաջուց պատժել իւր գիւղացիներին, երբ յայտնուեցաւ նրանց անհաւատարմութիւնը։ Իսկ այսօր, երբ թշնամին իւր ահարկու զօրութեամբ պաշտրել է նրա բերդը, մի այդպիսի տագնապի ժամանակ, Իրբահիմ-խանը, ամեն հոգսեր թողած, իւր գիւղացիներին պատժելու մասին է մտածում, — այն զիւղացիներին, որոնց ընտանիքները պատապարուած են իւր բերդում, իսկ տղամարդիկը ալիւր եւ պաշար են կրում իւր բերդը... Եւ պատժել ինչպէս։ — Իստամազին եւ Սուլէյմանին 3000 ձիաւորներով ուղարկելով պարսից բանակը, որ Շահին խարեն եւ, նրանից եւս զօրքեր առնելով, գնան դատարկացած Խնածախը եւ Բալուջան ոչնչացնելու... Կալծես, 3000 ձիաւոր բաւական չէր...

Մակար վարդապետը որքան եւ հսկաներ ստեղծած լինէր իւր խնածախցիներից, բայց դարձեալ այդ բոլորը շատ եւ շատ ծիծաղելի է։

Եւ, վերջապէս, Աղա-Մամադ-շահը, որ այնքան զօրել իշխանութիւններ էր կործանել Պարսկաստանում, — նրա համար ինչ նշանակութիւն ունեին երկու նշն գիւղերի բարեկամութիւնն կամ թշնամութիւնն, որ նրանց վրայ առանձին ուշադրութիւն դարձնէր եւ իւր գնդապետներին ու հազարապետներին 7000 զիւրերը։

նուռներով ուղարկեր այդ դատարկ գիւղերը ոչնչացնելու:

Բայց Մակար վարդապետը այնքան քաջ գտնուեցաւ, որ իւր գրացի 80 հսկաների ձեռքով բոլորին կոտորել տուեց:

Այժմ տեսնենք հսկաների ժողովը, որ տեղի ունեցաւ այդ կոտորածից յետոյ, բաց օդի ներքոյ, սպանուածների թարմ զերեզմանների մօտ, որի անունը արդէն կոչել էին «Կոռուուտ»:

«Ճաշից յետոյ կազմուեցաւ ժողով։ Նախազա՞ն ընտրուեցաւ Քեանդիսուտա Խաչատուրն, որն առաջարկեց ժողովին։ «Մի քանի ստիպողական եւ ամենակարեւոր խնդիրներ կան ժողովով լուծելիք. ճըռ-խանութիւնն եւ ճըռ-մելիքութիւնն՝ ոչնչացնելու խնդիր, հարազատ-մելիքութիւնը եւ հարազատ-կաթողիկոսութիւնը վերականգնելու խնդիր, մեր ընտանեաց կեանքի ապահովութեան խնդիր, մեր ծառայութիւնը վարձադրելու խնդիր, մեր կենաց խնդիր, Շահի եւ Մելիք-Մէժլումի հրաւէր ընդունելու կամ մերժելու խնդիր։ Ահա այս խնդիրները պէտք է լուծել կարգաւ վիճականելով. ինչպէս մինչեւ ցարդ գօրապետական խորհուրդներով լուծուած են այսպիսի ծանր խնդիրներ։ Միայն, խնդրեմ, ամեն ոք ձեզանից պէտք է խօսի ազատորէն, կարծիք յայտնէ պաղարիւնութեամբ, հեռատեսութեամբ եւ նուրը կշուադատութեամբ,, (Եր. 38):

Առաջինը խօսում է «Գաղտնիք»ի հեղինակ Աբրահամ Բէկնազարեանը մի երկար ձառով, որ սկսում է այդ խօսքերով։

<sup>1</sup> Ճըռ-խանութիւն կոչում է հեղինակը Իբրահիմ-խանի իշխանութիւնը, որ բռնութեամբ տիրապետել էր Ղարաբաղը։ Խոկ ճըռ-մելիքութիւն կոչում է Իբրահիմ-խանի կուսակից մելիքութիւնները, որոնք բաժանուած էին Ղարաբաղի հարազատ մելիքների միաբանութիւնից։

«Ղարաբաղի ճըռ-խանութիւնը եւ ճըռ-մելիքութիւնը եթէ մենք մեր ձեռքով ոչնչացնենք՝ (գօնքիշօտութեանը նայեցէք) շատ հեշտ է, (ինչու մինչեւ այսօր թողեցիք) իսկ եթէ Պարսից Շահերին կամ այլոց յուսով թողնենք՝ ծանրակշիռ եւ դժուարալոյն խնդիր է,,...

Պարսից Շահը 60.000 զօրքերով պաշարել է Ղարաբաղի խանի բերդը եւ չէ կարողանում ներս մտնել, իսկ Աբր. Բէկնազարեանը շատ հեշտ է համարում իւր 80 հոգուց բաղկացած խումբով ոչնչացնել նրա խանութիւնը . . .

Իւր ձառի շարունակութեան մէջ «Գաղտնիք»ի հեղինակը պատմաբանօրէն բացատրում է պարսից վերջին թագաւորների աննպաստ վարմունքը Ղարաբաղի հայոց մելիքների վերաբերութեամբ եւ, վերջ ի վերջոյ, այն եղբակացութեանն է համարում, թէ շատ չի պիտի հաւատալ Աղա-Մամադ-շահի խոստումներին, թէ նա կը վերականգնէ Ղարաբաղի ընկած մելիքութիւնները եւ այլն։

Յետոյ սկսում են այդ հարցի վրայ վեճել, բայց ամենքը հերթով են խօսում, առանց մինը միւսին խանենքը հերթով եւ ամեն հոետոր զօր է տալիս իւր լեզուի ուգարելու, ու ամեն հոետոր զօր է տալիս իւր ժամանակը։

«Գաղտնիք»ի հեղինակը պատասխանում է մի այլ ձառով, որի մէջ բացատրում է Ղարաբաղի մելիքների յարաբերութիւնները ուստաց հետ, սկսեալ Պետրոս մեծից, եւ հասցնում է մինչեւ իւր ժամանակը<sup>1</sup>։

Հոետորները դարձեալ սկսում են վիճել, դարձեալ զօր են տալիս իրանց պերձախօսութեանը, բայց կարգով,

<sup>1</sup> Թէ առաջին եւ թէ երկրորդ ձառի բովանդակութիւնը ամբողջապէս առնուած է «Խամասյի Մելիքութիւններից»։

առանց մինը միւսին ընդմիջելու, եւ աւելի կարգով, քան թէ կ. Պօլսի այժմեան Ազգային երիսփոխանական ժողովը:

Հետաքրքիրն այն է, որ ժողովի բոլոր վեճաբանութիւններն արձանագրվում են:

“Խորհրդականաց խօսքերն նոյնութեամբ զ ը ու եցան. թերեւս ապագայ սերնդոց օգտակար կը լինին,, (Եր. 54):

“Որոշուեցաւ որ Օշափ-Բաղդասարն (Վիշապ-Բաղդասարը), Զարպազանն, Քիարփէթիւնն (Քալքաթինը), Փէջլուանն (Հսկան), Ալբէթիւնն (Աֆլաթունը), Պողպատն եւ Զափարն (Կոտորողը) ալիւըները տանէին, Շուշում թողնէին եւ գալով մեզ միանային բանակատեղում,, (Եր. 55):

“Գաղտնիք, ի հեղինակը՝ միւսների հետ՝ գնում են Աղա-Մամադ-շահի բանակը՝ միանալու պարսիկների հետ եւ կոռելու պաշարուած բերդի դէմ, որի մէջ պատսպարուած էին նրանց ընտանիքները: Նրանք ամենափոքր երկիւղ անգամ չեն կրում, որ իրրահիմ-խանը նրանց զաւակներին, կանանցը դնել կը տայ նոյն գնդակների դէմ, որ նրանք կ'արձակեն իւր բերդի վրայ...”

Տեսնում էք այդ էշերով իրրահիմ-խանի համար ալիւր տանող գիւղացիները, ոչ միայն հրաշագործ պատերազմողներ են, այլ, միեւնոյն ժամանակ, ուսեալ, կը թեալ, խորին քաղաքագէտ եւ պարլամենտական անձննք են... Նրանք պատմութիւն գիտեն, նրանք գիտեն անցեալ համեմատել ներկայի հետ, նրանց իւրաքանչիւրին ծանօթ են իրանց ժամանակի բոլոր պետութիւնների միշագային յարաբերութիւնները... Երեւի լրագրներ եւս կարդում են...”

Մակար վարդապետը պատմութեան, ժամանակների, սովորութիւնների ու կարգերի հետ՝ այնպէս է խաղում, ինչպէս իւր “տէր ողորմեանի հատիկների հետ, կարծելով, թէ որ կողմն եւ ուզէ, կարող է գարձնել: Թուրքիոյ Հայոց ազգային սահմանադրութիւնը հիմնուեցաւ 1860 թուականին: Բայց Մակար վարդապետը 1795 թուին՝ նոյն սահմանադրական վարչութիւնը տեղափոխում է գիտէք որտեղ, — իւր ծննդավայր Խնածախ գիւղը...”

Ոչ միայն Խնածախի գոեհիկ գիւղացիները, որոնց հասկացողութեան եւ աշխարհահայեցողութեան հորիզոնը իրանց գիւղեւ սահմանից հեռու չէր տարածվում, այլ նոյն իսկ Ղարաբաղի նշանաւոր մելիքները, որ իսկապէս հոյակապ անձաւորութիւններ էին, — երբէք այս աեսակ ժողովներ չեն ունեցել: Երբ Ղարաբաղի մելիքները խորհուրդ էին կազմում, հաւաքվում էին մէկի տանը նատում էին թոնրի մօտ, մի կողմում դրած էր լինում զինին, օջախի վրայ ծխում էր խորովածը, մի կողմում լաց էր լինում անհանգիստ երեխան, հարսն ու աղջիկը ոտքի վրայ սպասաւորութիւն էին անում, տանտիկինը շերեփը ձեռին կերակուր էր ածում, — եւ երկրի իշխողները ուտում էին, եւ նահապետական պարզութեամբ խորհում էին իրանց երկրի չարն ու բարին:

Վերջապէս, Մակար վարդապետի “քաջերը” մօտենում են Շահի բանակին: Ընդունելութիւնը կատարվում է հանդիսաւոր կերպով. թէ “քաջերին խումբից եւ թէ բանակից հնչեցնում են փողերը, “ինչպէս ի հնուց սովորութիւն էր պարսից”<sup>1</sup>: Մելիք-Մէջլումը, Զաւադ-

<sup>1</sup> Մակար վարդապետը լսել է, որ երբ Հայոց դաշնակից զօրքերը մօտենում էին պարսից բանակին, երկու կողմից եւս փողեր էին հնչեցնում, ԿԱՊՆԻ գլուխ.

խանը եւ մի պատուաւոր անձն՝ Շահի կողմից դիմաւուրում են նրանց (եր. 135):

Մելիք-Մէջլումը, որ վայելում էր շահի առանձին յարգանքը<sup>1</sup>, ներկայացնում է քաջերին, եւ յականէ յանուանէ, գովարանում է թէ նրանց մատուցած ծառայութիւնները, թէ հաւատարմութիւնը եւ թէ նրանց կատարած քաջութիւնները (եր. 135, 136):

Շահը պատասխանում է մի ճառով, որի մէջ յատկապէս շեշտում է հայոց մատուցած վաղեմի ծառայութիւնների վրայ, եւ վերջացնում է այդ խօսքերով.

“Անվարծ չեն մսալու եւ ծեր քաջութիւններն եւ ծառայութիւնն” (եր. 136):

որը միմանց ողջունելու նշան էր: Բայց այդ սավորութիւնը շատ հին էր, կատարվում էր հայոց թագաւորների եւ նախարարների ժամանակներում:

1 Մելիք-Մէջլումը Ալարաբաղի Զըրաբերդ կոչուած գաւառակի մելիքն էր, որ միացած էր Աղա-Մամադ-շահի արշաւանքին եւ առաջնորդեց նրան թիֆլսի կործանման ժամանակ: “Գաղտնիքուի մէջ յեշվում է այն արտօնութիւնները, որ Շահը չնորհած էր Մելիք-Մէջլումն: Իբրեւ մի նոր մասնակի մասնակի մասնակի մասնակի մասնակի մասնակի Մելիքաստ, թէ ինչպէս “Գաղտնիքուը բառ առ բառ քաղում է խամայի Մելիքութիւններից”, ես կը բերեմ մի եւ նոյն խօսքերը.”

“Շահը չնորհած Մելիք-Մէջլումն այդ երեք արտօնութիւնները.

1. “Երբ եւ կամնայ, կարող է անարգել կերպով ել, եւ մուտ գործել իր մօտ:

2. “Ինչ որ խնդրելու լինի, նրա կամքը կը կատարուի,

3. “Ազգունի դանձարանը նրա արամագրութեան ներքոյ կը լինի:

“Խամայի Մելիքութ:” եր.

145—146:

“Շահն Մելիք-Մէջլումն չնորհած էր հետեւեալ արտօնութիւնները . . .

Ա. “Մելիք-Մէջլումն ամեն ժամանակ իրաւունք ունի ազատ ելեւածուած գործել Շահի մօտ առանց արգելքին:

Բ. “Ինչ խնդիր առաջարկելու լինի՝ Շահի կողմից կը կատարուի անպատճառ:”

Գ. “Շահական դանձարանն յանձնուած է մելիքին ըստ պահանջման հարկին ծափսել պիտոյից համար . . .:

“Գաղտնիքու” եր. 138:

Ո՞ր քաջութիւնները, ո՞ր ծառայութիւնները: —

Այն ծառայութիւնները, որ այդ “քաջերը” մի քանի ժամ առաջ կոտորեցին նոյն Շահի 5671 զօրքերը...<sup>1</sup>

Եւ շահը իսկոյն վարձատրեց: “Գաղտնիքու հեղինակ Արքահամ թէկնազարեանին, որ “քաջերին հրամանատարն էր, եւ որին Շահը “Հրաշագործ-Ազրայէլ”<sup>1</sup> էր կոչում (եր. 162), “ծակ-Քարին մօտ կատարած քաջագործութեան համար (որտեղ ընկան Շահի զօրքերը) շնորհեց մի առիւծաղրօշմ շքանշան, բայց “Հրաշագործ-Ազրայէլը, քաղաքավարութեամբ մերժեց, պատճառաբանելով, որ Շահը աւելի լաւ կ'անէ, եթէ կատարէ իւր խօստումները Ղարաբաղի ընդհանուր մելիքութիւնների վերաբերութեամբ (149):

Այնուամենայնիւ, Շահը, որովհետեւ ներքինի էր, զւեւակ չունէր, որդեգրեց “Հրաշագործ-Ազրայէլին որդի Ազրես թէկնազարեանին («Գաղտնիքու» երկրորդ հեղինակին) եւ նրա անունը Ալահվէրդի (Աստուածատուր) կոչեց, որովհետեւ Աստուած նրան մի զաւակ պարգեւեց (եր. 136): Այդ մասին խօսուեցաւ Դրդ զինում: — Իսկ նրա հօրը շնորհեց “զօրավարութեան” (?) աստիճան եւ պահեց իւր մօտ (եր. 170, 171, 172, 222): Այս տեղից է սկսվում հայր եւ որդի թէկնազարեանների երեւակայական ծառայութիւնը պարաից երեք թագաւորների մօտ, որի մասին խօսուեցաւ նախորդ զլուխներում:

Պէտք է ուղեղի սաստիկ հիւանդութիւն ունենալ՝ այս տեսակ ցնորքները իրեւեւ պատմութիւններկայացնելու համար:

Զկայ մէկը պարաից վերջն թագաւորների մէջ, որ Աղա-Մամադ-շահին նման սիրելի լինէր իւր զինուորնե-

1 “Հրաշագործ-Ազրայէլ” նշանակում է “Հրաշագործ-հոգեհան հրեշտակ”:

րին։ Եւ չկայ մէկը, որ նրա նման վըէժխնդիր եւ ոխակալ լինէր։ Նա պատրաստ կը լինէր ամբողջ հայոց ազգը ջնջել իւր զինուորներից մէկի մի կաթիլ արեան համար։ Իսկ նրա զօրքերին եւ զօրապետներին կոտորում են, նա, փոխանակ վըէժխնդիր լինելու, այս տեսակ վարձատրութիւններ է անում։

Ահա այն պատկերը, որը նկարելու համար, Մակար վարդապետը սպառել է իւր հանձարի բոլոր զօրութիւնը, — ահա այն փայլուն գոհարը, որ զարդարում է «Գաղտնիք»ի ճակատը։

## Ե.

Նախորդ երկու գլխում ծանօթացանք այն պատկերի հետ, որ «Գաղտնիք»ի զարդն է կազմում, — ծանօթացանք եւ այն հերոսների հետ, որոնց Մակար վարդապետը ներկայացնում է իրեւ նորագիւտ պատմական անձնաւորութիւններ։

Հայր սուրբը սկզբում կրել է այդ պատկերը միայն, բայց ոչ իրեւ պատմութիւն, այլ իրեւ մի փոքրիկ վէպիկ։

Հայր սուրբը ինքը ինածախցի գոլով, այդ գիւղը ընտրել է որպէս ասպարեզ իւր վէպիկի մէջ կատարուած գործողութիւնների։ Եւ այդ շատ բնական է։ Մեր բոլոր փոքր ի շատէ յայտնի վիպասանները գիւղացիներ են եղել։ Իւրաքանչիւրը իւր վէպիրի նիւթը առել է իւր հայրենական գիւղից։ Աբովեանցը անմահացրեց Քանաքեռը։ Աղայեանցը նկարեց լսաշենը։ Պոօշեանցը ծանօթացրեց մեզ Աշտարակի հետ։ Իսկ մեր նուաստութիւնը իւր մի քանի վէպիրի նիւթը առել է իւր հայրենական բնագաւառ Սալմաստից։

Հենց առաջին անգամ, երբ վիպասանը սկսում է գրել, նրան ներկայանում է իւր մանկութեան ծննդավայրը, որ աւելի մօտ է նրա սրտին, որ աւելի ծանօթ է նրան։

Մակար վարդապետին եւս շատ բնական էր, իւր վէպիկի նիւթը առնել լսածախից։ Այդպէս էլ արել է նա։ Եւ այդ է այն տարօրինակ երեւոյթի պատճառը, որ նրա բոլոր հերոսները, որոնց թիւը քառասունից անցնում է, այդ գիւղից են ծնվում։

Նրա նկարած պատկերը, ինչպէս երեւում է «Գաղտնիք»ից, սկզբում գրած է եղել խիստ նեղ շրջանակի մէջ։ Նա ներկայացնում էր Շուշի բերդի պաշարումը Աղա-Մամադ-շահից, ինածախցիների քաջագործութիւնները, Աղա-Մամադ-շահի երկրորդ արշաւանքը եւ նոյն բերդում սպանուիլը։ Այդքանը միայն։

Եթէ Մակար վարդապետը բաւականանար այդ պատկերով միայն, եւ նրան նոյն ձեւով ներկայացնէր ընթերցող հասարակութեանը, գուցէ նրան կատէին՝ վատ նկարիչ է, եւ աւելի ոչինչ։ Բայց իւր վերջին վարմունքով՝ ենթարկել է իրան մի այնպիսի պատասխանատուութեան, որ շատ ծանր պէտք է լինի նրա համար։

Հայր սուրբը, ինչպէս երեւում է «Գաղտնիք»ից, հրապուրուել է, եւ իւր ձեռնարկութեան մէջ շատ առաջ է գնացել։ Նա սկսել է ընդարձակել իւր պատկերը։ Եւ նոյն հերոսներին, որ նա ստեղծել էր միայն այդ պատկերի մէջ գործելու համար, — նոյն հերոսներին մացրել է այն բոլոր պատերազմների եւ քաղաքական յարաբերութիւնների մէջ, որ կատարուեցան Անդրկովկասում, սկսեալ այն օրից, երբ ռուսները առաջին անգամ ոտք դրեցին այդ երկրի վրայ, մինչեւ նրանց կատարելապէս տիրապետելը։

Վերջին վարմունքը, շատ հասկանալի է, Մակար՝ վարդապետին պէտք է դնէր խիստ անելանելի դրութեան մէջ։ Սա իւր հերոսներին վիպական անձնաւորութիւններից դարձրեց պատմական անձնաւորութիւններ։ Այլ խօսքով, նա ստեղծեց մի պատմութիւն, — այն եւս կեղծ պատմութիւն։

Ի՞նչպէս պաշտպանել այդ կեղծութիւնը։ —

Միակ ելքը այն էր, որ Մակար վարդապետը ձեռքերը լուանար, մի կողմ քաշուէր, եւ բոլոր մեղքը ձգէր թէկնազարեանների վրայ, նրանց ցոյց տարով իրեւ հեղինակ գաղտնիքնի։ Այդպէս էլ արել է նա։

Այսուամենայնիւ, Մակար վարդապետը ցանկացել է, որ գաղտնիքը ոչ միայն պատմական արժէք ունենար, այլ նա երեւան հանէր այնպիսի վտանգաւոր գաղտնիքներ, եւ պատմութեան համար՝ այնպիսի թանգագին գանձեր, որոնք բոլորովին անյայտ էին մինչեւ այդ գլքի լոյս տեսնելը։

Որքան մեծ է այդ խոստմունքը, նոյնքան դժուարին է նրա կատարելը։ Ո՞րտեղեց գտնել թանգագին գանձերը։

Որպէս զի գործից մաքուր գուրս գայ, Մակար վարդապետը իրան թոյլ է տուել այն վարմունքը, որ սովորաբար գործ են դնում կրկէնների կառավարիչները։ Յայտաթղթերի վրայ խոստանում են աներեւակայելի ներկայացումներ։ Մեծ փափագով հաւաքվում է հասարակութիւնը, եւ յանկարծ մէկը դուրս է դալիս, եւ խոնարհաբար ազդարարում է յարգելի հասարակութեանը, թէ այսինչ ձեռնաձուի կամ այնինչ խեղկատակի հիւանդութեան պատճառով՝ խոստացած ներկայացումը յետաձգվում է, իսկ նրա փոխարէն տրվում է մի ուրիշ։

Նոյնը արել է եւ Մակար վարդապետը։

«Գաղտնիքնի 89—92 երեսներում յիշվում են 7 բոլորովին անյայտ պատմագրների անուններ, եօթն հրաշալեաց խորհրդաւոր թուով։ Այդ եօթանց խումբը յայտնվում է մի եւ նոյն դարում եւ գրում է 15 հատոր պատմութիւններ Ղարաբաղի վերաբերութեամբ։ — Ահա այն հարուստ գանձարանը, ահա այն անսպառ աղբիւրները, որոնցից օգուտ քաղելով, «Գաղտնիքնի հեղինակը պէտք է մատակարարէր մեզ իւր խոստացած անդին գանձ երը։

Հետաքրքիր են այդ պատմագրների եւ նրանց հեղինակութիւնների անունները։

Ա. Եթե մի ա (չասան-ջալալեան) կաթուղի կոստուղիս գանձարայ վանքի, գրել է.

1. «Պատմութիւն կաթողիկոսացն Աղուանից»։

2. «Ծագումն թագաւորացն Աղուանից»։

3. «Ծագումն Զալալեան տոհմի ի Վախթանկ թագաւորացնէ», որը իբր թէ Զալալեան Գրիգորիս եւ Եղիա վարդապետների պատմութեան շարունակութիւնն է եղել<sup>1</sup>։

4. «Ժամանակադրութիւն անցից»։ Որ Ղարաբաղում կատարուած քաղաքական եւ եկեղեցական պատմութիւնների վարդապետների անունները կաթողիկոսի վախճանուելուց 462 տարի առաջ (1228 թ.) եւ նրանք ոչ մի պատմութիւն չեն թողել, որ շարունակած լինէր Երեմիա կաթողիկոսը։ Կիրակոս Գանձակեցին իւր պատմութեան մէջ (Եր. 159) յիշում է այդ երկու վարդապետների անունները, բայց ոչ իբրեւ պատմագրների, այլ իբրեւ արքակոսն արեղաների։ Եթէ նրանք պատմութիւն գրած լինէին, անկարելի էր, որ չգիտենար Գանձակեցին։ Տես պատմութիւն կիրակոս Գանձակեցւոյ, տպուած Մոսկուայում 1858 ամի։

<sup>1</sup> Գրիգորիս եւ Եղիա վարդապետները վախճանուել են Երեմիա կաթողիկոսի վախճանուելուց 462 տարի առաջ (1228 թ.) եւ նրանք ոչ մի պատմութիւն չեն թողել, որ շարունակած լինէր Երեմիա կաթողիկոսը։ Կիրակոս Գանձակեցին իւր պատմութեան մէջ (Եր. 159) յիշում է այդ երկու վարդապետների անունները, բայց ոչ իբրեւ պատմագրների, այլ իբրեւ արքակոսն արեղաների։ Եթէ նրանք պատմութիւն գրած լինէին, անկարելի էր, որ չգիտենար Գանձակեցին։ Տես պատմութիւն կիրակոս Գանձակեցւոյ, տպուած Մոսկուայում 1858 ամի։

թիւնն է, որի մէջ կարգով զրուած են եղել բոլոր  
մելիքների գործերը<sup>1</sup>:

Բ. Եղիա վարդապետ Հասան-Ջալալեան<sup>2</sup>:

1. «Արշաւանք թաթարաց եւ պատերազմ ի Կաչա-  
ղակաբերդին»:

Գ. Եսայի (Հասան-Ջալալեան) կաթողե-  
կոս Գանձասարայ վանքի:

1. «Ճագումն եւ պատմութիւն Մելիք-Հայկազեանց  
Մելիք-Եսայիեայ, իշխողին Քրաբերդի»:

2. «Ճագումն եւ պատմութիւն Մելիք-Աբովի Առաջ-  
նոյ, իշխողին Կիւլստան գաւառի»:

3. «Յարաբերութիւն Հայոց ընդ Ռուսաց», որի մէջ  
ժամանակագրական կարգով զետեղուած են եղել, սկսեալ  
1727 թուականից<sup>3</sup>, Հայոց կաթողիկոսների եւ մելիքների  
ոռուսաց կառավարութեան հետ ունեցած յարաբերու-  
թեանց պաշտօնական թղթերի օրինակները: Նոյն պատ-  
մութեան մէջ իւրաքանչիւր նոր գահակալող կաթողիկոս  
շարունակել է գրել իւր ժամանակի գործերը, նոյնպէս  
ժամանակագրական կարգով:

Դ. Մովսէս վարդապետ միաբան Գանձասա-  
րայ վանքի.

1. «Վանորայք Արցախի եւ կալուածք նոցա»: Այդ  
պատմութեան մէջ նշանակուած են եղել Ղարաբաղի

<sup>1</sup> Երեմիա կաթողիկոս Հասան-Ջալալեանը, Բնչպէս կարող էր գրել  
բոլոր մելիքների գործերը, քանի որ նա վախճանուեցաւ 1700 թուականին,  
իսկ մելիքները գործում էին մինչեւ 1830 թուականները: Ահա փառը խօ-  
չէր կարող երկնքում պատմագրութեամբ պարապուել:

<sup>2</sup> Կարդա ծաթ. 1, եր. 663:

<sup>3</sup> Ահա մի նոր պատմագիր եւս, որ երկնքումն է գրում: Եսայի կա-  
թողիկոս Հասան-Ջալալեանը վախճանուեցաւ 1726 թուին, Բնչպէս կարող  
էր գրել նա սկսեալ 1727 թուից Հայոց մելիքների ոռուսաց հետ ունեցած  
յարաբերութեանց գործերը:

բոլոր վանքերի անունները, նրանց արձանագրութիւնները,  
նրանց կալուածքների տարածութիւնը իրանց սահմաննե-  
րով, նուիրողների անունները, նրանց կալուածագրերը,  
թագաւորների հրովարտակների օրինակները, որ հաստա-  
տում էին այդ կալուածքները իբրեւ սեպհականութիւն  
վանքերի եւ այլն:

Ե. Վարդապետ վարդապետ վանահայր Գտիչ  
վանքի:

1. «Պատմութիւն մելիքաց Դիղակի եւ Վարանդի»:

2. «Դիւցաղնական քաջագործութիւնք մելիքաց»:

3. «Ճագումն Փանահ Ճըռ-Խանի եւ Ճըռ-Մելիք-  
Միլզախսնի»:

4. «Խարայէլ Ճըռ-Կաթողիկոս եւ գործք իւր»:

Զ. Եղիա վարդապետ միաբան Ամարասայ  
վանքի:

1. «Մահմանք Հայ մելիքաց»: Որի մէջ զրուած է  
եղել Ղարաբաղի մելիքների տիրած երկների սահման-  
ները, բերդերի թիւը եւ նրանց նկարագրութիւնները, Ժո-  
ղովրդի որքանութիւնը, գիւղերի անունները եւ բնակչաց  
թիւը, զօրքերի քանակութիւնը եւ այլն:

Է. Ղեւոնդ վարդապետ, վանահայր Ղեւոն-  
դեանց անապատի:

1. «Մելիք-Շահնազար Երրորդ»: Որի մէջ զրուած  
է եղել Մելիք-Շահնազարեանների տոհմի ծագումը եւ  
նրանց ժառանգների գործերը:

Ծեսնում էք, որքան առատութիւն... Ղարաբաղը  
որքան Հարուստ է եղել իւր պատմագրներով եւ պատ-  
մութիւններով: Եւ ինչ բախտաւոր պատմագրներ, նրանք  
խմբով յայտնվում են մի եւ նոյն դարում, եւ իրանց  
զօրքերի մէջ մի բան չեն թողնում, որի վրայ ուշադրու-

թիւն չդարձնէին, — մինչեւ անդամ վիճակադրութիւն...

Իսկ «Գաղտնիք»ի հեղինակը օգուտ քաղեց այդ գանձերից: —

Դժբախտաբար, — ո՛չ:

Ինչու: —

Ահա ինչու:

«Բայց հարազատ-մելիքներն, բոլոր ծեռագրերը եւ թղթերը սրբազն կանխաւ երեք մասն քաժանած եւ թագրած էին, յորոց առաջին մնացը թազգրած էին Գանձասարի եւ Խօթա վանքի մէջ տեղում՝ մի քարայրում՝ եւ քերանը ամրացրած քարուկիր պատով եւ անյայտացրած, երկրորդ մնացը Զրաքերդի մի ստորերկեայ եւ անյայտ քարայրում՝, իսկ երրորդը Կիւլստան գաւառի Հոռեկայ վանքի մօտերում», (Եր. 89):

Ի՞նչ հարկ կար այդ անմեղ պատմութիւնները՝ այդպէս զանազան տեղերում՝ երեք գերեզմանների մէջ թաղելու:

Այդ հարկը այդպէս է բացատրում «Գաղտնիք»ի հեղինակը:

«Երեք մնացը քաժանելու պատճառն այն է, որ ոչ միայն ծըռ-խանն (իբրահիմ-խանը) հետազոտում՝ էր ոչնչացնել այդ ծեռագրերը, այլ եւ Մելիք-Շահնազար Գ-ն եւ ծըռ-մելիք Միրզախանն (իբրահիմ-խանի կուսակիցները), քանզի այդ ծեռագրերում անաշառապէս պատմած արարքները, եւ հարազատներից ծըռերի (անհարազատների) եւ հարազատների արարքը», (Եր. 89):

Ծիծաղելք է: Ղարաբաղե մելիքները իրանց ամրոցներով եւ անմատչելի բերդերով, իրանց անթիւ զօրքերով՝ ինչպէս էին պահպանում մի ամբողջ երկիր, երբ նրանք

անզօր էին 15 հատ գիրք պահելու: Կամ այդ գրքերը մելիքների մօտ ինչ էին շինում: Եւ եթէ նրանք այնքան հմաւտ մարդիկ էին, որ հասկանում էին այդ գրքերի նշանակութիւնը, ինչու երբ գաղթեցին գէպի Գանձակի եւ Վրաստանի կողմերը, չտարան գրքերը իրանց հետ, այլ թաղեցին գետնի տակ, որ փառեն: Եւ վերջապէս մի թէ այդ գրքերը մի-մի օրինակներ էին, որ թաղուելով գետնի տակ, մոռացուեցան եւ բոլորովին անյայտացան:

Դժբախտաբար մի-մի օրինակներ էին: Ահա ինչ է ասում այդ մասին «Գաղտնիք»ի հեղինակը.

«Հարկ է ասել որ այս ծեռագիր գրքերն տակաւին ընդօրինակուած եւ ժողովրդեան մէջ ցըռած չեն (չեն), այլ հաւաքուած են (էին) Գանձասարի հնադարանում՝, քան զի թէ Մելիք-Շահնազար Գ-ն եւ թէ Խորայէլ ծըռ-կաթողիկոսն հետամուտ եղած են (էին) քազմից անյայտացնել այդ ծեռագրերը: Այս միջոցին դիմած են սոքա, որպէս զի եթէ հնար է, իրեւանց մահից յետոյ պատմութեանց մէջ չմնային իրեւանց վատ արարքներն, եւ ապազայ սերունդներից ծածկէին իրեւանց ամօթը ու նախատինքը: (Կարծես ամբողջ 15 գրքերը միայն Մելիք-Շահնազարի եւ Խորայէլ կաթողիկոսի գործերի մասին զրուած լինէին:) Այսպէս հետամուտ եղածէին ոչնչացնել այդ ծեռագրերը եւ բոլոր ծըռերն: Ահա ծեռագրերը թագցնելու պատճառներն,, (Եր. 91, 92):<sup>1</sup>

<sup>1</sup> Որպէս զի ցոյց տայ, թէ իրաւ թագյրած են եղել պատմութեան գրքերը, Մակար վարդապետը իւր ծանօթութեան մէջ (Եր. 89) ասում է, թէ նրանց մի մասը գտաւ Բաղդասար միտրապօլիսը, որոնց թւում գանվում էր Լուսի կաթողիկոսի հեղինակած «Պատմութիւն Աղուանից» գիրքը, եւ ուրիշ շատ ձեռագրեր, որք անյայտացած են Շուշու Առաջնորդանից Բաղդասար սիրազանից յետոց: (Ուրբան սիրում է Մակար

Այդ բոլորը Մակար վարդապետի թքով կպցրած պատճառաբանութիւններն են . . .

Այսինչ ձեռնածուի եւ այն ինչ խեղիատակի հիւանդութեան պատճառով ներկայացումը յետաձգվում է . . .

Բայց Մակար վարդապետի երեւակայական պատմագրները իրանց երեւակայական պատմութիւններով, ոչ միայն հիւանդանում են, այլ գետնի տակ թաղուերով, — մեռնում են . . .

Ուրեմն, այլ եւս ի՞նչ մեղաւոր է «Գաղտնիք»ի հեղինակը, որ նա չկարողացաւ իւր խոստացած պատմա-

վարդապետը գրքերի այդ անխնայ կոտորածը . . . նրա մօտ ամեն ձեռագիր աշխատութիւն անյատանում է . . .): Ճշմարիտ է. Բաղդասար միտրապօլիսի օրերում մի թուրք հովիւ լեռների ծերպերի մէջ գտել էր մի քանի եկեղեցական գրքեր, եւ սբբազմնը, նրան մի եզն տալով, առել էր այդ գրքերը: Բայց նրանց թուրում ոչ Եսայի կաթողիկոսի «Աղուանից պատմութիւնը» կար եւ ոչ Ղարաբաղի վերաբերութեամբ մի այլ պատմական աշխատութիւն: — Թէ ո՞ր թուականին գտաւ Բաղդ. միտրապօլիսու Եսայի կաթողիկոսի «Աղուանից պատմութիւնը», — այդ մասին լուսում է Մակար վարդապետը, եւ նրա լուսութեան պատճառը կը հասկացուի յետոյ: Միայն այս քանը յայտնի է նրա խօսքերից, որ սրբազննը գտաւ յիշեալ պատմութիւնը, երբ արդէն եպիսկոպոս էր եւ Ղարաբաղի միտրապօլիս: Բաղդասարը եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Եփրեմ կաթողիկոսից 1820 թ., իսկ Ղարաբաղի միտրապօլիտ կարգուեցաւ նոյն կաթողիկոսից 1830 թուին: Ուրեմն, Մակար վարդապետի խօսքով, այդ թուականներից յետոյ պէտք է գտած լինէր միտրապօլիսը Եսայի կաթողիկոսի «Աղուանից պատմութիւնը»: Իսկ իմ գրասեղանի պահարանում այսօր կարելի է տեսնել Բաղդասար միտրապօլիսի իսկական ձեռքով գրուած քաղուածքները Եսայի կաթողիկոսի պատմութիւնից եւ այդ պատմութեան շարունակութիւնը, որ նա արել է այն ժամանակ, երբ ինքը առկաւին վարդապետ էր, եւ իւր հօրեղբայր Սարգիս կաթողիկոսի հետ գտնվում էր Հաղբատայ վանքում: Ուրեմն այդ գրքի հետ ժամանթ էր նա նախ քան 1820 թուականները, եւ ոչ Մակար վարդապետի հնարած գիւտից յետոյ:

Այդ ծանօթութիւնը չպիտի մոռանալ, որովհետեւ դա կը բացատրէ «Գաղտնիք»ի հեղինակի մի քանի նոր խարդախութիւնները, որ կը տեսնենք յետոյ:

կան «ան գին գանձերը, մեզ աւանդել, երբ այն բոլոր գրքերն, որ պէտք է ծառայէին նրան իրեւեւ աղբիւր, այդպէս տարաբախտ կերպով ոչնչացան . . . եւ նրա ձեռքին չհասան . . .

Ամեն ինչ մտածել է Մակար վարդապետը «Գաղտնիք», ի կեղծութիւնը ծածկելու համար, բայց մի բան մոռացել է:

«Գաղտնիք», ի հեղինակ Աբրահամ Բէկնազարեանը («Հրաշագործ-Ազրայէլը, — հոգեհան հրեշտակը») խօ գիտէր յիշեալ գրքերի թագցրած տեղերը: Նա իւր ձեռքի տակ ունէր 7000 գինուորներ եւ 70—80 հականեր: Իրբահիմ-խանը եւ նրա կուսակից «Ճըռ-մելիքներն» տերեւի նման դողում էին նրա երկիւղից: Նա ինքը Ղարաբաղի պատմութիւնն էր գրում: Այդ գրքերը նրան շատ հարկաւոր էին: Ինչու մի օր չը վեր առեց իւր «Վիշապներին», իւր «Առիւծներին», եւ իւր «Կայծակներին», եւ չգնաց այդ գանձերը դուրս հանելու եւ թողեց, որ անյայտութեան մէջ ոչնչանային . . .

Դիցուք թէ «Գաղտնիք», ի հեղինակը չմտածեց այդ մասին: Բայց նա ինքը Մաթուսաղայի տարիքն ունէր, ապրել էր համարեա երկու դար, ամեն ինչ իւր աչքով տեսել էր եւ ամեն գործողութիւնների մէջ անձամբ մասնակցել էր, եւ բացի գրանցից, նա ինքը Գանձասարի ներսէս կաթողիկոսի մօտ անյայտ նիւթեր էր ընդօրինակում իւր «Գաղտնիք», ի համար (եր. 15): — Այդ նիւթերը ի՞նչ եղան, որ չմտան «Գաղտնիք», ի մէջ: —

Նրանց հետ եւս դժբախտութիւն պատահեց . . .

Երբ «Գաղտնիք», ի հեղինակը հիւանդ գրուած էր մահուան անկողնի մէջ, իւր որդի Ապրես Բէկնազարեանին

շատ խրատներ տալուց յետոյ, յանձնեց նրան թանգաղին աւանդը, որ նա արձանագրէր “Գաղտնիք, ի մէջ:

Այդ խորհրդաւոր լոսկէն հետեւեալ կերպով է նկարագրում որդի Բէկնազարեանը.

“Յետոյ իւր առ իս աւուղի պինդ կարած ծոց աչէ պի կարերը քանդելով հանեց մի կարմիր ծրարեւ զայն ինձ տալով ասաց.

“Եւ դու սիրելի որդեակ իմ Ապրես, ան այս ծրարը, որորա մէջ են Մեծին-Պետրոսի Ղարաբաղի հարազատ-մելիքներին գրած, Եկատերինէ Բ. կայսրուհուն Աղուանից կաթողիկոսին եւ մելիքներին ուղղած պայմանաթղթոց պատճենները, եւ սոցա առ նոսա գ աղ տ նի գրած պայմանաթղթոց պատասխանների ընդօրինակութիւնները, Արդութեանց Յովսէփ Եպիսկոպոսին, Աշտարակեցի Ներսէս Եպիսկոպոսին, Մինաս-աղա Լազարեանցին, Մատաթովին, Մելիք-Վանուն, մեծ Եարմանովին Ներսէս Եպիսկոպոսի ճեռով հայերէն գրել տուած եւ ինձ ողկած ամեն ած ածուկ եւ վ տ անգ աւոր նամակներն: Այս քոյոր թղթակցութիւնները, որք վերաբերում են Ռուսաց Հայոց հետ կապած պայմանաց եւ գ աղ տ նի յար աքերութեանց ժամանակագրական կարգաւոր գետեղիր քո: “Գաղտնիք Ղարաբաղի,, պատմութեան մէջ, որովք թէ հետաքրքիր կը լինի ընթերցողաց քո պատմութիւնդ եւ թէ չեն կորչիր, ինչպէս կորած են Ղարաբաղի ճեռագիր պատմութիւնները: (Նրանք, որ դու ինքդ թաղեցիր գետնի տակ...) Որքան լիս կը սփոնն ապագայ հայ պատմութեան ինչպէս “Գաղտնիք Ղարաբաղին,, նոյնպէս այդ նամակներն: Բայց զգուշացիր որ քո ճեռագիր պատմութեան գլխին եւս փորձանք չպատահի,, (Եր. 388):

Փորձանքը պատահեց... Մակար վարդապետը “Գաղտնիք,,ի բնագիրը կորցրեց...

Իսկ ինչ եղան այն “ա մենածածուկ,, եւ “վտանգաւոր,, նամակները, ինչ եղան այն գաղտնի յարաբերութեանց պայմանագրերը, որ ամփոփուած էին “կարմիր ծրարի,, մէջ: —

“Կարմիր ծրարի,, հետ եւս փորձանք էր պատահել...”

“Երբ բացի այն ծրարը, — շարունակում է որդի Բէկնազարեանը, — որ նամակներին ընդօրինակութիւնը զետեղէի այստեղ (‘Գաղտնիք,,ի մէջ) Աստուած իմ, ինչ տեսայ: Տեսայ որ մի տառ անգամ մնացած չէր թղթոց վերայ: Թղթերն ըրտինքներից փթած եւ յաճախակի շարժումներից տրորուած եւ տառերն ըոլորովին անյայտացած էին, քանզի գիշեր եւ ցերեկ հայրս միշտ իւր վերայ էր կրում այդ ծրարը (ուրեմն արդաւուղով էր քնում) եւ ինձանից անգամ զգուշութեամբ պահում: Լալով այրեցի ակամայ այդ անօգուտ թղթերը հանդերձ ծրարովն,, (Եր. 390):

Շատ ապրի Ապրես Բէկնազարեանը, որ այդ հոգսից եւս ազատեց Մակար վարդապետին...

Տեսնում էք “Գաղտնիք,,ի հեղինակը ինչպէս ճարպիկ կերպով գուրս պրծաւ իւր խոստացած պատմական “թանգաղին գանձերը,, մեզ մատակարարելու պարտաւորութիւնից...”

Պարսից երեք թագաւորների մօտ ամենաբարձր պաշտօններ կատարող Արքահամբ Բէկնազարեանը, 10.000 զօրքերի հրամանատար Արքահամբ Բէկնազարեանը, Փաթալի-շահի ներքինապետ Արքահամբ Բէկնազարեանը՝ մի արկղեկ անգամ չէ ունեցել այդ գանձերը պահելու. Հա-

մար... եւ սկսեալ Պետրոս մեծի օրերից, հայոց եւ ռուսաց 127 տարուայ (1701—1828) յարաբերութեանց թղթակցութիւնները պահում էր իւր արևուղի ծոցի գրանում... մի փոքրիկ կարմիր ծրարի մէջ...

Եթէ Մակար վարդապետը տեսած լինէր այն խոշոր հատորները, որ տպուած են ռուսաց լեզուով եւ բովանդակում են իրանց մէջ հայոց եւ ռուսաց յարաբերութիւնների ոչ թէ ամբողջ թղթակցութիւնները, այլ նրանց ցուցաները միայն, եւ որ կոչում են „Собрание октовъ, относящихся къ обозрѣнію исторіи армянскаго народа“ — այդ տեսնելուց յետոյ, կարծեմ, Մակար վարդապետը մի փոքր պիտի կարմրէր, մտածելով, որ թղթերի այդ ամբողջ արխիւր անկարելի էր ծոցի գրանում պահել...

Հարկաւոր է կրկին վերադառնալ դէպի վերեւում յիշուած 7 պատմագրները եւ դէպի նրանց թուով 15 գրաւոր վաստակները, որոնք այնպիսի տարաբախտ վիճակի ենթարկուեցան, — ասում եմ Հարկաւոր է, այն նպատակով, որ դրանով պէտք է բացատրուի „Գաղտնիք,,ի հեղինակի մի նոր օյ ինք ու թիւնը: Ուրիշ աւելի յարմար բառ հազիւ թէ կարելի է գտնել մի նենդաւոր վարմունք արտայայտելու համար:“

Այն բոլոր նախամտածութիւնները, — 15 պատմական մատեանների զանազան տեղերում թագցնելը եւ անհետացնելը, — նրանց միայն մի-մի օրին ակ լինելը, — այդ գրքերի բաղդասար միտրապօլիտի ջանքերով գտնուած օրինակների դարձեալ անհետանելը Շուշի առաջնորդարանի գրադարանից, — Աբրահամ Բէկնազարեանի գրապանում մնացած թղթերի ոչնչանալը, — այդ բոլորը, կրկնում եմ, սկսեալ 15 պատմագրների թաղու-

մից, մինչեւ “Գաղտնիք,,ի բնագրի թաղումը, որ կատարուեցաւ Մակար վարդապետի ձեռքով, — այս, այդ բոլորը, ինքն ըստ ինքեան, ծագեցնում է մի միտք, մի խորին տարակուսանք. Տէր Աստուած, ի՞նչ մի Ճակատագրական անէծք կար այդ դժբախտ գրաւոր վաստակների վրայ, որ այդպէս ցաւալի կերպով դապապարտվում են կորստեան, որ այդպէս ոչնչանում եւ անհետանում են...“

Այդ խնդիրը պարզելու համար, նախ պէտք է պարզել այն հարցը, արդեօք յիշեալ 15 մատեանները եւ նրանց 7 պատմագրների խումբը որ եւ է ժամանակ գյութիւն ունեցել են, թէ ոչ:

7 պատմագրների մէջ միայն երկու անուններ կան, որ մեզ բաւական յայտնի են: Մնացեալ 5ը ես թողնում եմ Մակար վարդապետին ապացուցանել, արդեօք որ եւ է ժամանակ գյութիւն ունեցել են, կամ պատմութիւն գրել են, թէ ոչ:

Մեզ յայտնի անունները գրանք են.

1. Երեմիա կաթողիկոս Հասան-Ջալալեան, գահակալ գանձասարայ վանքի, օծուեցաւ 1675 թուին, վախճանուեցաւ 1700 թուին:

2. Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալեան, գահակալ գանձասարայ վանքի, օծուեցաւ 1701 թուին, վախճանուեցաւ 1726 թուին:

Վերջինը առաջնի եղբօր որդին էր:

Առաջնը, Երեմիա կաթողիկոսը, արդեօք գրել է պատմութիւն, թէ չէ գրել, — յայտնի չէ: Երա գրաւոր վաստակներից մեր ձեռքը ոչինչ չէ հասել: Այդ եւս թողնում եմ Մակար վարդապետին պարզաբանել:

Երկրորդը, Եսայի կաթողիկոսը, իրաւ է, գրել է պատմութիւն: Իւր աշխատութիւնը սկսել է նա

1036 թուականից եւ հասցրել է մինչեւ 1711 թուականը<sup>1:</sup>

Դա միեւնոյն արժանայիշատակ անձնաւորութիւնն է, որ Ղարաբաղի մելքների Պետրոս մեծի հետ ունեցած քաղաքական յարաբերութիւնների մէջ խիստ եռանդուտ գեր էր կատարում։ 1722 թուին դա էր, որ Ղարաբաղի հայոց զօրքերով, վրաց վախթանգ թագաւորի հետ, դանձակի մօտ սպասում էին Պետրոս մեծի գալստեանը։ Խակ երբ Պետրոս մեծը զանազան հանգամնքների պատճառով վերադարձաւ Դերբենդից, — դարձեալ դա էր, որ 1724 թուին գնաց Ռուսաստան եւ անձամբ տեսնուեցաւ Կայսրի հետ։ Վերադարձին օծեց նա Աստրախանի նորահաւաք հայ գաղթականների կառուցած մայր եկեղեցին։ Իւր վերջին գործողութիւնները գրեց նա առանձին գրքով, որը յիշատակարանի ձեւ ունի։

Մակար վարդապետի ստեղծած միւս 6 պատմաբաններին, հանդերձ իրանց ստուար մատենագրութեամբ, մենք կը զեջանէինք հայր սուրբին, եթէ զոնէ Եսայի կաթողիկոսի աշխատութիւններից մի բան առած եւ մեզ հաղորդած լինէր։

Բայց ինչն է ստիպել նրան այսպէս անխնայ կերպով ոչնչացնել իւր ստեղծած պատմագրներին։ —

Շատ հասկանալի է, թէ ինչը։ — Որպէս զի “Գաղտնիք,,ից շատ բան չպահանջուի։ Որպէս զի չասեն, լաւ,

<sup>1</sup> Եսայի կաթողիկոսի լիակատար պատմութիւնը մեր ձեռքը չէ համել. նրա խիստ կրծառած համառօտութիւնը բաղդասար միտրապօհարը 1839 թուին տպագրել տուեց Շուշի քաղաքում հետեւեալ վերնագրով. «Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից, համառօտագրեալ ի Արբազնակատար Կաթողիկոսէն Աղուանից ի Տէր Եսայեայ Հասան-Ջալալեանց, ի թուականին հայոց ՌՃԱ, խակ ի թուականի Տեառն մերոյ Փրկին Յիսուսի 1711»։

այդ բոլորը, ինչ որ կայ “Գաղտնիք,,ի մէջ, մեզ համար դաղմնիք չէր՝ նախ քան այդ գրքի լցու տեսնելը, — ուրեմն “Գաղտնիք,,ը ինչ գաղանիքներ երեւան հանեց, ուր մնացին նրա խոստացած “թանգարակ գանձ ձերը, . . . նրա խոստացած “ամեն ավտանգար գանձ ուռու գաղտնիքն երը, . . . Որպէս զի Մակար վարդապետը իրաւոնք ունենայ ասելու. թէ այդ բոլորը կային եւ կը լինէին, բայց ինչ արած, որ պատմութեան 15 գրքեր անյայտացան, գետնի տակ թաղուերով, խակ ինչ որ պահուել էր Արքահամ Բէկնազարեանի արխալուղի ջերում, — այն էլ մեղքից փանց, ոչնչացաւ . . .

Պրծաւ, գնաց . . .

Մակար վարդապետը իրան մատնած կը լինէր, եթէ մի որ եւ իցէ յայտնի աղբիւր ցոյց տար իւր աշխատութեան, որովհետեւ, այն աղբիւրները ուղղակի կերպով պէտք է հակառակէին այն բոլոր առասպելաբանութիւններին, այն բոլոր աններելի աղաւաղումներին, որ նա արել է “Գաղտնիք,,ի մէջ։ Այդ է պատճառը, որ նա յիշում է այնպիսի երեւակայական պատմաբանների եւ պատմութիւնների անուններ, որոնք երբէք գոյութիւն չեն ունեցել, եւ որոնց հետ անկարելի կը լինէր համեմատութիւններ անել, կամ ստուգել “Գաղտնիք,,ի առակարանութիւնները։

Մակար վարդապետի վարմունքը նմանում է կաքաւների վարմունքին, որոնք՝ որսորդից փախչելու միջոցին՝ իրանց գլուխները թաղում են ձիւնի մէջ եւ անշարժ կանգնում են, կարծերով, եթէ իրանք որսորդին չեն տեսնում, որսորդն էլ նրանց չի տեսնի։

Կրիտիկայի հալածանքից աղաւառելու համար, Մակար վարդապետը աշխատել է երեւակայութեամբ բոլոր

պատմագրներին թաղել զանազան տեղերում, որպէս զե  
կատարուած խարդախութիւնները ծածկուին: Բայց նա  
մոռացել է, որ դեռ եւս կան եւ մնացել են շատ աղ-  
բիւրներ, որոնք կարող են երեւան հանել նրա իւրաքան-  
չեւր տողի կեղծութիւնը:

Եւ այդպէս, “Գաղտնիք, ի պատմական մասը ոչ մի  
նոր եւ մեզ անյայտ աղքիւր չունի: Այդ մասը առնուած  
է “Ղամայի Մելիքութիւններից,, այն զանազանութեամբ  
միայն, ինչ որ փոփոխել է Մակար վարդապետը եւ ինչ  
որ աւելացրել կամ պակասացրել է, — դրանք կամայա-  
կան զեղծումներ եւ անխիղջ մեղանչումներ են ճշմարիտ  
պատմութեան դէմ: Ես կարող եի համեմատութիւննե-  
րով ցոյց տալ այդ, բայց իմ յօդուածը, առանց դրան  
եւս շատ երկարացաւ: Բաւական է յիշել այդքանը մի-  
այն, որ հայր սուրբը իւր սաեղծած 70—80 հերոսներին,  
որոնց հետ ծանօթացանք նախընթաց զլուխներում, զօրով  
մոցրել է այն բոլոր նշանաւոր անցքերի եւ գործողու-  
թիւնների մէջ, որոնք կատարուել են Ղարաբաղի պատ-  
մական կեանքում: Ամեն տեղ վխոսում են այդ զանազան  
“Ղայծակներն,, ու “Ղարկուաները,, ամեն տեղ կան այդ  
զանազան “Ղիշապներն,, ու “Դէվէրը,, եւ ամեն քաջու-  
թիւն, ամեն սքանչելիք նրանց ձեռքով է կատարվում:  
Մակար վարդապետը այն աստիճան անխիղջ է դժոնուել՝  
որ իւել է Ղարաբաղի բոլոր մելիքների փառքը եւ յատ-  
կացրել է իւր դրացի գիւղացիներին:

“Գաղտնիք,, ը զարդացողների համար՝ ես մի օրինա-  
կով կը բացատրեմ այդ:

Մեղանից ամեն մէկին յայտնի է Խորենացու պատ-  
մութեան բովանդակութիւնը: Երեւակայեցէք մի այդպիսի  
բան. յանկարծ մէկը երդ կամ Երդ դարում դուրս

գալիս, զիցուք Տարօնի Հացիկ գիւղեց, եւ իւր գրացի  
գիւղացիներից ստեղծում է մի խումբ հերոսներ, եւ ա-  
ռանց ուշադրութիւն դարձնելու ժամանակագրութեան  
վրայ, իւր ստեղծած հերոսների ձեռքով կատարել է  
տալիս այն բոլոր գործողութիւնները, ինչ որ կատարել են  
Արշակունի թագաւորները կամ նրանց նախարարները  
իրանց ամբողջ պատմական կեանքում: Մի այդպիսի վար-  
մունք շատ հեշտ է մի խելագար պատմագրի համար,  
որովհետեւ նա Խորենացու գիրքը աչքի առջեւ ունի,  
պատմական փաստերը յայտնի են, միայն հարկաւոր է  
փոխել անձնաւորութեանց անունները, օրինակ, Տիգրանի,  
Արտաշէսի, Արշակի եւ միւս թագաւորների անուանց  
Արտաշէսի, Արշակի եւ միւս թագաւորների անուանց  
առեղջների գործերը: Դրանից, շատ հասկանալի է, պէտք է  
ջինների գործերը: Դրանից, շատ հասկանալի է, պէտք է  
առաջ գան աններելի անախրօնիզմներ, — ժամանակագրա-  
կան վրիպումներ, — որովհետեւ մի եւ նոյն անձնաւո-  
րութիւնը չէր կարող կատարած լինել թէ Տիգրան Բ-ի  
եւ թէ Արշակ Բ-ի գործերը, որոնք միմեանցից մի քանի  
ունինի ունինի: Այդ ոչինչ: Խելագար պատ-  
շար հեռաւորութիւն ունինի: Այդ ոչինչ: Խելագար պատ-  
շար հեռաւորութիւն ունինի: Էլեւ հասակը եւ նրանց  
մի քանի դար կեանք է տալիս:

Սոյնակէս վարուել է Մակար վարդապետը:

Նրա բոլոր հերոսները չեն մեռնում, դարեւոր կեանք  
ունինի: Նրանք ներկայ են Ղարաբաղի մելիքների բոլոր  
գործողութիւնների մէջ, սկզբից մինչեւ վերջը:

Սա առել է “Ղամայի Մելիքութիւններից,, պատ-  
մական փաստերը եւ, փոփոխելով, չափազանց ձեւ տա-  
րանի կատարել է տուել իւր ինածախցիներին: Այնպէս  
որ “Գաղտնիք,, մէջ Ղարաբաղի իսկական մելիքները եւ

նրանց իւղեաշխները ոչ միայն սաստիկ նաև մանում են, այլ բոլորովին անյայտանում են։ Մարդ չգիտէ։ թէ ուր էին եւ ինչ էին շխնում մելքները, երբ խնածախցիք հրաշք-ներ էին գործում։ Ամեն անցքերի մէջ միայն նրանք են երեւում, սկսեալ Ս. Պետերբուրգից մինչեւ թէ հրան, եւ թէ հրանից մինչեւ թաւրիզ եւ թիֆլիս։ Ամեն տեղ տարածուած են նրանք եւ բոլոր գործողութիւնների ու յարաբերութիւնների կապերը նրանց ձեռքումն են։ Դրանք, մինչեւ անգամ, նատում են թագաւորների, թագաւորազների եւ պետական բարձր անձինքների մօտ, նրանց հետ վիճում են, նրանց յանդիմանական խօսքեր են ասում եւ նրանց հետ գաշնակցական պայմաններ են կապում։

Ես Մակար վարդապետի 70—80 հերոսներին մեծ զեջումներով իրան կը նուիրէի, եթէ զոնէ մէկի անունը նա ցոյց տար մի որ եւ է պատմութեան մէջ, Ղարաբաղի մասին շատերն են գրել, բայց ոչ մէկի մէջ Մակար վարդապետի «Զարբազանների», եւ «Վիշապների», անունները չեն երեւում։

Եւ, վերջապէս, այդ հսկաները, ինչպէս վերեւում յիշեցի, գարեւոր կեանք ունէին, ապրեցին 1700 թուականներից մինչեւ 1840-նական թուականները<sup>1</sup>, եւ վերջին թուականներից կենդանի Ղարաբաղում հազարաւոր մարդիկ կան։ Ի՞նչպէս եղաւ, որ հսկաներից ոչ մէկին չտեսան։

«Գաղտնիք» պատմական մասը այսպէս աղաւա-ղուած է։

<sup>1</sup> Ես 1840 ական թուականներն եմ վերառնում, որովհետեւ այդ ժամանակ է գոյվում «Գաղտնիք»ը։

Մնում է մի քանի խօսք ասել այն անթիւ թըլ-թակցութիւնների մասին, որոնցով լի է այդ գիրքը։

Թղթակցութիւնները «Գաղտնիք» ամենածիծաղելի կողմն են նենկայացնում։ Ս. Պետերբուրգի եւ թէ հրանի գիւաններից որքան պաշտօնական թղթեր են գրվում, որոնց խորհուրդը պէտք է գաղանի պահուէր, բոլորի կամ բովանդակութիւնը, կամ ամբողջ օրինակները մըտնում են «Գաղտնիք» մէջ։ Ուուս կամ պարսիկ պաշտօնականները ինչ թղթեր են գրում իրանց կառավարութիւններին, — նրանց օրինակներն գարձեալ մտնում են «Գաղտնիք» մէջ։ Հայոց կաթողիկոսների, եպիսկոպոսների, մելքների եւ այն բոլոր անձանց, որոնք քաղաքական որ եւ է գեր են խաղում, թղթակցութիւնները գարձեալ ընդարձակ տեղ են բռնում այդ գրում։ Անդրկովկասի խաները ծածուկ նամակներ են գրում պարսից թագաւորներին, — նրանց պատճէններն եւս կան այստեղ։ — Մի խօսքով, չէ կատարվում ոչ մի գաղտնի գրաւոր յարաբերութիւն, որ «Գաղտնիք» ծածուկ մնար։ Ամեն տեղ «Շէյթաններ» (սատանաներ), ամեն տեղ «Դէվեր» (գեւեր) կան եւ խաբարը խկոյն տանում են...

Մարդ զարմանում է, թէ որքան հեշտացրել է Մակար վարդապետը այդ ժամանակների հաղորդակցութիւնները։ Երբ Էջմիածնի կաթողիկոսին ոչ թէ ամիսներ, այլ տարիներ էին հարկաւոր մի նամակ Վաղարշապատից Գանձասարայ վանքը հասցնելու համար, — ընդհակառակն, «Գաղտնիք» մէջ ամեն մի նամակ Ս. Պետերբուրգից, կամ Մոսկուայից թուակում է եւ մի քանի ըստիւմ համար է թէ հրան կամ թաւրիզ։ Կարծես, աղաւանիները, կտուցներով բռնած, օդի միջով են տանում։

Այդ օդասլաց աղաւնիները Մակար վարդապետի  
“Շեյթան-Թունիները, “Կաքեւ-Զաքիները եւ զանա-  
զան “Լրտես-Սուլիներն են, որոնք, աներեւոյթ ուրուա-  
կանների նման, տարածուած են ամեն կողմերում, եւ  
ամեն տեղերից տեղեկութիւններ են հաղորդում։ Իսկ այդ  
բոլոր տեղեկութիւնների շուեմարանը եւ կենտրոնը Գաղտ-  
նիքնի հեղինակն է եւ իւր գիրքը։

Այդբոլորը կարդալով, այնպիսի տպաւորութիւն է գոր-  
ծում, թէ խարեբանների մի ամբողջ հասարակութիւն միա-  
բանուած էն՝ մի հրեշտոր կեղծութիւն սանդելու համար։  
Ի՞նչպէս են խարագրվում այդ կեղծ թղթակցու-  
թիւնները։ —

### Շատ հեշտ կերպով։

Ժամանակների եւ կառավարութիւնների պատմական  
յարաբերութիւնները յայտնի են, եւ նրանց համեմատ  
նամակներ են զրում։ Օրինակ, ռուսները տիրել են  
Անդրկովկասի մի մասը։ Այդ, ի հարկէ, հաճելի չէր կա-  
րող լինել պարսից թագաւորին, որը իրան այդ երկրի  
տէրն էր համարում։ Պարսից թագաւորը դիտաւորու-  
թիւն ունի պատերազմել ռուսների հետ եւ յետ խել  
կորցած երկրները։ Յառաջ քան պատերազմի յայտնելը,  
պարսից թագաւորանգը — Աբաս-Միրզան — աշխա-  
տում է Անդրկովկասի խաններին եւ Դաղստանի լեռնա-  
բնակներին նախապատրաստել կամ ապատամեթնել ռուս-  
ների դէմ։ Նրանց ծածուկ հրահանգներ կամ շրջաբե-  
րականներ է ուղարկում։ Այդ դէպքում ի՞նչ կը գրէ  
Աբաս-Միրզան իւր կրօնակիցներին։ — Շատ հասկանալի  
է, թէ ի՞նչ կը գրէ։

Բայց որքան էլ յարմարեցրած լինէին այդ թղթակ-  
ցութիւնների բովանդակութիւնը կատարուած անցքերի

եւ հանգամանքների հետ, այնուամենայնիւ, նրանց ձեւը,  
լեզուն, ոճը, շարադրութիւնը, իսկոյն ցոյց են տալիս  
Մակար վարդապետի բորիկութիւնը դիւանական հմտու-  
թիւնների մէջ, որը պակասում է նրան՝ կեղծը իսկակա-  
նին նմանացնելու համար։ Հասարակ լրտեսը թագաւորին  
ուղղակի նամակներ է գրում, այն եւս մի այնպիսի ան-  
փոյթ ձեւով, որ ընկերը ընկերին չի համարձակուի գրել։  
Միթէ հասարակ մահկանացուներ կարող են պարսից  
թագաւորին նամակներ գրել։ Նրան միայն կարելի է խըն-  
դիրքով դիմել, շարելով հազար ու մէկ փայլուն տիտ-  
ղոսներ, որ կապուած են նրա բարձր անուան հետ։ Այդ  
ձեւերը, այդ տիտղոսները, ի հարկէ, չէր կարող գիտե-  
նալ Մակար վարդապետը, որը, ի՞նչպէս երեւում է, իւր  
կեանքում ոչ մի պաշտօնական գրութիւն չի կարդացել։

“Դաղտնիքնի մէջ զետեղուած բոլոր թղթակցու-  
թիւնները կեղծ են։ — Կեղծ են, նախ այն պատճառով,  
որ այնքան թղթակցութիւններ, որոնք կառավարութիւն-  
ների եւ մասնաւոր բարձր պաշտօնականների գաղանի յա-  
րաբերութեանց արդիւնք են, — չէին կարող անմիջապէս  
“Գաղտնիքնի հեղինակի ձեռքը համար։ Ո՞վ էր նա եւ  
ի՞նչ էր նա, որ բոլոր հակառակ կողմերի խորհրդապահը  
եւ արխիւր լինէր։ Երկրորդ, այդ թղթակցութիւնների  
թէ խմբագրութիւնը եւ թէ մատակարարութիւնը կա-  
տարվում է այնպիսի անձանց ձեռքով, որոնք երբէք  
գոյութիւն չեն ունեցել։ Դրանք, որպէս ցոյց տուինք,  
Մակար վարդապետի ստեղծած մարդիկն են։ Եթէ այդ  
անձնաւորութիւնները գոյութիւն չեն ունեցել, — բոլո-  
րովին տրամաբանական կը լինէր մտացել, որ նրանց գոր-  
ծողութիւններն եւս չէին կարող գոյութիւն ունենալ։  
Ի՞նչպէս կարող է մէկը նամակներ գրել, կամ նամակներ

տեղ հասցնել, երբ նրա ես-ը հաւասար է զրօի: Կարելի է մէկի կողմից նամակներ շարադրել, իսկ այդ լինում է վէպերի մէջ, եւ ոչ թէ պատմութեան մէջ:

“Գաղանիք, ի բազմաթիւ թղթակցութիւնների մէջ միայն երկու նամակ կայ, որ իսկական են: Դրանցից մէկը Մելիք-Զումշուդ Մելիք-Շահնազարեանի նամակն է, որ գրուած է 1806 թ. դեկ. 2ին Շուշի քաղաքում (եր. 286—291), իսկ միւսը, Դիլիստանի Մելիք-Արովի նամակն է որ գրուած է 1807 թ. նոյեմ. 23ին Թիֆլիսում (եր. 292—296): Թէ առաջին եւ թէ երկրորդ նամակը ուղղուած են Աղա-Մինաս Լազարեանի հասցեին Ս. Պետերուրդ:

Արդեօք ի՞նչպէս են մտել այդ նամակները “Գաղտնիք, ի մէջ, — այդ գաղտնիքը ես թողնում եմ, որ լուծէ պ. Երիցեանը, որովհետեւ նոյն նամակների ուղարկն թարգմանութիւնը տպուած է նրա “Կավказская-Старина” անունով ամսագրի մէջ, 1872 ամի թիւ 2:

Արդեօք պ. Երիցեանը երկնքում բաժանորդներ ունէր, կամ “Գաղտնիք, ի հեղինակ Արրահամ թէկնազարեանը ստանում էր նրա ամսագրիր միւս կեանքում . . .

## Ը.

“Գաղտնիք, ի մէջ ինչ որ աւելի հետաքրքիր է, ինչ որ իսկապէս կարող էր պատմական արժէք ունենալ, — դա է մելիքների տոհմային ազգաբանութիւնը:

Ղարաբաղի մելիքութիւնները ներկայացնող հինգ իշխանական տների ազգաբանութիւնը, հանդերձ իրանց մանրամասն Ճիւղագրութեամբ, զետեղուած են “Գաղտնիք, ի մէջ (եր. 190—208):

Կարդալով այդ Ճիւղագրութիւնները, մարդ զարմանում է, թէ “Գաղտնիք, ի հեղինակը որտեղից եւ ի՞նչ աղքիւրներից առել է անունների այն երկար շարքը, որոնց սկիզբը կապվում է Աղուանից ամենահին թագաւորների հետ, իսկ վերջը համառում է մինչեւ մեր ժամանակները:

“Գաղտնիք, ին նայելով, Ղարաբաղի բոլոր մելիքական տները թագաւորական ծագումից են, եւ բոլորն էլ միեւնոյն տոհմից:

Այդ Ճիւղագրութիւններին նախանձախնդիր եւ ջերմ փափաղով որոնող է եղել Ղարաբաղի միտրապօլիս Բաղդասար Եպիսկոպոս Հասան-Զալալեանը: 1828 թուին, սեպտեմբերի 20ին, նորին սրբազնութիւնը մի նամակով դիմում է “Գաղտնիք, ի հեղինակ Արքահամ թէկնազարեանին եւ, ի միջի այլոց, յայտնում է.

... “Ես մոտակիր եմ տպագրել տալ Ղարաբաղի եւ Աղուանից բոլոր պատմութիւնները եւ հրապարակաւ ցոյց տալ աշխարհին Ղարաբաղի հարազատ-մելիքների ծագումը, որի առաջին օղակն սկիզբն առած է Առանից (Աղուանից առաջին իշխանից) եւ վերջին օղակն հասած է մեր օրերն: Բայց որովհետեւ դու երկար ժամանակ արտագրած ես այդ բոլոր պատմութիւնները Գանձասարի Ներսէս կաթողիկոսի մօտ, որովհետեւ քո գիտութեամբ թաքցրած են այդ անգին գանձերը (ընթերցողներին յայտնի Երեք տեղերում) եւ որովհետեւ այժմ՝ իմ ձեռքում չունիմ՝ այդ ձեռագիրները՝ վասն որոյ դիմում՝ եմ քեզ: Լուսահոգի Սարգիս կաթողիկոսն՝

<sup>1</sup> Սարգիս կաթողիկոսը Բաղդասար միտրապօլիտի ազգականն էր. նոյնպէս Հասան-Զալալեանների տոհմից. վահճանուեցաւ 1828 թուին եւ նրա հետ վերջացաւ Աղուանից կաթողիկոսութիւնը:

վախճանուելու ժամանակ ինձ պատուիրեց փութով տպագրել տալ այն ձեռագիր պատմութիւնները. երբ հարցոի թէ ո՞ւ են այդ ձեռագիրներն՝ նա պատասխանեց. — “Այդ զըքերը երեք տեղերում թաքցրած են... Աճապարիր Ազրայէլի (“Գաղանիք, ի հեղինակի) մօտ որկել Փիլ-Առուշանը եւ տեղեկանալով հանել տալ այդ ձեռագիր պատմութիւնները, որպէս զի չոչնչանան հողի կերակոր լինելով,...” Երդ, սիրելի Բէկնազարեան, եթէ դու անկարող կը լինիս փութով Ղարաբաղ մեզ մօտ զալ՝ զոնէ նամակաբերիս ձեռնով զրիր ինձ այն ձեռագրների թաքստեան երեք տեղերը, բայց յականէ յանուանէ եւ մերծակայ նշաններով եւ զտնելլ դիրացնող առարկաները մատնանիշ անելով,, (եր. 386, 387):

“Գաղանիք, ի հեղինակը այդ նամակը ստանում է այն ժամանակ, երբ արդէն հիւանդ էր, եւ նոյն հիւանդութեամբ վախճանուեցաւ նա:

Բայց չնայելով, որ նա գիտէր ձեռագրերի թաքստեան տեղերը, այնուամենայնիւ, պատուիրեց որդուն, Ազրես Բէկնազարեանին, պատասխանել մի այդպիսի անորոշ ձեռով.

“Իմ մահից յետոյ, Փիլ-Առուշանի ձեռօք, զրիր Բաղդասար սրբազնին, որ ես ականատես եղած չեմ այն ձեռագրերի թաղած տեղերին, այլ միայն յածախակի լսած եմ Մելիք-Մեծլումից, Մելիք-Արովից, Պրախմազ-Յովսէփից, Տէլի-Մահրասայից եւ Տէօնմազ-Պէլուից, որ զըքերի առաջին մասն թաղած է Դանձասարի եւ Խօթավանքի միջեւ մի քարայրում, որի մուտքն փակուած է քարուկիր պատով, երկրորդ մասն քրաբերդի Մելիքարանի (?) տակ, իսկ երրորդն Հոռեկայ վանքի մօտերում,, (արի ու դտիք...) — (եր. 389):

Այդ երկու նամակներից երեւում է, որ մինչեւ 1828 թուականի սեպտեմբերի 20ը, ոչ Բաղդասար միտրապօլիտը եւ ոչ էլ Գաղանիք, ի հեղինակ Արքահամբէկնազարեանը չեն տեսել թաղած պատմագրերը եւ նրանցից օգուտ չեն քաղէլ:

Այդ երկու նամակներից երեւում է եւ այն, որ Բաղդասար միտրապօլիտի գլխաւոր նպատակը՝ թաղած ձերագրերը գտնելու վերաբերութեամբ՝ կայանում էր տռաւելապէս նրանում, նախ, որ տպագրել տայ, որպէս զի գրականութեան սեպհականութիւն դառնան, երկրորդ, ինչպէս ինքը գրում է, որ կարողանայ “Հրապարակացոց տալ աշխարհին Ղարաբաղի հարազատ-մելիքների ծագումը, որի առաջին օղակն սկիզբն առած է Առանից եւ վերջին օղակն հասած է մեր օրերը”:

Ապացուցանել Ղարաբաղի մելիքների վաղեմի, հնագարեան ծագումը, որ նրանք շառաւիղում են Աղուանից առաջին թագաւոր Առանից, — այդ ինդիրը Բաղդասար միտրապօլիտի հետաքրքրութեան համար ոչ միայն պատմական նշանակութիւն ուներ, այլ առաւել գործնական նշանակութիւն ուներ: Ինչո՞ւ:

✓ Ուուաները նոր էին տիրել Ղարաբաղը: Ազնուականների եւ ժառանգութիւնների որոշելու խնդիր էր ծագել թուրք խաները եւ թուրք բէկերը, մի կողմից, հայոց մելիքները եւ հայոց բէկերը, միւս կողմից, սաստիկ մաքառում էին միմեանց հետ: Խւրաքանչիւրը աշխատում էր իւր տոհմային գերազանցաթիւնը եւ իւր իրաւունքները ապացուցանել նոր տիրող կառավարութեան առջեւ: — Այդ բոլորը ստիպում էր Բաղդասար միտրա-

<sup>1</sup> Հենց այդ ժամանակներում Մելիք-Զամալը եւ Մելիք-Ազիղեօղալը գցեցին Շուշի նորաբուսիկ խաների պատմութիւնը, որոնց ծագման

պօլիտին աւելի հիմնաւոր տեղեկութիւններ ունենալ մելքների ծագման մասին, մանաւանդ այն պատճառով, որ այդ ժամանակ՝ թէ Բաղդասար միտրապօլիտի, որպէս Աղումնից բարձր հոգեւոր ներկայացուցչի, եւ թէ էջմիածնի կաթողիկոսի տուած վկայութիւնները՝ հայոց աղնուականների ծագման մասին՝ կառավարութիւնը ընդունում էր իրական վաւերական մկանական։

*Բայց ի՞նչ ենք տեսնում:*

Հէնց միեւնոյն տարուայ մէջ, երբ Բաղդասար միտ-  
րապօլիսը իւր առաջարկութիւններով զիմում է ։ Դաղտ-  
նիք, ի հեղինակին, այդ գիրքը արդէն զբուած եւ վեր-  
ջացած էր, եւ նրա մէջ կարգով արձանագրուած կային  
Ղարաբաղի բոլոր հինգ տիրապետող մելքների թէ՛ աղ-  
դաբանութիւնը եւ թէ՛ նրանց ծագման ճիւղագրութիւն-  
ները, Ճիշտ նոյն ձեւով, որպէս պահանջում էր Բաղդա-  
սար միտրապօլիսը, — այսինքն, սկսեալ Աղուանից ա-  
ռաջին թագաւոր Առանից եւ հասցրած մինչեւ Բաղդա-  
սար միտրապօլիսի օրերը։ Բոլոր պատրաստ էր։ Եւ  
“Դաղտնիք, ի հեղինակին մի այլ, աւելի բարեյաջող, ա-  
ռիթ չէր կարող ներկայանալ, քան թէ այն, որ առա-  
ջարկում էր Բաղդասար միտրապօլիսը։ Սրբազնը թէ՛  
տպարան ուներ եւ թէ միջոցներ նրա պատմութիւնը  
տպագրելու համար։ Բայց Դաղտնիք, ի հեղինակը իւր  
պատմութեան մասին լուսում է (երեւի, նա Մակար վար-  
դապետի համար էր պահում . . .) եւ, փոխանակ իւր  
ձեռքում ունեցած արդէն պատրաստի պատմութիւնը  
սրբազնին ուղարկելու, — նրան ցոյց է տայիս գետնի

սկիզբու հասցըին մինչեւ Սամար - Պանդի թագաւորները, իսկ Բագուի Միրզա - Մուհամմադ - խանի որդի Աբասղուլի քէկը գրեց Շիրուանի խաների եւ Դաշտանի տիրապետողների պատմութիւնը:

տակ թաղուած, երեւակայական պատմութիւնների երեւակայական տեղերը...

ԱՐԴ այդպես:

իսկ միւս կողմից, գտնում ենք՝ նոյն ազգաբանութիւնները, նոյն Ճիւղագրութիւնները, նոյն ձեւով կազմուած, Բաղդասարի միտրապօլիսի աշխատութիւնների մէջ։ Եւ երբ։ — Շատ տարիներով առաջ, քան նրան ամսակով գաղտնիքուի հեղինակին գիմելը։ Եթէ նրան կար այդ, այլ եւս լնչ կարօտութիւն ուներ Բէկնագարեանին գիմելու։

Ահա մի հանելուկ եւս, որը լուծելու համար պէտք է նախ կարգավ երկուսի համեմատութիւնները:

Ես գնում եմ առաջ Բաղդասար միտրապօլիտի կազմաձև Աղուանից թագաւորների, Աղուանից իշխանների և Հասան-Ջալալեանների տօհմի աղքարանութիւնը, իսկ յետոյն նոյն աղքարանութիւնը, որ տպուած է “Գաղտնիք”-ի մէջ :

Ազգաբանութիւն եւ ծննդաբանութիւն ազգին Հասան-Ջալալեանց հանեալ եւ հաւաքեալ ի պատմութեանց Հայոց եւ Աղուանից, նաեւ ի յարձանագրաց ի խաչքարաց եւ ի տապանաքարաց, եղելոց ի վանսն Քանձասարայ եւ ի շրջակայ նորին վանորայս եւ տեղիս հանդերձ թուաբանութեամբ, զորս համառօտ շարադիւսեցի ես Բաղդասար Մետրապօլիտ Աղուանից Հայոց, որդի Դանիէլ-բէկ իշխանի եւ թոռն Մելիք-բէկ իշխան Դանիէլ-բէկ իշխանի եւ թոռն Մելիք-բէկ իշխան Հասան-Ջալալեանց, նախկին Տէրանցն յերկրին Արցախոյ գաւառին Խաչենոյ, յաղագս տեղեկութեան Արցախոյ գաւառին Խաչենոյ, յաղագս տեղեկութեան Արցախոյ գաւառին Խաչենոյ:

Գրեցաւ ի ՌՄՂՀ թուին չայց եւ ի 1849 ամի  
Տեղովն:

*h δύνην γέμισε καὶ αὐτὸν γέμισε λαρπήσαται.*

## 1. Առան Նախագահ Աղուանից:

Իսկ որք ըստ կարգի կացին թագաւորք տանս  
Աղուանից ի մեծ ազգէն Արշակունեաց՝ անուանք են այ-  
սորիկ՝

2. Վաշական բաջ Ա
  3. Վաչէ Ա.
  4. Ուռնայր.
  5. Վաշական Բ.
  6. Մըհաւան.
  7. Սատոյ.
  8. Ասայ.
  9. Եսուաղէն.
  10. Վաչէ Բ.
  11. Վաշական Գ. բա

### 11. Կանոնի 3. բարեկամաց:

5.

Ի նոյն պատմութեան (Կաղանկատուացւոյ) Յ պրակն  
Եւ 22 գլուխն այսպէս է գրեալ. — Մտուգութեամբ  
այսպէս ծանեաք սակա Հայկազնց ինսամնաւորել Մի-  
հրական տոհմին Եւ պատուաստութեամբս այսուիկ առի  
զոյգ ունել զպետութիւն արեւելեաց կողմանցն Աղուա-  
նից: Անուանք արքայիցն, որք վերագոյն գրեցան ի քա-  
ջէն Վաշականայ մինչեւ ցըարեպաշտն Վաշական՝  
տանն թագաւորք լեալ, յորոց բատ թուոյ առուց տար-

<sup>1</sup> Ես թողնում եմ 1, 2, 3 եւ 4րդ մասը, որ հեղինակը, զանազան պատմագրերի վայ հիմնուելով, գրում է իրերեւ ներածութիւն:

ւոյն եկեղեցին միայն (ինքն) քարեպաշտն վաշական չի-  
նեաց յարեւելս: Եւ զինի մահու նորա սկսաւ նուազիւ  
ազգն այն:

6.

Եւ Միհրանն, որ ի Սասանեան տոհմէն էր եկեալ  
ի պարսից՝ հաստատեցաւ ի նախարարութիւն ի վերայ  
աշխարհիս Աղուանից, եւ անուանք նոցա ~~որդի~~ ի հօրէ  
առնելով, են այսոքիկ՝ Միհր՝ Արմայէլ, Վարդ, քաջն  
Վարդան, որ հաւատացեալ ի Քրիստոս, եւ որ շինողն  
Գարդմանայ քերդին: Վարդան ծնանի Վարդ, Վարդ  
ծնանի զՎարազ Գրիգոր առաջին իշխանն Աղուանից:  
Գրիգոր ծնաւ զշրու որդիս՝ Վարազ Բերոժ, Զուանչիր,  
Եղուտ Խոսրով եւ Վարազման: Եւ ի սոցանէ յերէց որ-  
դույն շարելով ըստ կարգին անուանքն թերցուք ի յայտ  
առ Հայկազեանս, եւ այլք կացցեն:

7

Եւ են այսոքիկ՝ Վարազ Բերոժ, Վարազ Տրդատ,  
Վարդան, Ներսեն դժնղակ, Ներսենի որդի Գագիկ, Գա-  
գեկայ որդի Ստեփանոս եւ Ապրամիկ քոյր իւր: Զայս  
Վարազ Տրդատ եւ զ. թդի նորա եւ եղաօր որդի նորա  
Ստեփանոս, Ներսեն Փիլիպեան՝ ազգակիցն նորա  
սպան ի միում ժամհւ ի խորածորն, որ կոչի Դատոյի  
վանք: Ապա յայն աղէտիցն զառն զգեցեալ արիութիւն  
կնոշն սպանելոյ՝ առեալ զմնացեալ դուստր իւր Սպրամ՝  
զիշերահէն դաժանելի ուղեւորութեամբ՝ մոտանէ ի քերդն  
Խաչենոյ, եւ քարուս խորհեալ տան իւրում՝ ամուսնա-  
ցուցանէ զՍպրամ ընդ Ատրներսենի՝ Սահմի որդուոյ, որ  
էր ի տոհմէն Հայկայ եւ տէք Սիւնեաց. որոյ բռնազրօ-  
տը կալեալ էր զգաւառն Գեղամայ. եւ որդին իւր  
սութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ. եւ որդին իւր

Ատրներսեհ հանդիպեցաւ կնոջ զգաստի, որք երկիւղածք յԱստուծոյ եւ քարեպաշտք զիւրեանցն ցուցանէին զկեանս եւ աշխարհի քաղցունք:

8.

Ատրներսեհ իշխանն շինէ զբերդն Հանդու (**Հանդարերդ**) եւ զապարանս իւր եղեալ ի գիւղն որ կոչի Վայունիք, ուր եւ քաղանիքն արքունական են եւ քերդն այն (այժմ կոչի Ձերմուկի ղալա, իսկ գիւղն Քաղաքատեղ ի գաւառին Ձրաբերդու): Եւ Ատրներսեհ իշխանն ընդ այլ իշխանաց Հայոց տարան յերկիրն Փարսից յերեքնարիւր եւ երեք թուին Հայոց յ854 ամի Տեսոն: Եւ կալով նորա անդ ամս քազումն, տիկինն Սպահամ առաւել յաճախէր ի քարեզործութիւնս, եւ մեծածախ տենչմամբ շինէ զնուրավանս ամենապայծառ զարդուք՝ ի գաւառին Սոտէից ի նահանգին Գեղարքունոյ:

9.

Ատրներսեհ իշխանն իսկոյն զայր՝ զերծեալ ի կողմանցն Տաճկաց, եւ խաղաղութեամբ առ ժամանյն լուծանէ զկեանս:

Ատրներսեհ ծնանի զԴրիգոր եւ զԱպուսեթ. Գրիգոր իշխանն շինէ զբերդն Հաւքախաղացին ի գաւառին Խաչենոյ, եւ յայն կողմն ձգէ զօնոս իւր իշխանութեան յերեք հարիւր քառասուն թուին Հայոց՝ յ891 ամի Տեսոն: (Եւ բերդն Հաւքախաղացին այժմ կոչի Սաղսաղանու Ղարայ, եւ հեռի է ի Գանձասարու վանից եւ ի Խոխանայ բերդէն ութն ժամու Ճանապարհաւ):

10.

Գրիգոր իշխանն Ատրներսեհեան ծնանի զհինգ որդիս՝ Ապուալի, Ատրներսեհ Բ., Սահակ Սեւաղայ,

Սմբատ եւ Վասակ: Երէց որդի Գրիգոր իշխանին՝ Ապուալի իշխանն Աղուանից հայկազնի՝ սպանաւ յիւրմէ հարազատէն Սմբատայ յերեքնարիւր քառասուն եւ վեց թուին Հայոց յ897 ամի Տեսոն, եւ եղեւ այն սուզ մեծ իւրայնցն զարմից: Եւ եղբայր նորա Ատրներսեհ թագաւորեաց ի վերայ Աղուանից յ359 թուին Հայոց յ910 ամի Տեսոն:

11.

Իսկ երրորդ որդի իշխանին (**Գրիգորի**) Սահակ Սեւաղայն եղեւ երեւելի եւ մեծ իշխան քաջ եւ յաջողակ՝ սուհասարակ տիրեաց Գարդմանայ գաւառին (որ ի նահանգին Գանձակայ) եւ Քաւայ եւ Փառնայ՝ գաւառաց, այլեւ աւազակապետաց Զորագետոյ եւ Արցախոյ ըովանդակ եղեւ իշխան եւ տիրապետոյ: Եւ խնորոր իսկ գրագիտութեան՝ եւ դպրոց ի տան իւրում՝ կարգեաց. ընդ որում՝ եւ զազմնաշան Շնարիւր թագաւորն Հայոց Սմբատ մարտոցեալ՝ ոչինչ կարաց ստերիւրել զնա ի կամն իւր: Եւ զկնի մահուան Սմբատայ թագաւորին Հայոց, Աշոտ որդի նորին թագաւորեաց ի վերայ Հայոց եւ վասն քաջազործութեան նորա Աշոտ երկաթ կոչիր. եւ այս Աշոտ թագաւորն Հայոց էառ ի կնութիւն իւր զդուստը Սահակ Սեւաղայ հզօր եւ մեծ իշխանին Աղուանից եւ Արցախոյ յ371 ամի թուին Հայոց եւ յ922 ամի Տեսոն:

12.

Սահակ Սեւաղայ մեծ իշխանն Աղուանից ծնանի զԳրիգորը Բ. եւ զԴաւիթ, Գրիգոր Բ. իշխանն ծնանի

<sup>1</sup> Այդ երկու գաւառների անուններն շատ տեղերում, գրչագրերի վրա մնան մասնաւելով, գրում են ի միասին Վաստիփառնայ:

զՄեւաղայ Բ., որ հշխանիկ կոչիւր եւ զԱտըներսէն Գ.: Իսկ Մեւաղայն Բ. ծնանի զշորս որդիս՝ Յովհաննէս, Գրիգոր Գ., Փիլիպպոս եւ Ատըներսէն Դ.: Իսկ զերեց որդին հշխանկի (Մեւադայ Բ-ի) զՅովհաննէս, որ եւ Սենեքերիմ կոչեցաւ, ընտրեաց աջն Բարձրելոյն՝ կոչելով զնա ի թագաւորութիւն. եւ զվաղնջուց խափանեալ թագաւորութիւն Տէրն ամենակալ ի ծեռն սորա նորոգեաց՝ զոր եւ թագաւորն պարսից մեծամեծ զարդոք պատուէ եւ տայ նմա զթագ հօր իւրոյ զնորին երիվարն՝ իսկ Փիլիպպոս թագաւորեաց ի վերայ Աղուանից ի նժ թուին Հայոց, յ1961 ամի Տեառն: Փիլիպպոս ծնանի Գրիգոր Դ., Գրիգոր Դ. ծնանի զՍակառ, որ Վախտանգ կոչիւր. Սակառ Վախտանգ ծնանի զՎախտանգ Բ. Վախտանգ Բ. ծնանի զՀասան:

13.

Հասան իշխանն Սակառ - Վախտանգեան եղեւ երեւալի եւ մեծ իշխան եւ էառ ի կնութիւն իւր զՄամայ զդուստը Կիւրիկէ Թագաւորին Հայոց Բագրատունոյ ի հինգհարիւր եւ ութսուն թուին Հայոց ի 1131 ամի Տեառն: Հասան իշխանն ծնանի զՎախտանգ Գ., զՎասակ-Սմբատ, զԳրիգոր եւ զայլս: Վախտանգ Գ. իշխանն Հայսանեան եղեւ երեւելի իշխան, եւ էառ ի կնութիւն զԽորիշահ դուստը Սարգիս իշխանին եւ քոյր Զաքարիայ եւ Խվանէի մեծամեծ իշխանացն Հայոց, եւ ծնանի զՀասան - Զալալ զԶաքարիայ, զԽվանէ, զԹօլի եւ զՄարիամ:

14.

Զալալ-Հասան որդի Վահանակայ Դ. եւ թոռն Հասանայ եղեւ երեւելի եւ մեծ իշխան ի ՌԴ թուին Հայոց

<sup>1</sup> Այստեղ հեղինակը հետեւել է Կաղանկատուացւոյ պատմութեանիր :

եւ ի 1243 ամի Տետոն, եւ Էտ ի կնութիւն իւր զՄամբան թոռն Սենեքելիմ՝ թագաւորին Սիւնեաց՝ զդուստը Գրիգոր իշխանին Սիւնեաց։ Զալալ-Հասան ծնանի զԱթաքակ եւ զիւանէ եւ զդուստերս երիս՝ Ռուզան, Նանայ եւ Մինա-Խաթուն։ Ռուզան եղեւ կին Բուղայի որդույ Զարմաղան խանին թաթարաց, Նանայ եղեւ կին Ումէկ Հայոց իշխանին Տփխիսեցոյ, եւ ծնանի զՎախտանգ։ Վախտանգ ծնանի զԱրդութ, Արդութ ծնանի զՄԵհրապ։ ՄԵհրապ ծնանի զՇահնշէն։ Եւ զկնի մահուան Զալալ-Հասան իշխանին, Մինա-Խաթուն եղեւ կին Տարսայի՛ իշխանին Սիւնեաց, եւ ծնանի զուստը Զալալ եւ զդուստը Ափսայ (Ասփայ), ի Զի ամին Հայոց եւ ի 1271 ամի Տետոն։

15.

Աթաքակ որդի Քալալ-Հասանայ եղեւ երեւելի է շօնէ թուին Հայոց, ի 1306 ամի Տետոն, եւ ծնանի զՁալալ Բ., որ Պարոն կոչիւր, եւ զիվանէ, իվանէ ծնանի զՎախտանգ Դ., Վախտանգ Դ. ծնանի զԱթաքակ Բ. Աթաքակ Բ. ծնանի զԱյտին եւ զԽիմչէ: Պարոն Զաւան Բ. երէց որդի Աթաքակին ծնանի զՅովհաննէս Ս. կաթողիկոսն, զՊարոն-Աղքաստ, զՊարոն-Պատամ, զՄէժլիս, զԱմիր Հասան եւ զՏէր Վարդան: Յովհաննէս կաթողիկոսն վախճանեցաւ Զժմթ թուին Հայոց, ի 1470 ամի Տետոն:

16.

Պարոն-Աղքաստ որդի Պարոն-Զալալ Բ. Եշևանին  
ծնանի զՊարոն Սայտուն, Պարոն-Սայտուն ծնանի զԱ-  
րիստակէս կաթողիկոս, զՀատիք, Մելիք, զՎէլիջան թէկ-  
Ա., զՄելիք: — Արիստակէս կաթողիկոսն վախճանե-  
ցաւ ի ԶՀԵ թուին Հայոց, ի 1521 ամի Տեառն:

## 17.

Հատիք մելիք իշխանն, որդի Պարոն-Սայտունին, ծնանի զՄարգիս Ա. կաթողիկոս եւ զՄէհրաք-բէկ: — Սարգիս կաթողիկոսն վախճանեցաւ ԶՂԵ թուին Հայոց ի 1546 ամի Տետոն: — Մէհրաք բէկ որդի Հատիք-Մելիք իշխանին՝ ծնանի զԳրիգոր Ա. կաթողիկոս, զՃալալ-բէկ Գ. եւ զԲաղդասար-բէկ Ա: — Գրիգոր կաթողիկոսն վախճանեցաւ ի Ռիբ թուին Հայոց, ի 1573 ամի Տետոն:

## 18.

Բաղդասար-բէկ որդի Մէհրաք-բէկին՝ ծնանի զԴաւիթ կաթողիկոս եւ զԴաւիթ-բէկ: — Դաւիթ կաթողիկոսն վախճանեցաւ ի Ռիդ թուին Հայոց, ի 1574 ամի Տետոն: — Դաւիթ-բէկ՝ որդի Բաղդասար բէկին՝ ծնանի զՅովհաննէս Բ. կաթողիկոս եւ զՄուշը բէկն: — Յովհաննէս Բ. կաթողիկոսն վախճանեցաւ ի Ռէ թուին Հայոց եւ ի 1621 ամի Տետոն:

## 19.

Ճալալ-բէկ Գ. որդի Մէհրաք-բէկին՝ ծնանի զՎելիջան-բէկ Բ. եւ զԱղաքէկ: Այս Ճալալ-բէկ եղեւ երեւելի եւ մեծ իշխան ի Ռէ թուին Հայոց, ի 1586 ամի Տետոն, հանդերձ երկու եղբօրորդութքն իւր եւ ընդ այլ իշխանաց Հայոց եւ Աղուանից գնացին ի տեսութեն առաջին եւ մեծ Շահ-Աքաս արքային պարսից եւ ի նմանէ յոյժ պատուեցան խիլայիւք. նաեւ Ճալալ-բէկն ի նոյն Շահ-Աքաս արքայէ էառ գֆէրման յանուն իւր եղբօրորդի Յովհաննէս Բ. կաթողիկոսին Աղուանից եւ դարձաւ ուրախութեամբ ի տուն իւր: — Վելիջան-բէկ Բ. որդի Ճալալ-բէկին Գ. ծնանի զԳրիգոր Բ. կաթողիկոս եւ

զԲաղդասար-բէկ Բ: — Գրիգոր կաթողիկոսն վախճանեցաւ ի Ռիբ թուին Հայոց, ի 1653 ամի Տետոն:

## 20.

Բաղդասար-բէկ Բ: որդի Վելիջան-բէկին Բ-ըդի եւ թոռն Ճալալ-բէկին Գ-ըդի՝ ծնանի զԵրեմիայ կաթողիկոս, զԱրիստակէս եպիսկոպոս, զՎելիջան-բէկ Գ. եւ զՄուլքի-բէկ: — Երեմիայ կաթողիկոսն վախճանեցաւ ի Ռծութ թուին Հայոց եւ ի 1700 ամի Տետոն: — Վելիջան-բէկ Գ. ծնանի զԵսայի կաթողիկոս եւ զՅովհաննէս. — Եսայի կաթողիկոսն վախճանեցաւ ի Ռծէ թուին Հայոց եւ ի 1726 ամի Տետոն:

## 21.

Մուլքի-բէկ որդի Բաղդասար-բէկին Բ-ըդի ծնանի զՄելիք-Գրիգոր եւ զՄելիք-Ալահվերդի Ա: — Մելիք-Գրիգորն զիւր մելիքական իշխանութիւնն ետ իւր եղբօր Մելիք-Ալահվերդույն ի վերայ Խաչենոյ գաւառին, եւ ինքն հրաժարեցաւ յիւր մարմաւոր իշխանութենէն եւ օծաւ վարդապետ եւ եղեւ առաջնորդ Մըքոյ վանիցն Գանձասարու, ի ժամանակս տիրապետութեանց օսմանցոց եւ Նաղեր-շահ պարսից Արքային, յորոց ֆէրմաննն յայտնի գրեալ երեւի, որ առ մեզ գտանին: — Գրիգոր վարդապետ վախճանեցաւ ի Ռծ՛ԶԷ թուին Հայոց եւ ի 1748 ամի Տետոն:

## 22.

Յորդույ Մուլքի-բէկին՝ ի Մելիք-Ալահվերդույն Խաչենոյ ծնանի Եսայի եպիսկոպոս եւ Մելիք-բէկ Ա., իսկ Մելիք-բէկ իշխանն ծնանի զՅովհաննէս Գ. կաթողիկոս եւ Սարգիս Բ. կաթողիկոս: — Յովհաննէս կա-

թողիկոսն վախճանեցաւ ի ՌՄՀԵ թուին Հայոց եւ ի 1786 ամի Տեառն: Սարգիս կաթողիկոսն վախճանեցաւ ի ՌՄՀԵ թուին Հայոց եւ ի 1828 ամի Տեառն: — Եւ միս վեց որդիք նոյն Մելիք-բէկ իշխանին են սոքա՝ Գարրիէլ-բէկ, Դանիէլ-բէկ, Միսայէլ-բէկ, Իսրայէլ-բէկ, Զալալ-բէկ Դ. եւ Ալարդովի-բէկ:

Ա. Գարրիէլ-բէկ ծնանի զԵրեմիա եպիսկոպոս եւ գԴրիգոր-բէկ: Գրիգոր-բէկն ծնանի գԶալալ-բէկ Ե. եւ զուտար Խորիշար: Զալալ-բէկ Ե. ծնանի զՄարգիս-բէկ եւ զՄիհա-Խաթոն դուստրն:

Բ. Միսայէլ-բէկն ծնանի զԱպես-բէկ եւ զԱսլան-բէկ: Ապես-բէկն ծնանի զԱթա-բէկ Դ., գԴրիգոր-բէկ եւ զԶաւատ-բէկ: Աթա-բէկն ծնանի զՄովսէս եւ զայլ: Գրիգոր-բէկն ծնանի զԻվանէ եւ զայլ:

Գ. Իսրայէլ-բէկն ծնանի զՅովսէփ վարդապետ եւ գԳէորգ-բէկ: Գէորգ-բէկն ծնանի զԻվանէ:

Դ. Զալալ-բէկն ծնանի զԱթաքակ, զԱռատամ-բէկ եւ զԽորիշար դուստր: Առատամ-բէկն ծնանի զԵսայի եւ զայլ, որք գտանին ի Բօլիս:

Ե. Ալարդովի-բէկն ծնանի զԱռուշան-բէկ եւ զԶանգիր-բէկ: Առուշան-բէկն ծնանի զԵրիս որդիս, որք գտանին ի Բօլիս:

### 23.

Վեցերորդ որդի Մելիք-բէկ իշխանին՝ Դանիէլ-բէկն ծնանի զԲաղդասար առ Մետքալի տ եւ զՄելիք-Ալարդէրդին Բ. Խաչենոյ գաւառին: Մելիք-Ալարդէրդին Բ. ծնանի զԵրեմիայ քահանայ, զՄովսէս վարդապետն, զԱպրահամ-բէկն եւ զՅովսէփ-բէկն: Մելիք-Ալարդէրդին վախճանեցաւ ի 1276 թուին Հայոց եւ

1827 ամի Տեառն: Եւ Մովսէս վարդապետն վախճանեցաւ ի ՌՄՀԵ թուին Հայոց եւ ի 1849 ամի Տեառն: Երեմիայ քահանայն ծնանի զՄելիք որդիս, որք են՝ Վախճանգ, Զալալ, Շամիր...: Ապրահամ-բէկն ծնանի զՄելիք-բէկ եւ զԱլարդէրդի-բէկ:

Յովսէփ-բէկն ծնանի զՎելիջան-բէկ եւ զԴանիէլ-բէկն:

### 24.

Այլ եւ յառաջին Մելիք-բէկ իշխանէն Հասան-Զաւատանց, որպէս ի վերոյ գրեալ եւ, եւ սոքա են կենալեանց, որպէս ի վերոյ գրեալ եւ, եւ սոքա են կենալեանց, որպէս ի սերնդոց եւ ի տոհմականաց Հասանիք արուականքն ի սերնդոց եւ ի տոհմականաց Հասան-Զալալեանց:

Բնագրի վրայ իւր խկական ձեռքով ստորագրել է Միտրապոլիտ Բաղդասար Հասան-Զալալեանց:

Թագաւորք Աղուանից

Ա. Աղուան Սիմական, Հայոց Վաղարշակ թագաւորից հաստատուած.

Բ. Քաջն Վաշական Ա. Արշակոնի ազգից.

Գ. Վաշէ Ա.

Դ. Ուռնայր.

Ե. Վաշական Բ.

Զ. Միհրատան.

Է. Սատոյ.

Ը. Ասա.

Թ. Արովաղէն կամ Եսվաղէն.

Ժ. Վաշէ Բ. որ հիմուում է Փարտաւ քաղաքը (?)

ԺԱ. Վաշական Գ. բարեպաշտ.

Սասանեան հեթանոս նախարարք

Ա. Միհրանից ծնունդ եւ իշխում է

Բ. Արմայէլն. Արմայէլից

Գ. Վարդն. Վարդից

Դ. Քաջ Վարդանն, որն ընդունում է քրիստոնէական հաւատը եւ մկրտում Աղուանից Վիրոյ կաթողիկոսի ծեռնով եւ հիմուն՝ Կովկաս սարի տակ մի աւան եւ իր անուամբ կոչում Վարդաշէն (?)։ Վարդանով կրկին շարունակվում է քրիստոնեայ նախարարութեան շղթան.

Քրիստոնեայ նախարարք.

Ա. Քաջ Վարդանից ծնունդ եւ նախազահում է

Բ. Վարդ Ա. սորանից

Գ. Վարագ-Գրիգոր Ա. որից

Դ. Վարդ Բ. որից

Ե. Վարագ-Գրիգոր Բ. որից ծնունդ են Վարագ-Գերոժ, Զիւանշիք, Յեղուտ-Խոսրով եւ Վարագման . . .

Զ. Զիւանշիքին յաջորդում է իր եղբայր

Է. Վարագ-Գերոժն, որից ծնունդ եւ տեղակալում է.

Ը. Վարագ-Տրդատ, որից

Թ. Վարդան Գ. որից

Ժ. Ներսէն Դժնդակ . . . որից

ԺԱ. Գաղիկն, որից

ԺԲ. Ստեփաննոս, որ Վարագ Տրդատի հետ սպանվում է Ներսէն Դժնդակից Դատի վանուց ձորում, անայս է “Դժնդակ”, կոչուելու պատճառն։ Գագկայ կինն, ունենալով միայն Սպրամ անուամբ մի դուստր՝ զիշերով փախչում է Խաչենի քերդն (Կաշաղակաբերդ?) եւ

այդ դուստրը ամուսնացնում Բագրատունի (?) Սմբատ իշխանի (?) թոռան Ատրներսէնի հետ։

ԺԳ. Ատրներսէնն շինում է Հանդաքերդը եւ իր պալատը հաստատում Վերին Խաչենում ջերմուկների կողմում։ Սորա անդրանիկն

ԺԴ. Գրիգոր Ա. շինում է Հաւքախաղաց քերդը եւ իր իշխանութիւնը աւելի զօրացնում այդ անառիկ քերդով, որից ծնունդ եւ յաջորդում է

ԺԵ. Սահակ-Սեւադա, որ քաջ տղամարդ լինելով տիրում է Գարտման, Քաւսա եւ Փառնա գաւառներին եւ սկսում է տարածել սոցա մէջ զիր, դպրութիւն եւ ուսում։ Սահակ-Սեւադայից

ԺԶ. Գրիգոր Բ. որ Գուշտակ եւս է կոչում, որից  
ԺԷ. Փիլիպպոս (?) , որից

ԺԸ. Սեւադա Ա. (?) իսկ սորանից Յովհաննէս (?) որ Սենեքերիմ եւս է կոչվում։ Վերջինս, իր քնական Սենեքերիմ եւս է կոչվում։ Վարչինս, իր քնակարհանձարով, ուզմագիտական տաղանդով եւ կառավարհանձարով, յաջորդում է Պարսից կաշական խորագիտութեամբ, յաջորդում է Պարսից կառավարութեան միջոցաւ ձեռք քերել Աղուանից թագաւորութիւնը եւ թագը, որ վաղոց մեռած էր։

Ա. Սենեքերիմ (?) թագաւորից ծնունդ եւ իշխում է

Բ. Գրիգոր (?) թագաւորն, որով կրկին մեռնում է Աղուանից թագաւորութիւնն։ Գրիգոր թագաւորից ծնվում Աղուանից թագաւորազնն, Սմբատ թագին երեք որդիք՝ Վախթանկ թագաւորազն, Սմբատ թագաւորազն (?) եւ Վասակ թագաւորազն (?)։

ԺԱ. Գաղիկն թագաւորազն եւ մէլիքաց Քալածան տոն մէկն.

Ա. Վախթանկ թագաւորազնն տեղակալում է իր անդրանիկն

Բ. Հասան-Մեծն, որն ծնուած էր Քուրդ իշխանի Արզու ղտտերից. Հասան-Մեծին տեղակալում է

Գ. Վահիթանկ Սակարն (?) որ ամուսնացած էր Քուրդ իշխանին Սարգիս որդու Խորիշահ ղտտեր հետ.

Վաղթանկ Սակարից (?) ծնումը է

Դ. Զալալ Դօլա Հասան, որ ամուսնացած է Մեծ Սիւնեաց Տարսայիծ (?) իշխանի Մամքան ղտտեր հետ, որից ծնումը եւ յաջորդում է

Ե. Աթարէկ Ա., որից

Զ. Պարոն Զալալն, որից

Է. Աթարէկ Բ-ն (?) որից

Ը. Այտին-բէկն, (?) սորա փոքր եղբայր

Թ. Աղքաստն, (?) որից

Ժ. Հատիր մելիքն, (?) որից

ԺԱ. Մեհրամ բէկն (?) որից

ԺԲ. Զալալ բէկն, որից

ԺԳ. Վելիջան բէկ Ա. որից

ԺԴ. Բաղդասար բէկն, որից

ԺԵ. Վելիջան բէկ Բ. որից

ԺԶ. Մուլիք բէկն (?) որից

ԺԷ. Մելիք Գրիգորն, որին յաջորդում է փոքր եղբայրն

ԺԸ. Մելիք Ալահվերդին.

ԺԹ. Մելիք-բէկ Մելիք-Գրիգորեան (?)

Ի. Դանիէլ բէկ, որից ծնվում է Բաղդասար վարդապետը:

Այս երկու համեմատութիւններից պարզ երեւում է, թէ որքան վարպետ է Մակար վարդապետը ուրիշ ապրանքը սեպհականել իրան եւ, որպէս զի հրապարակի վրայ չհանաչուի, գոյնը փոխել է եւ այնպէս:

Այդ երկու համեմատութիւններից երեւում է եւ այն, որ Բաղդասար միտրապօլիտի կազմած ազգաբանութիւնը աւելի հարուստ է իւր մանրամասնութիւններով, աւելի լիակատար է, իսկ «Գաղտնիք»ի հեղինակինը միայն համառօտ քաղուածք է նրանից, այն եւս սխաներով<sup>1</sup>:

Այդ սխաները առաջ են եկել նրանից, որ Մակար վարդապետը գրելու ժամանակ աչքի առաջ չէ ունեցել Բաղդասար միտրապօլիտի յօրինած լիակատար ազգաբանութիւնը, որը դեռ ոչ մի տեղ տպուած չէ, այլ օգուտ է քաղել Սարգիս եպիսկոպոս Զալալեանի քաղուածքից, որ նոյն սխաներով տպուած է նրա Շանապահորդութեան մէջ<sup>2</sup>:

Իսկ այդ դէպքում եւս կատարվում է այն բազմաթիւ հրաշքներից մէկը, որոնցով այնքան հարուստ է «Գաղտնիք»ը:

Այդ գրքի հեղինակը վախճանվում է 1828 թուին: Իսկ Բաղդասար միտրապօլիտը իւր ազգաբանութիւնը յօրինել է 1849 թուին: Կը նշանակէ, «Գաղտնիք»ի հեղինակի մահից 21 տարի յետոյ:

Ուրեմն, կամ պէտք է ընդունել, որ «Գաղտնիք»ի հեղինակը իւր մեռնելուց 21 տարի անցնելուց յետոյ յարութիւն է առել եւ օգուտ է քաղել Բաղդասար միտրապօլիտի կազմած ազգաբանութիւններից, կամ մի ուրիշ գողացել է այդ աշխատութիւնը, գոյնը փոխել է եւ թէկնազարեանների անունով հրապարակ է հանել:

Այդ վճիռը թողնում եմ ընթերցողների գատաստանին:

<sup>1</sup> Սխաները մենք նշանակեցինք հարցական նշաններով:

<sup>2</sup> «Շանապահորդութիւն» ի Մեծն Հայաստան» մասն Բ. եր.

Բայց ես խոստացայ ցոյց տալ մի “օյ ի՞նք ազութ ի և նուն...”

Եթէ Բաղդասար միտրապօլիտը ունէր այդ ազգաբանութիւնը, ուրեմն ինչու էր նա իւր նամակով դիմում “Գաղտնիքովի հեղինակին եւ նրանից խնդրում մի եւ նոյնը։ Այդ ինչ է նշանակում։”

Ահա ինչ է նշանակում։ գուցէ մի օր, ով է իմանում, Բաղդասար միտրապօլիտը գերեզմանից կը բարձրանայ եւ, գտնելով “Գաղտնիքովի մէջ իւր աշխատութիւնը, կը բռնէ Մակար վարդապետի օձիքից եւ նրան կ'ասէ։”

— Այդ իմ աշխատութիւնն է, այդ ով է գողացել։

Այն ժամանակ Մակար վարդապետը իրաւունք կ'ունենայ նրան պատասխանելու։

— Սրբազն, քո աշխատութիւնը ո՞րտեղից կարող էր լինել... եթէ դու ունիիր այդ աշխատութիւնը, այլ եւս 1828 թուին ինչու էիր դիմում Աբրահամ Բէկնազարեանին եւ նրանից խնդրում...”

Եւ Մակար վարդապետը ամենայն վստահութեամբ ցոյց կը տայ սրբազնի նամակը։

— Այդ նամակը կեղծ է... կը պատասխանէ սրբազնը։ — Ես այդ աշխատութիւնը ունի ոչ թէ 1828 թուին, այլ նրանից շատ առաջ, 1800 թուականներում, երբ դեռ վարդապետ էի եւ Հաղբատայ վանքում նստած աշխատում էի<sup>1</sup>...”

Այսպահը բաւական համարելով, մենք գուցէ մի ուրիշ ժամանակ կրկին կը վերադառնանք Մակար վարդա-

<sup>1</sup> Բաղդասար միտրապօլիտի աշխատութիւնների թէ իւր իսկական ձեռքով գրած սեւագրութիւնները, որ նա յօրինել է Հաղբատայ վանքում, եւ թէ մաքուր արտագրած օրինակները, որ կազմել է յետոյ, ցանկացողները կարող են տեսնել մեզ մօտ։

պետի կազմած միւս տիրապետող մելիքների տոհմային ազգաբանութեանը, որոնց մէջ երեւում է հայր սուրբի վերին աստիճանի անբարեխողնութիւնը։ Այդ միւս ազգաբանութիւնները՝ կամ լցուած են մի շաբք երեւակայական անուններով, կամ մելիքների տոհմերը խառնած են միմեանց հետ եւ կամ եղայրը եղքօր հայրն է դառնում, իսկ հայրը՝ թռու։ Բոլոր ձիւղագրութիւնների մէջ տիրում է մի գիծ միայն, այն եւս ուղեղ գիծ — որդի ի հօրէ, այլ շառաւիղներ չկան։”

Երբ “Արձագանքովի մէջ տպվում էր իմ հետազոտութիւնը, իմ բարեկամներից իւրաքանչիւրը հանդիպելիս միեւնոյն հարցն էր կրկնում։” Միթէ արժէ մի այդպիսի յիմարութեան մասին այզքան գրել։”

Եթէ միայն յիմարութիւն լինէր, ես ոչինչ չէի գրի, բայց խարդախութիւնը, այն եւս գրական խարդախութիւնը պէտք չէ, որ մնայ անպատիժ։

“Գաղտնիքով դեռ լցո չտեսած, դարձրեց իւր վրայ կրիտիկայի ուշագրութիւնը, եւ ոչ մի աշխատութիւն մեզանում այնքան խօսել չտուեց իւր մասին, որպէս այդ գիրքը։ Դա շատ բնական էր։” Գիմքը մի քար նետեց փոսը, հարիւր խելօքներ հաւաքուեցան, չկարողացան դուրս հանել։ Դեռ եւս շատ խելօքներ պիտի տանջուին “Գաղտնիքովի նենգաւոր գաղտնիքները երեւան հանելու։”

Ամեն կեղծութեան վրայ շատ են նայում, շատ են հետաքրիգում։ Իսկ “Գաղտնիքով, հակառակ իւր արդար վրդովմունքով զայրացած հարուածողների, ունեցաւ եւ պաշտպաններ։”

Իմ խօսքը, ի հարկէ, այն հացկատակ կրիտիկունների մասին չէ, որոնք, շղոքորդութեան բուրվառը ձեռքում բռնած, մի բաժակ օղիի համար, միշտ պատրաստ են

ինկարկել ամեն մի կեղասութիւն, ամեն մի անբարոյականութիւն։ — Իմ խօսքը աւելի կրթուած, զարգացած եւ, մինչեւ անգամ, բարձր ուսում ստացած պարոնների մասին է, որոնք աւելի լուրջ կերպով պէտք է վերաբերուէին դէպի մի գրական խարդախութիւն, որի օրինակը մինչեւ այսօր չի տեսնուել։

«Գաղտնիք»ի հեղինակը, հարստահարելով ուրիշների աշխատանքը, ճարպիութիւն ունեցաւ հարստահարելու եւ այնպիսի յարգելի անձանց անունները, որոնք հազիւթէ յանձն կ'առնեին՝ վկայ լինել մի խարեբայ գործի։

Վերջացնում եմ յօդուածս, աւելացնելով, որ իմ հետազոտութիւնների մէջ՝ ես հասայ հետեւեալ եզրակացութիւններին։

1. «Գաղտնիք»ի մի զցդ պատրուակեալ հեղինակները — հայր եւ որդի Բէկնազարեանները — երեւակայական անձնաւորութիւններ են։ Նրանք երբէք գոյութիւն չեն ունեցել, ոչ իբրեւ մատենագրներ եւ ոչ իբրեւ անհատներ։

2. «Գաղտնիք»ը Մակար վարդապետի աշխատութիւնն է։ Միայն իւր գիրքը աւելի հրապուրիչ դարձնելու համար, կամեցել է մագաղաթի վրայ ներկայացնել եւ նրան մի հին, վաղեմի գրուածքի ձեւ տալ։ Հետեւապէս, «Գաղտնիք»ի բնագրի գրաբար լեզուով գրուած լինելը, Մակար վարդապետի թարգմանելը, յետոյ բնագիրը կորցնելը, — այդ բոլորը պէտք է հայր սուրբի հնարած ստեղծաբանութիւնը համարել։

3. Այդ գիրքը, իբրեւ մի պատմական աշխատութիւն, ոչ մի նոր աղբիւր չունի եւ չէ ցոյց տալիս։ Նա օգուտ չի քաղել մինչեւ անգամ ժողովրդական աւանդութիւններից։ Նա չէ բովանդակում իւր մէջ որ եւ է պատ-

մական փաստ, որ մեր գրականութեան մէջ նոր լինէր։ Իսկ ինչ որ նոր է, — այդ Մակար վարդապետի առակախօսութիւններն են միայն։

4. Բուն պատմական անձնաւորութիւնները — Ղարաբաղի խական մելքները — իրանց գործերով եւ քաջութիւններով՝ կորչում, անհետանում են այդ գրքի մէջ։ Իսկ նրանց փոխարէն դրվում են Մակար վարդապետի ստեղծած հերոսները, որոնք երբեք գոյութիւն չեն ունեցել։

5. «Գաղտնիք»ի լեզուն, ոճը, շարադրութիւնը մեր տասն եւ ութերորդ դարու գրուածքների ոչ պարզութիւնն ունի եւ ոչ բնաւորութիւնը։ Նրա մէջ յաճախ հանդիպում են այնպիսի բառեր եւ այնպիսի դարձուածքներ, որ մեր նոր գրականութեան արդիւնք են։

6. «Գաղտնիք»ի գաղափարները, նկրտումները եւ պատմական երեւոյթների բացարութիւնները՝ ամբողջապէս առնուած են «Խամայի Մելքոնթիւններից»։ Եւ այդ ապացոյց է, մի կողմից, նրա հեղինակի կոյր հետեւողութեանը, իսկ միւս կողմից, երեւան է հանում նրա կեղծութիւնը։ Մեր հին ժամանակների պատմաբանները գրում էին բոլորովին կրաւորական կերպով, առանց կրիտիկաբար վերաբերուելու փաստերին։ Քննադատական պատմութիւնը նոր ժամանակների գործ է։

7. Իբրեւ մի պատմական անհարազատ աշխատանք, այդ գիրքը զուրկ է ամեն հաւատարմութիւնից։ Նրա մէջ փաստերը կամայական կերպով աղաւաղուած են։ Ամբողջ գրքի մէջ գործում է մի խարդախ գրչի արհեստականութիւնը միայն։ Նրա մէջ չէ երեւում ժամանակի մարդը իւր բնական բարքով, վարքով եւ սովորութիւններով։ — Նրա մէջ երեւում են այլանդակ հրէշներ եւ հեքեաթների հերոսներ միայն։

8. “Գաղտնիքուր մի գրական նենդաւոր աւաղակութիւն է: Նրա մէջ մացրած են այլոց աշխատութիւնները, առանց հեղինակների անունները յիշելու: Բայց գողութեան հետքերը կորցնելու համար, իսկական հեղինակների փոխարէն, յիշվում են այնպիսի անուններ, որոնք կամ երբեք գոյութիւն չեն ունեցել կամ ոչնչ չեն գրել:

9. “Գաղտնիքուր ոչ միայն գրականական որ եւ է արժէք չունի, այլ մինչեւ անդամ վնասակար է: Անհմուտ ընթերցողին նա կարող է մողորեցնել եւ սուտը, կեղծը, անհաւատաբն՝ ճշմարտի տեղ մատակարարել: Այդ զրքի յօրինուածքի մէջ՝ այնքան չի պիտի զարմանալ հեղինակի տգիտութեան վրայ, որքան նրա անպատկառ յանդնութեան վրայ, որով նա վստահութիւն է ունեցել կարծելու, թէ իւր աններելի վարմունքը գաղտնի կը մնայ “Գաղտնիքուր մէջ: — Մի այլ աւելի յարմար անուն հազիւթէ կարելի էր գտնել...

10. Այդ բողոքից յետոյ, “Գաղտնիքուր վարագոյրի ետեւում ծածկուած հեղինակին մնում է, իբրեւ կրօնաւորի, իբրեւ կրօնուասցի, իբրեւ ճշմարտութեան եւ բարյականութեան քարոզչի, ձեռքը դնել սրտին, երեսը դարձնել դէպի ընթերցող հասարակութիւնը եւ, “հրաժարիմք ի խարեւութենէ,, ասել, եւ իւր հայոց գրականութեան ասպարիզում նետած գայթակղութեան քարը մէջտեղից վերցնել...



## ՐԱՓԹԻՒ

### ՎԱՃԱՌԵԼՔ ԳՐԱՎԵՐՆԵՐ

1.	“ՍԱՄՈՒԵԼ, Հար. Ա. Բ. եւ Գ. մի գրքի բուրկի շինուածքուածքուածք, Բ. տպագրութիւն . . .	3.50	8
2.	“ՎԵՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ, Հար. Ա. (սակաւ.) . . . . .	2.—	4½
3.	“ՎԵՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ, Հար. Բ. (սակաւ.) . . . . .	2.—	4½
4.	“ԶԱՀՐՈՒՄԱՐ, Վէպ . . . . .	2.—	4½
5.	“ԿԱՅԻՆԻ ԿՏԱԿԸ, Թարգ. (սակաւ.) . . .	1.20	2½
6.	“ՈՍԿԻ ԱՔԱՂԱՋԸ, Բ. տպագր. . . . .	1.—	3
7.	“ԴԱՏԻԹ-ԲԵԿ, Հար. Ա. Բ. եւ Գ. վերջաբանով, Գ. տպագր. . . . .	3.50	8
8.	“ԿԱՅԾԵՐ, Հար. Ա., Գ. տպագր. . . . .	2.—	5
9.	“ԿԱՅԾԵՐ, Հար. Բ. եւ վերջ, Բ. տպ. . . . .	3.—	7
10.	“ԽԵՆԹԸ, Եւ “ԶԱԼԱՎԵԴԻՒՆ, մի գրքի մէջ ամփոփուած, Գ. տպագր. . . . .	2.—	5
11.	“ԽԵՆԹԸ, ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ, Ա. Բ. Գ. եւ Գ. Հար. մի գրքի մէջ ամփոփուած Գ. տպագր. . . . .	2.—	5
12.	“ԽԱՄԱՅՆԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆԵՐԸ, ՀԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԵՏԸ, . . . . .	2.—	5
	“ԳԱՂՏՆԻՔ ՀԱՐԱԲԱՂԻ, . . . . .		

Հրատ. ԱՅՐԻ ԱՆՆԱ ՐԱՓԹԻ

Յանկացողները պիտի գիմեն՝

Mme. Raffi

32, Richmond Gardens, Shepherd's Bush, London, W. (England).

Որուաստանից մեծ քանակութեամբ պահանջողներն պիտի գիմեն՝  
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՐՑ ՎԻԵՆՆԱ, VII. Mechitharistengasse 4.  
45\*

Լ Ո Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

**ՐԱՓԹԻՒՄԱՅԻՑ ՅԵՏՈՅ**

ՄԵՐ ՀՐԱՏԱՐՈՎՈՒԹԵՐԻ

ՊՐԵՐԵ

1.	"ՀԱՅ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ," (սպառուած)	—.—
2.	"ԽԵՆԹԸ, ԵՒ "ԶԱԼԱԼԻԴԴԻՆ, մի գրքի մէջ ամ- փոփուած, Բ. տպագր. (սպառուած)	—.—
3.	"ԴԱՏԻԹ-ԲԷԿ, ՀՄՐ. Ա. Բ. Եւ Գ. ՎԵՐՋԱԲԱՆՈՒ,	
	Բ. տպագր. (սպառուած)	—.—
4.	"ՄԻՆՆ ԱՅՍՊԵՍ, ՄԻՒՄՆ ԱՅՆՊԵՍ, պատկերա- զարդ վէպ (սպառուած)	—.—
5.	"ԿԱՅԺԵՐԻ, Ա. ՀՄՐ. Բ. տպագր. (սպառուած)	—.—
6.	"ԿԱՅԺԵՐԻ ՎԵՐՁԸ, (սպառուած)	—.—
7.	"ՎԵՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ, ՀՄՐ. Ա. (սակաւ.)	2.—
8.	"ՎԵՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ, ՀՄՐ. Բ. (սակաւ.)	2.—
9.	"ԱՐԺԻԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ, (սպառուած)	—.—
10.	"ԽԱՄՍԱՑԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Բ. տպագր. (սպառուած)	—.—
11.	"ՊԱՐՈՅՐ ՀԱՅԱՀՆ, (սպառուած)	—.—
12.	"ՈՎ ԷՐ ՄԵՎԱՏՈՐ, (սպառուած)	—.—
13.	"ՔՐԻԴՈՎԻՆ, թարգ. (սպառուած)	—.—
14.	"ԶԱՀՐՈՒՄԱՐ, վէպ.	2.—
15.	"ՏԱՃԱԿԱՑՔ, (սպառուած)	—.—
16.	"ԽԱՅԱԳՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ, Ա., Բ., Գ. Եւ Դ. մաս Բ. տպագր.	—.—
17.	"ՈՍԿԻ ԱԲԱՂԱՂԸ, Բ. տպագր.	1.—
18.	"ՍԱՄՈՒԷԼ, ՀՄՐ. Ա., Բ. Եւ Գ., ՀՄՐ. Բ. տպագր.	3.50

19.	"ԴԱՏԻԹ-ԲԷԿ, ՀՄՐ. Ա., Բ. Եւ Գ. ՎԵՐՋԱԲԱՆՈՒ, Գ. տպագր.	3.50
20.	"ԿԱՅԺԵՐԻ, Ա. ՀՄՐ. Գ. տպագր.	2.—
21.	"ԿԱՅԺԵՐԻ, Բ. ՀՄՐ. Եւ ՎԵՐՋ, Բ. տպագր.	3.—
22.	"ԽԵՆԹԸ, Եւ "ԶԱԼԱԼԻԴԴԻՆ, Գ. տպագր.	2.—
23.	"ԶԱԼԱԼԻԴԴԻՆ, առանձին, Գ. տպագր.	—.50
24.	"ԽԱՅԱԳՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ Ա. Բ. Գ. Եւ Գ. մաս Գ. տպագր.	2—
25.	"ԽԱՄՍԱՑԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ, "ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԻՏԸ, . . . "ԳԱՂՏՆԵՐԻ ՂԱՐԱԲԱՂԻ, . . .	2.—


ՀՐԱՄԱՐԱԿՈՒՏԻՇԻ ԱՅՐԻ ԱՆՆԱ ԲԱՖՖԻ

ՀԵՑԶ ՀԵՑԻ ԼՈՅՈ ՊԻՏԻ ՏԵՍՆԵՆ

**ՔԱՓՓՈՒ**

1.	"ՍԱԼԲԻ," Ա. Բ. Եւ Գ. մեծագիր հատորներ (անտիպ):	
2.	"ՀԱՅ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ,: 3.	"ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ, (Տաճկահյոք) (տպուած Եւ անտիպ):
4.	"ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅԻԿԻ, (Ըրծիւ վասպուրականի):	
5.	"ՎԵՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ, ՀՄՐ. Գ. (տպուած Եւ անտիպ):	
6.	"ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, (տպուած Եւ անտիպ):	
7.	"ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ, (տպուած Եւ անտիպ):	
8.	"ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ, (տպուած Եւ անտիպ):	
9.	"ՔՆՍԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ, (տպուած Եւ անտիպ):	
10.	"ԿԱՄԱԿԱՆԵՐ, (անտիպ):	
11.	"ՄԻՆՆ ԱՅՍՊԵՍ Եւ ՄԻՒՄՆ ԱՅՆՊԵՍ, :	
12.	"ԿԱՅԷՆԻ ԿՏԱԿԸ, (թարգ.).	
13.	"ԸԶԳԱՅՑԻ ՀԱՄԱՊՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Հայկից մինչեւ լեռն Զ:	
14.	"ԸՆԴՀԱՅՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Եւայլն, Եւայլն:	





Գրու

ԱՅ 1  
ՏՄ 2



59215